

Գիրքը յուսադատճեհահանվել է  
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

Library

ՄԱՅՑՈՒՄ ԿԱՐՆԱԿԱՆ ԵՄ ԶԵՐ ԼՈՐՄԻՆՈՒՄ ԸՆԴՈՒՄ ԸՅՅԱՅԱՍ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ  
ԼՈՒՄԻՆՈՍԿԵԼԱՆՈՒՄԵՆԻ ԳՐԵՐ:

ՔՐՈՑՆԻ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆԸՄԱՆՈՒՄԸ ԿԱՐՆԱԿԱՆ  
ԻՄՈՒՄ "ՇԱՄԱԸՅՔԱՎԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՑՔԻՑ

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԵՆԴՐՈՒՄ ԵՎ ՈՐԳԱՆՈՒՄ ԵՄ ՄՏԵՐ ԿՈՑՔԻՑ  
ՏՆՎԱԿՈՒՄ ԵՎ ԶՈՒՆԻ ԸՆԹԵՏՈՒՆԻՑՈՒՄ:



ԳՐԵՐ ՄԻՑ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

Հասնիկ

Հարոտ

1 -

**Հասնիկ  
Մացակյան**

**ԿՎՐՈՏ**

**(Քանաստեղծություններ  
և  
դատմվածքներ)**

**Երեւան  
Հեղինակային հրատարակչություն  
2006**





ՀՏԴ 891. 981-8 ՄԱՑԱԿՅԱՆ  
ԳՄԴ 84Հ  
Մ 404

Մացակյան Հասմիկ  
Մ 404 Կարոտ՝ Բանաստեղծություններ և պատմվածքներ  
Հասմիկ Մացակյան.- Եր : Հեղ հրատ ,2006-180 էջ



**Գրքիս հովանավորն են  
Նարինե և Սասուն Առաքելյանները**

Գրքիս վաճառքից գոյացած գումարը փոխանցելու  
են «Ռուզան» բարեգործական հասարակական  
կազմակերպության ֆոնդին

ISBN 99930-4-552-7

ԳՄԴ 84Հ7-5

© Հ Մացակյան 2006թ.





Հասնիկի երգի ծառը վաղուց է, ինչ շիվ ու շյուղ է տվել և այդ ծառի ամեն մի բարը կարոտի բոցավառում է. Նա ի մի բերելով տարիների ընթացքում ապրած իր հույզերի ճյուղ ու շյուղերը, կազմել է այս փոքրիկ ժողովածուն, որն էլ սիրով նվիրում է իր ընթերցող բարեկամներին.

Այս գրքույկն իր մեջ ունի ողբերգությունը, դժվարությունները, հիասթափությունները հաղթահարելու պատրաստակամության լիրիկական պատկեր Նրա սեղմ տողերի մեջ ծավալուն կարոտ կա իր ծննդավայրի, նրա հող ու քարի, նրա բնության ու մարդկանց մասին Սրտաբուխ են նրա հույզերն ու ապրումները Հայրենի երկրի հանդեպ սիրո և նվիրվածության զգացումով են գրված նրա ստեղծագործությունները Դա ցայտուն երևում է «Իմ Հայաստան» բանաստեղծության մեջ

Իմ Հայաստան, դու ծաղկում ես իմ սրտում

Սպասման ապրումների ամբողջություն է այս ժողովածուն: Ժողովածուում գերակշռում են կարոտի տխուր նվագները: Այստեղ կարոտի ու վշտի տրամադրությունը հարատևում է: Նրա տողերն աչքի են ընկնում ապրումների նրբությամբ, հույզերի հարստությամբ, որտեղ զգացմունքն ու միտքը, հույզն ու մտորումը երևան են գալիս միշտ անբաժան

Հասնիկի երգերը ընդգծվում են զգացմունքի անմիջականությամբ: Այդ երգերի հիմքում վառվում է ներքին կրակը: Այդ երգերը ծնվել են տառապանքի գնով, դրանք անձնական ցավերի ծնունդ են: Այդ երգերի տողերից ծորում ու ծորում է կարոտը, փոխվելով մելամաղձոտ երաժշտության: Ամեն անգամ նրա պատկերնե-

ըն շաղախված են նուրբ զգացումներով և պատկերված հոգու ջերմությամբ

Նրա երգերը սրտառուչ են հյուսված վասն հայրենյաց սիրո ու կարոտի զգացումներից

Հասմիկը կարոտում է, տխրում, սակայն մեկեն երջանկանում է պայծառ զգացողությամբ, որ շուտով, շատ շուտով կբացվի երջանկության արահետը և կսպասի իրեն:

Հասմիկի երգերը գեղեցիկ են ու բնական, որոնց մեջ գերակշռում են մանկության, մայրական, պանդխտության, կարոտի նվագներ: Նրա մի շարք բանաստեղծությունների քնարական հերոսը մայրն է տանջող կարոտի ու սպասումի զգացումներով.

Հասմիկը Մեծ Մայր է, թևի տակ հավաքած իր սիրասուն թռռնիկ-բալիկներին, մի իսկական մայր նվիրյալ Նրա տողերի մեջ իմաստ ու սրտի արյուն կա Դրանցում նկատվում են հայկական տառապանքի ցավագին նվագներ: Հայ գաղթականի ճակատագիրը բաժին է հասել նաև նրա պապերին ու սիրելի հորը

Գարուն լինե՛ր ամենուր,  
Չլինե՛ր երբեք մայրամուտ,  
Երգ ու ծիծաղ թող լինե՛ր,  
Խաղաղ լինե՛ր ամենուր,  
Երջանկություն թող լինե՛ր,  
Վիշտն ու ցավը մոռացվե՛ր

Հասմիկ Նա իրոք հասմիկ է գարնան ծնունդ, բացված մայիսյան զմրուխտ դաշտի միջին Նա հասմիկ է, մշտապես իր մայր գարունը տենչող, լավատես ու երագող.

*Ալինա Դավթյան*

## Հեղինակի կողմից

Ծնվել եմ 1943թ. մայիսի 12-ին Ղուկասյանում (այժմ Աշոցք): Խորությամբ զգացել եմ հայրենի բնաշխարհի արարիչ ուժը, իսկ երբ հասկացա ծննդավայր, հայրենիք հասկացողությունը զգացի նրա համն ու բույրը և աշխարհն ինձ համար հրաշք թվաց Ես սկսեցի իմ մտքերը հանձնել թղթին՝ Թե որքան է ինձ հաջողվել էական չէ: Ես երջանիկ եմ, որ հոգուցս բխած անկեղծ խոսքը հասնում է իմ պաշտելի հասցեատերին, դրանով ես բավարարված եմ:

**...Գրում եմ քեզ,  
Որ կարդաս միշտ,  
Դարձնեք անգիր,  
Ու հիշեք ընդմիշտ:**

Դաժան ճակատագրի բերումով հայերը բազմիցս ստիպված են եղել լքել իրենց ծննդավայրերը: Նրանց, ում բախտ է վիճակվել փրկվել թուրք բարբարոսներից, նոր օջախներ են ստեղծել տարբեր տեղերում: Նախնիներս գաղթել են Ալաշկերտից՝ Տատիկա պատմում էր, որ դրախտային վայր է եղել Ալաշկերտը. Մինչև 1885թ. ապրել են խաղաղ թուրք հարևանների հետ, որից հետո թուրքերն իրենց ծրագիրն են ունեցել. Եվ

ահա մի օր թուրք հարևանը կանչում է նախապապիս և ասում, որ հայերին որոշել են կոտորել, քանի շուտ է հեռացեք: Նախապապս լսելով այս լուրը զարմանում է, բայց հավատում, քանի որ թուրքերը փակել էին հայերին պատկանող բոլոր դուքանները, արհեստանոցները, այն ամենը, ինչ պատկանում էր հայերին: Լսելով այդ ամենը Մացակ պապը գալիս է տուն, հայտնում այդ չարաբաստիկ լուրը տղամարդկանց, մեծամեծներին Առաջարկում է փախչել գիշերով: Ոմանք չեն հավատում, իսկ նրանք, ովքեր հավատում են գիշերով լծում են սայլերը եւ փախչում դեպի Արեւելյան Հայաստան.

Նախապապիս խումբը, որ բաղկացած է լինում իր բարեկամներից և մոտ հարևաններից, մեծ դժվարություններ հաղթահարելով հասնում են Բայթար գյուղ Հանգիստ առնելով, նրանք զննում են տեղանքը Նախապապս շարունակում է ճանապարհը Բանդիվանով, Ղալբուլաղով դեպի Ղզլղոչ (այժմ Աշոտցք), տեղանքը նմանեցրել են իրենց տան շրջակայքին. Բարձունքի վրա եկեղեցի էր, ճանապարհին փոքրիկ գետակ, աղբյուրը քարի տակ, մեջը ձկներ, որոնց վրա խաչ է եղել Նրանք բնակություն են հաստատում Ղզլղոչում: Հիմնադիր Մացոն և Վարոսը, որոնք հորեղբոր թոռներ են եղել, սկսել են տուն շինել և զբաղվել իրենց հետ բերած անասուններով: Մինչև 1914-1915թթ այստեղ տեղի հայերի հետ ապրել են խաղաղ և լավ պայմաններում. Կարո և Անդո եղբայրները դուքան, ջրաղաց են դրել, որը հետագայում իմ պապն է դարձել (մորս հայրը Անդոն), իսկ նրանք մինչ այդ շատ մոտ են եղել Մացո նախապապիս հետ: 20 հոգուց բաղկացած այդ մեծ գերդաստանը ղեկավարում էր Մացո պապը և կինը, իսկ ընտանիքի

բոլոր անդամները գիտեին իրենց անելիքը, տղամարդիկ դաշտում են աշխատել, անասուն պահել, իսկ երեկոյան, երբ տուն են վերադարձել, նստել են հացի Տղամարդիկ մի կողմ, կանայք մի կողմ:

Տատս՝ փոքր հարսը լինելով, սկեսրայրի ոտքերն է լվացել: Մեր նախապապերն իրենց տոկունությամբ հաղթահարել են ամենաաղետալի արհավիրքները, շարունակել են կյանքը պահպանելով իրենց սովորույթները պատվասիրությամբ, հյուրասիրությամբ, աշխատասիրությամբ և բարոյականությամբ Չնայած բոլոր դժվարություններին, տատս մնացել է կանացի, խոնարհ, բարի, համբերատար և գեղեցիկ Եղել է ամոթխած, միշտ ամաչելով է նայել ամուսնուն: Երբ տղամարդիկ են ներս մտել, կանայք վեր են կացել տեղերից և տեղ տվել

Նախատատս դաժան կյանք է ունեցել, բայց միշտ ապրել է հայավարի, նամուսով և դա համարել է Աստծո կամքով մեծագույն երջանկություն Մենք հայերս, ամենադժվարին պահերին էլ չենք կորցրել մեզ, մեր հոգու արիությունը, հումորի, սրամտելու կարողությունը Տատս պատմում էր, որ 1915թ կրկին թուրքերը հանգիստ չեն թողել Արևմտյան Հայաստանը, նա պատմում էր մինչև իր կյանքի վերջը:

Թուրքերի հարձակվելու լուրը տարածվել էր ամբողջ գյուղում (Ղզլղոչ): Գյուղում գյուղացիները խուճապի էին մատնվել: Այդ ժամանակ տատիս մեծ տղան, որը դաշտում ոչխար էր արածեցնում, տեսնելով թուրքին լեղապատառ վազում է տուն և հենց թոնրի մոտ սիրտը ճաքում է: Հետապնդող ասկյարները մտնում են տուն, սպանում մի քանի դիմադրողների, մյուսներին գերի են վերցնում, հասցնում մինչև Ճճղլար գյուղ, մի մեծ մարա-

գում են լցնում: «Հաց ուտենք, նոր սրանց վառենք», - ասում են թուրքերը: Այդ լսելով Մացո պապը երթիկից դուրս է հանում երիտասարդ տղաներին, որոնց մեջ էր նաև հայրս. Վերջին գոհը չի հասցնում դուրս գալ երթիկից, դուռը բացում են և խփում: Փախչողները հինգն էին, որոնք թաքնվում են քարափների տակ: Նրանք տեսնում են, թե ինչպես են կրակի բոցերը լափում հարյուրավոր մարդկանց կյանք: Եվ նրանք այն թուրքերն են եղել, որ տարիներով աղ ու հաց են կիսել հայերի հետ. Մեր գերդաստանից փրկվում են ութ հոգի: Երբ հրաման են ստանում դադարեցնել կոտորածը, տատս պատմում է, որ հայերի կոտորածը լսելով իր ամուսնու եղբայրը գալիս է Ամերիկայից. Այս ամենը տեսնելով իր աչքով, մեծ վիշտ է ապրում, հանկարծ տեսնում է դեպի իրեն են գալիս երկու թուրք ձիավոր, հարցնում են նրա ով լինելը. Նա ասում էր իր և հոր անունը, թուրքերը խորամանկում են և ցույց են տալիս, թե ճանաչեցին, ձիուց իջնում են ցած, հարգալից բարևում, հետո անմեղանում, թե իբր այս ամենից տեղյակ չեն եղել և ցավակցում են Սուրը մոտենալով ջրին, ուզում է ջուր խմի, այդ ժամանակ ասկյարները հարձակվում են նրա վրա՝ կտրում գլուխը, վերցնում են հրաշք ձին և հեռանում. Շուտով լուրը հասնում է գյուղ, երբ դիակը տուն են բերում, կինը Էսթերը, խելագարվում է: Ողջ գյուղն է սգում Սուսի համար և մինչ օրս պատմում են այդ ցավալի դեպքի մասին: Մայրս պատմում է, որ երբ թուրքերը հարձակվել են գյուղի վրա, ինքը ութ տարեկան է եղել: Երկու եղբայրներին կապելով, ուզեցել են տանել իրենց հետ, այնքան գեղեցիկ երիտասարդներ են եղել, որ ասկյարը հրամայել է ձեռք չտալ, իսկ հարսին, որն այնքան գեղեցիկ էր, փաթաթվել

է սյանը, թուրքերը քաշել, ծեծել են, բայց չեն կարողացել տանել, կրակել են նրա վրա ու հեռացել. Հիմա էլ Ղզղոչում, եկեղեցու մոտ, երկու սև քար կա մորս եղբայրներն են այնտեղ թաղված Տատս ապրել է հորս մոտ: Նա այնքան շնորհքով ու խելացի կին է եղել, որ երբեք փեսայի տան մեջ լաց չի եղել, գնացել է տղաների գերեզմանին ու այնտեղ լացել.

Մինչև 1941թ. Հայրենական մեծ պատերազմի ժամանակ տատս յոթ թոռով սեղան է նստել, պատերազմում զոհվել է հորեղբայրս՝ Իսահակը, որ շատ գրագետ ու խելացի մարդ է եղել, զոհվել է Կերչում. Այժմ Մացակյանների տոհմը բազմացել և դարձել է 90 հոգի, իրոք, որ հայրը չի ընկճվում, ծիլեր է տալիս և բազմանում:

1



# ပုလဲအစားအသုံးပြုမှု



—

## ՄԵՐ ՊԱՊԵՐԸ

Մեր պապերը գաղթել են,  
Նրանք մահին հաղթել են,  
Զրկվել են մայր հողից,  
Տառապել են տանջալից:  
Հոգիները թողնելով,  
Ալաշկերտի դաշտերում:  
Ես ծնվել եմ զովաշունչ  
Գուկասյանում՝ ծաղկազարդ,  
Ուր ծաղկունք է բուրավետ  
Հազար գույնի երանգի:  
Ալաշկերտը կորցրել  
Նմանություն է գտել  
Գուկասյանի ջուրն է գերել  
Մեր պապերն են հիացել:

## ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ Հայաստան, դու ծաղկում ես իմ սրտում,  
Քո բարձրաբերձ լեռներն են քեզ նայում,  
Որպես պաշտպան առյուծի են նմանվում,  
Ոչ մի շանթ կայել չի համարձակվում,  
Քո երակներում ժողովրդի արյունն է միշտ հոսում.

Երիտասարդ, մեծ ուժ ունես թիկունքում,  
Որոնք իրար միաձուլվում ու փարվում,  
Մահմաններում ամուր պատնեշ են դառնում:  
Տոկուն է քո ժողովուրդը, դարերից է մնացել,  
Քո ջինջ հոգում երգերդ է շատացել,  
Ժողովուրդը աշուղ դարձած քեզ համար է երգ երգել,  
Իսկ հեովից էլ Մասիս սարն է ժպտացել.

1



## ՅԱՅՐ ԻՄ ՍԻՐԵԼԻ

Դու չկաս հիմա, հայր իմ սիրելի,  
Ու հիմա դատարկ է տունը մեր լի,  
Որ այդքան ջերմ սիրում էիր մեզ,  
Յոթը որդով բազմում սեղանին լի,  
Բարի, հոգատար, հայրիկ սիրելի  
Հիմա մենք միշտ քեզ ենք հիշում,  
Քո քաղցր ձայնը լսում ու տխրում,  
Ու խրատներով առաջ շարժվում,  
Որք էիր մնացել, եղեռնից փրկվել,  
Քույր, եղբայր կորցրել ու տառապել,  
Երբ հիշում էիր անցած օրերը,  
Թաքցնում էիր մեզանից քո արցունքները



## ՅԻՆ ՄԱՏՈՒՌ

Լալի սարի գլխին քանդված  
Մի մատուռ կա քանդված,  
Ծաղիկների մեջ կորած,  
Քարերն են կանաչած:  
Գյուղամիջին եկեղեցի,  
Եկեղեցու կողքին թաղված  
Երկու եղբայր մոռացված  
Վաղինակ, Բագրատ սիրահարված,  
Ու մուրազին չհասած.



## ԳԱՐՈՒՆ ԼԻՆԵՐ

Գարուն լինեք ամենուր,  
Չլինե՞ք երբեք մայրամուտ,  
Երգ ու ծիծաղ թող լինեք,  
Խաղաղ լինեք ամենուր,  
Երջանկություն թող լինեք,  
Վիշտն ու ցավը մոռացվեք.



## ՎԱՐԴԱՎԱՌ

Տառս ամեն Վարդավառի  
Կարմիր գաթա էր թխում,  
Երեխեքի ձեռքը բռնում,  
Մեր մատուռն էր բարձրանում  
Հավաքվում էին հարս ու աղջիկ,  
Ուրախ շուրջպար էին բռնում,  
Աղաս պապի ձայնն էր թնդում,  
Հարութը գուռնան էր զլում  
Երգի ձայնն էր շուրջը բռնում,  
Պար էին գալիս բոլորը,  
Ի՛նչ հարս, աղջիկ, տղա ջահել  
Մեր գյուղին էր շատ վայել:  
Գեղեցկատես ու ժպտերես,  
Կապույտ աչքեր, շեկ վարսեր,  
Ինչ ջահել կա մեր գյուղում,  
Տառս էր ուրախ մանկանում





## ԾՆՈՒՆԴՍ

Իմ ծննդյան օրը տաք  
Մայիսյան կանաչ ծաղկունք,  
Հազար գույնի ծաղիկներ  
Անուշ բուրմունք են բերել.  
Ծաղկի անուն են դրել,  
Տատս ուրախ ժպտացել,  
Կրծքին սեղմել ու սիրել,  
Գովասանքի արժանացրել  
Այ քեզ զարմանք ու հրաշք,  
Աչքերն են հազար երանգ,  
Ծաղիկ-ծաղիկ են երգել,  
Ինձանով են հիացել.



## ԻՄ ՄԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Իմ մանկությունը շատ հեռու մնաց,  
Մեր գյուղը մնաց իմ մանկությունը,  
Տարիների հետ հալվեց ու գնաց  
Մանուկ օրերիս անհոգությունը  
Հիմա, որ արդեն տարիք եմ առել,  
Հաճախ եմ հիշում իմ մանկությունը,  
Հայրենի լեռ, դաշտ ձեր գիրկն եմ գալիս,  
Նորից վերապրեմ իմ մանկությունը՝  
Իմ ընկերները խելացի, բարի  
Որ հուշ է եղել՝ նրանց կորցրի,  
Ի՞նչ մաքրություն ու մտերմություն,  
Ինչ լավ երազ էր իմ մանկությունը.  
Մի կտոր հացը իրար հետ կիսել,  
Մեկս մեկովս ենք հիացել,  
Տխրությամբ՝ տխրել, լավով հրճվել,  
Մտերիմի պես՝ իրար շատ սիրել



## ԻՄ ԳՅՈՒՂԸ

Իմ Աշոցքը հասակ առել, մեծացել,  
Ծաղիկներով ու ջրերով հովվեկներն են հիացել,  
Աղաս պապի ձայնով են հիացել,  
Ջահելների երգ-պարով հիացել  
Հիմա դառարկ է մեր գյուղը,  
Ջահելները հեռացել են, գնացել  
Այցելեցի ես մեր գյուղը,  
Ցավով լցվեց, ա՛խ իմ սիրտը,  
Մեր տան դռան մեծ փականքը,  
Սիրտս այրեց դառը ցավը:



## ԵՐԿՐԱՇԱՐԺ

Շիրակ քաղաք աննման,  
Ինչպե՞ս տանեն վիշտդ նման,  
Մեկը չկա բուժի վերքդ,  
Ինչպես քանդվեց շեն օջախդ  
Ֆայտոն չկա, Գյումրին չկա,  
Ֆայտոն կլինի՝ Ալեքը չկա՝  
Որբացել է մեր հայ ազգը,  
Աշխարհն է լալիս մեր այս ցավը:  
Քանդվեցիր դու մեր Շիրակ,  
Ասող-խոսող, ուտող-խմող,  
Մեր հույս ու լույս, մեր լավ եղբայր,  
Սիրտդ կուլար, մեր լավ քաղաք  
Աղաչում են ես հայ կանանց,  
Ո՛վ լավ հարսներ հայոց,  
Մի տարի անց մի-մի Շիրակ  
Բարուր արած մտնեն բարակ



## ԵՐԿՐԱՇԱՐԺ

Ով տառապանք, ցավ իմ կրծքիս,  
Ի՞նչ սուգ պատեց հայոց աշխարհիս,  
Քանդվեց քաղաքներ, կորցրի հարազատներիս,  
Աշխարհն է լալիս վիշտը հայերիս  
Սուգը հայերիս Մասիսն էր զգում,  
Սառը շալ գլխին զգում ու լռում,  
Որ սուգ է պատելու հայոց աշխարհիս,  
Իմ ողբերգական դարդոտ հայերիս



## ԴԻՍԱՑԵՐ ՅԱՅԵՐ

1989թ

Կյանքը կարճ է, իմացեք,  
Նեղ օրերին դիմացեք,  
Ուրախ պահեք առավել,  
Շատ ցավեր եք դուք տարել.  
Թող թշնամին իմանա  
Հայը կա ու միշտ կմնա,  
Անգամ՝ հետք էլ չի մնա,  
Տառապանքից առաջվա:  
Հայը նեղ օրերին կդիմանա,  
Ցավ ու դավը կգնա,  
Վատ օրերը, տառապանքը կգնա,  
Աստված մեր մեծ սրտով մեզ կտա:



## ՍԱՌԸ ԲՆԵՐ

Վախից չվում են սառը բներից,  
Ցրտել է, քանդվել հայերիս տունը.  
Հիմա որտե՞ղ են շինելու նորը,  
Ու նորից հիշեն առաջվա տունը  
Երբ քանդվեց գեղեցիկ Անին,  
Հայերի տունը դարձավ ավերակ,  
Այն օրից դարձան պանդուխտ ու մոլոր,  
Ապրում են տխուր, աշխարհի բոլոր:



## ԳՈՅԱՐ ԱՆԳԻՆ

Իմ բուժքույր Գռիար անգին,  
Փրկեցիր դու շատ-շատերին,  
Անձնականդ դու մոռացար,  
Երբ քաղաքդ քանդված տեսար  
Ո՞նց մոռանանք արհավիրքը,  
Դաժան է միշտ հայի բախտը,  
Հայի խիճողը կարճ է եղել,  
Բաժակը միշտ դառն է եղել.  
Տունդ քանդված, վախը սրտիդ  
Չհեռացար դու քաղաքից:  
Այդ օրերին կյանքիդ գնով  
Վիրավոր էիր բուժում հույսով  
Քանի-քանի սառած ձեռքեր,  
Խաչել ես դու ու ա՛խ քաշել,  
Զգացել ես, որ կյանք չկա,  
Կյանքը դաժան է թվացել:





## ԱՐԱՐԱՏԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Կանգնած եմ անձայն քո քարի կողքին,  
Նայում եմ ես լուռ ու արցունք թափում,  
Արցունքս թափվում քո քարի վրա,  
Իմ անդարձ եղբայր, Արարատ իմ սար.  
Երանի երազ լինե՞ր քո մահը,  
Վիշտը ծանր է, մթնեց երկինքը..  
Մայրդ ողբում է քո մեծ կորուստը,  
Աչքերը մթնեց, կորցրեց լույսը.  
Հայրդ ամեն տեղ փնտրում է քեզ,  
Տուն արի՛, որդիս, դու որդի ունես,  
Թող որ հայր ասի, անհայր չմնա,  
Սիրտս է արձակում տխուր մի հառաչ.  
Դաժան է մահը Աստված ու իմ խաչ,  
Գթացիր դու անմեղ երկու ձագուկին,  
Քո կորուստը մեզ համար դաժան,  
Մեր տանջող ցավը, մեզ հետ անբաժան.



## ՄԱՅՐՍ

Մայրս բարի խաժուժ ակ,  
Շեկ մազերով հրեշտակ,  
Համեստ կին ու բարի  
Մարդամոտ ու սիրելի,  
Նա սիրում է բոլորին:  
Առանց հացի չի ճամփում  
Օտար լինի, թե ծանոթ,  
Հարազատ է իր համար.  
Խոսում է ցածր ձայնով,  
Անում ենք իրեն սրտով,  
Շարժվում ենք իր ասածով,  
Գնում ենք իրեն ճամփով:  
Այս աշխարհում մեկն է մայրս,  
Արեւից էլ ջերմ է մայրս,  
Որ ասեմ գանձ է մայրս,  
Գանձից էլ թանկ է մայրս:



## ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՅԵՐԻՆ

Այսքան պարզ հոգի ինչո՞ւ դու տվիր,  
Ով Քրիստոս տեր, քժնող չծնիր,  
Այսքան մեծ խիղճ մեզ ներարկեցիր,  
Քո ծիլերդ այսպես տնկեցիր  
Ինչե՞ր ենք տեսնում մեր դաժան կյանքում,  
Կոտորած, արհավիրք, տեսնում, ընկճվում,  
Վառվում ենք ազգով ու նորից հառնում,  
Ծիլեր արձակում ու նորից աճում՝  
Չէր անցել սուգը փետրվարի,  
Վրա հասավ կոտորածը դեկտեմբերի,  
Նորից վերհիշենք 24-ը ապրիլի,  
Սրանից հետո ի՞նչ պիտի լինի



## ՄՈՐԱ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ահա մորս նամակը դրված սեղանին,  
Ու հիմա չկա մայրս թանկագին,  
Նայում եմ գրված թանկագին տողեր,  
Աչքերս են լցվում, նամակն է վերջին.  
Այնքան կարոտով հեռվից է գրում,  
Բոլորիս հերթով կարոտն է հայտնում,  
Եվ խնդրում է՝ ուզում եմ տեսնեմ,  
Ու հանգիստ խղճով իմ հողում մեռնեմ՝  
Եկեք, շուտ տարեք ինձ, անպայման,  
Հանկարծ չլինեմ օտար գերեզման,  
Ես ունեմ փափագ տեսնեմ բոլորիդ  
Միրտս է այրվում կարոտից:  
Կարդում եմ նամակը, մորս բառերը,  
Ա՛խ մայր իմ դու սուրբ հրեշտակ,  
Ու հասնում եմք մորս:  
Եվ մայրս առավ կարոտն իր վերջին,  
Ասաց. ես գոհ եմ իմ զավակներից,  
Ու հանգիստ ավանդեց հոգին  
Իր օջախի մեջ՝ հայրենի հողում.

## ԴՌԻ ԳՆՈՒՄ ԵՍ

Դու իմ աղջիկ, գանձ ես եղել ինձ համար,  
Իմ սիրելի, սրտիս մասնիկ աննման,  
Երբեք ոչ մի ցավ չես թողել իմ սրտում,  
Ժպտում ես դու, տխրությունդ թաքցնում.  
Իմ սիրելի, իմ կյանք, արեւ, ուրախ օր,  
Գնա բարով, Աստված օրհնի քո ճամփեն,  
Սարի ծաղիկ, նարգիզ ու վարդ աննման  
Թող սփռվի կյանքիդ ճամփան անխափան  
Աստված քեզ հետ, կտեսնվենք մենք կրկին  
Ծեր աչքերով իմ խամրած, կգրկենք քեզ համբուրեն,  
Հույսով գնաս, փառքի հասնես ես տեսնեն  
Դու գնում ես, ես լալիս եմ քեզ համար,  
Արցունքներս փարոս դառնան քեզ համար,  
Գնա, հասիր քո տղային մինուճար  
Իմացիր, որ ես օրհնում եմ քեզ համար՝



## ՍԵՐՈՒԹՅՈՒՆ

Ջահել ճյուղեր, քանու թևով,  
Օրորվում են շշուկով,  
Խփում իրար ու փսփսում,  
Անուշ ձայներ են հանում:  
Արևը գոհ մեղմ ժպտում է,  
Բերք ու բարիք հասցնում,  
Արևահամ դարձնում,  
Աշնան վերջին սպասում:  
Ծառի վրա մի չոր ճյուղ կա,  
Ոչ շարժվում է, ոչ շփվում,  
Ընկնելուն է նա սպասում,  
Ու օրերն է նա հաշվում  
Իրականում մարդն է ասես ծերացած,  
Ընտանիքում՝ ջահելների հովանու տակ նստոտած,  
Եվ սպասում է շատ ձանձրացած  
Հրաժեշտ տա օրերին անցած՝  
Ջահել օրվան շատ երազով  
Մտածում է շատ ցավով,  
Ինչպես շատ շուտ օրը մթնեց,  
Կիսատ գործեր դեռ մնաց:

## ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ՉՆՈՒՄ

Ինչո՞ւ եմ գնում հայրենի հողից,  
Վախենո՞ւմ եմ երկրաշարժից, պատերազմից,  
Կամ վատ ապրելու պայմաններից,  
Թողնում եմ, հեռանում հայրենիքից:  
Ուրիշ տեղ դու մայր չունես,  
Մորդ կկորցնես,  
Ուրիշ տեղ դու հարազատ չունես,  
Հարազատներ կփնտրես.  
Մի գնա իմ սրտի մասնիկ,  
Միրոս առանց քեզ չի ապրի,  
Հետ արի, իմ կյանքի իմաստ  
Ափերից դուրս մի արի:



## ՕՏԱՐ ԱՓԵՐՈՒՄ

Թողնում են Հայաստանը, հեռանում,  
Օտար ասիերում գերի են դառնում,  
Ու հեովից-հեռու կարոտ են քաշում,  
Կարոտի ցավը շուտ են հասկանում.  
Մրմունն ու լացն իրար է խառնվում,  
Ապտակի նման սիրտն է ծակում,  
Լացը խեղդում է կոկորդը հանկարծ,  
Հիշում է եղբոր աչքերը խամրած,  
Հոր ու մոր շիրիմը խոտով ծածկված.  
Հիշում է իր հայոց երկիրը,  
Որք երեխեքի տխուր հայացքը,  
Օտարի ձեռքին նայող ծեբերը  
Մնում են տխուր հայացքը հեռուն,  
Անձայն լալիս են ու ցույց չեն տալիս,  
Որ սերունդը սովորում է օտար լեզուն,  
Ու օտարի երգերն է երգում





## ՍԻՐԵԼԻ ՍԱԹԻԿԻՆ

Որքի բախտ է,  
Որքը միշտ որք է պահում,  
Դժվար օրով մեծացնում,  
Թևեր տալիս, թոցնում:  
Փախեփախի դաժան ճամփին  
Ծնողների կորցրած,  
Իսկ դու ծնված փոքրիկ գյուղում,  
Որք ու մոլոր մեծացած  
Սակայն կյանքը դաժան դառած  
Հետևում է քեզ անվերջ,  
Ու տանելով քո ամուսնուն  
Որբերիդ քեզ է թողնում



## ՕՁ ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻՆ

Ազգս միշտ էլ թալանվել է  
Թուրք ասկյարի ձեռքերով,  
Երկրաշարժն էլ ավիրել է  
Քանդ ու ավեր անելով.  
Անխիղճ բան է այս օրերին  
Հայի տունը թալանեն  
Կամ թե դաժան այս օրերին  
Հարբած մեքենա վարեն,  
Լսելով Ձեր հաղորդումը  
Անաչում ենք յուրովի  
Մի՞թե Աստված քիչ է քանդել,  
Դուք էլ փորձում եք ավերել  
Ուշքի եղեք, հայի որդիք  
Արցախ աշխարհը պաշտպանեք,  
Ամեն վատ բան դուք մոռացեք,  
Շուտ փրկության դուք հասեք



## ՓՈՔՐ ԴԱՎԻԹ

Բեկ Դավիթն եմ, իմացեք,  
Երկիր ենք թողել, գիտեցեք,  
Կայուն ենք ու խոսքի տերը,  
Վերցնենք մեր հողերը,  
Նախապնայիս նպատակը պիտի կատարեն  
Իզդիրում հարսանիքս կանեն



## ԻՄ ՓՈՔՐԻԿՆԵՐ

Իմ սիրասուն բալիկներ,  
Ժիր ու անմեղ ծաղիկներ,  
Կապուտաշյա հրեշտակներ,  
Սրտիս կցված մասնիկներ  
Գե, մոտ եկեք, ձեզ գրկեմ,  
Սիրոս ձեզ մոտ բաց անեմ,  
Ձեր արցունքը չտեսնեմ.  
Չեք հաշտվում առանց պապիկ,  
Սրբություն է ձեզ ձեր տատիկ,  
Դժգոհում եք իմ անուշիկ,  
Նվնվան ու լացկան բալիկ



## ՏՂԱՅԻՍ

Իմ տղայի ծաղկած ծառը  
Արմատները սրտիս մեջ,  
Ինչպես պոկեմ, ինչպես հանեմ  
Պտուղներին չդիպչեմ՝  
Ունի նա շատ բարի հոգի,  
Զգույշ եղեք, չփշրեք,  
Որ փշրվեց, էլ չի կպչի,  
Բյուրեղ սիրտը տղայիս:  
Հարգանք ունի ծնողներին,  
Սիրում է նա բոլորին,  
Լսեք նրա անկեղծ խոսքին,  
Սեր ու հարգանք վայելեք



## ԱՐԽ, ԵՐԱՆԻ

Հեովից-հեռու կարոտ քաշում  
Մայրիկ ջան չեմ դիմանում,  
Ա՛խ, երանի ես ձեզ տեսնեմ,  
Փարվեմ կրծքիդ, արտասվեմ  
Ասում են թե մայրը սուրբ է,  
Հայրը՝ պաշտպան, տիրական,  
Երկուսն էլ նվիրված են  
Չավակներին անպաշտպան  
Ավա՛ղ, ես գուրկ քնքշանքից,  
Աչքս արցունք՝ կարոտից,  
Արդյո՞ք կլինի գեթ մեկ անգամ  
Աչքս բացեմ, ձեզ տեսնեմ.  
Մայրե՛ր, հայրե՛ր, մի բաժանվեք,  
Բախտի հույսին մի թողեք,  
Տանջված սիրտը չի դիմանա,  
Կթառամի, իմացեք



## ԱՐՏՅՈՄԻՆ

Քո սև աչքերը թախծոտ ու տխուր  
Ժպտում են, բայց հայացքդ հեռվում,  
Քո հայացքի մեջ ես ամպ եմ տեսնում,  
Սիրտս լալիս է արցունք, մղկտում  
Հասկանդն ես դու ամեն ինչ, լուռ,  
Խորհուրդ հարցնում, իմաստալից ժպտում,  
Քո ձեռքերով ձեռքերս ես բռնում,  
Իմ ասածը լսում ես, հրճվում.  
Խորհուրդներս պահում ես մտքում,  
Գիտակցում ես ու լռելով հարմարվում,  
Դաժան դարի, չարիքի հետ հաշտվում,  
Ու քո կյանքը գիտակցելով շարունակում  
Դու կդառնաս խելացի ու բանիմաց,  
Սովորելով դու կունենաս լուսաբաց,  
Նայի՛ր, շուրջդ սև ուժեր են թաքնված,  
Քո բարությանք լավով կլինեն շրջապատված



## ՄԱՐԻԱՆԱՅԻՆ

Իմ աննման Մարիանա,  
Քեզանից լավը չկա,  
Դու հրաշք ես ու լավը,  
Թող որ տանեմ քո ցավը.  
Քայլում ես հպարտ-հպարտ,  
Չես վախենում, չես թախծում,  
Կյանքը թեթև ես տանում,  
Ցավը հանգիստ ես զգում:  
Դու իմ թռնիկ, անուշիկ,  
Իմ սիրունիկ, կլորիկ,  
Դու հրաշք ես փրկված,  
Կյանքի բովում թրծված.





## ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Կարոտով հասնում եմ հեռուն,  
Հասնում դաշտերին մեր գյուղի ծայրին,  
Նայում դաշտերին ծաղկած ու սիրուն,  
Սիրտս լցվում է, նորից մանկանում  
Մանկությունս այստեղ է անցել,  
Երգել, նվագել ու ուրախացել,  
Ծաղիկ եմ քաղել, պսակ եմ հյուսել,  
Գլխիս եմ դրել ու երջանկացել  
Իմ ընկերներին շատ եմ կարոտում,  
Անմեղ հայացքով նրանց եմ փնտրում,  
Կարոտում եմ, այնպես ծարավում,  
Ու մեր աղբյուրի ջուրն եմ երազում



## ՄԱՐԻԱՆԱ

Իմ սիրելիս, ի՞նչ ես փնտրում ու տխրում,  
Կամ գտնում ես ու կորցնում, արտասվում,  
Դեռ փոքր ես, սիրիի մորդ հարազատ,,  
Մայրը սուրբ է այդ իմացիի դու հաստատ  
Սիրիի եղբորդ թախծոտ աչքերը,  
Աշխատիի գտնել դրա պատճառը,  
Չէ՞ որ քույր ես բարի, հոգատար,  
Քո ասածն էլ լսում է հաստատ  
Փարվիի նրան ջերմ կարոտով, քույրաբար,  
Ասոված լինի Ձեր երկուսին պահապան.



## ՆԱՐԻՆԵ

Իմ աղջիկը կապուտաչյա, գրավիչ,  
Հոգու մասնիկ, ձայնը դուրեկան, թովիչ,  
Առանց վարդի պարտեզն ինչի՞ է նման,  
Առանց աղջիկ, մոր կյանքն ինչի՞ է նման.  
Երբ ներսում է, ծափ ու ծիծաղ է լսվում,  
Երբ դրսում է, անուշ բուրմունք է բուրում,  
Զվարճացնում է ու մտքերս փարատում,  
Ինքն էլ ամեն ցավի դիմանում  
Ծիծաղ ու խիճղ է աղջիկս,  
Աստժո կամոք ստեղծած,  
Երագում եմ բախտը գտնի,  
Ծիծաղը երբեք չպակասի



## ԿԱՐՈՏ

Հաճախ անքուն եմ մնում  
Քեզ հիշելով իմ անգին,  
Գիտեմ՝ դու էլ չես քնում,  
Հորդ, մորդ կարոտում:  
Տարիներն են ուշ անցնում,  
Սիրտս տնքում է, ցավում,  
Ա՛խ, երբ պիտի հանդիպենք  
Ու կարոտից խենթանանք:  
Կարոտի որդը կրծում է սիրտս,  
Քունս կորցրած, բաց են աչքերս,  
Անքուն աչքերից արցունք է հոսում,  
Երկար գիշերով ես քեզ եմ հիշում.



## ԱՆԳՈՒԹ ՍԱՅՐ

Երբ թռչունը կորցնում է իր ձագին  
Խփում է իրեն քարին ու թփին,  
Չայն է տալիս սարին, ձորին,  
Մինչև գտնում է իր ձագուկին.  
Մի՞թե մայր, դու գութ չունեիր,  
Չագուկներիդ լքեցիր,  
Ոչ ձայն տվիր, ոչ հիշեցիր,  
Խրախճանքի, ուրախության ձգտեցիր:  
Քեզ երբեք էլ մայր չի ծնել,  
Քեզ նման դաժան ու անսիրտ,  
Ոչ որ չի սպասում քո վերադարձին,  
Անամոթ է քո դեմքը, իմացի ը



## ՅՐԱՇՔ ԱՂՋԻԿ

### Միրելի Ելենային

Դու աղջիկ ես ծաղիկներից ստեղծված,  
Միրտո՛ղ գուլալ առվակներից է լցված,  
Շունչո՛ղ հովերից, հայոց լեռների,  
Հրաշք աղջիկ, մի գնա, մի հեռացիր.  
Քո սերունդը հայ է գեղանի,  
Աչուկներդ ծով են ծիրանի,  
Միսն ու Մասիսն է քո միտքը գերի,  
Հրաշք աղջիկ, մի գնա, մի հեռացիր:  
Օտարը չգիտի քո սիրտը, Սևանն է լի,  
Չգացմունքների նուրբ ու կարոտով լի,  
Քո աչքերը ժպտում են, բայց թախիծով լի,  
Քո կարոտը ամեն ծանոթ կքաշի



## ԻՄ ԴՈՒԿԱՍՅԱԼ

Իմ Դուկասյան, իմ լեռնաստան,  
Քո լեռներով հիանում եմ,  
Դու ինձ համար մի բուրաստան,  
Քեզանով ես լիանում եմ:  
Չուվում եմ ես հողիդ, ջրիդ,  
Քո սուրբ հողով պնդանում եմ,  
Ջուրդ եմ խմում, զովանում եմ,  
Քո հմայքից համբանում եմ



## ԻՍ ԲՈՒՅՐ ԴՈՆԱՐԱՅԻՆ

Սպասում եմ, շուտ արի,  
Մի ուշանա, շուտ արի,  
Դու մեծ քույրիկ, անուշիկ,  
Կյանքդ լինի երջանիկ:  
Քույրը մայր է, իմացիր,  
Ամեն ինչի դիմացիր,  
Ինձ երբեք մի մոռացիր.  
Դու հարավ ես, ես հյուսիս,  
Հեռու ենք մենք իրարից,  
Դու արև քեր հարավից,  
Ուրախացրու ինձ նորից:





## ՔԱՍՄԻԿԻ ԾՆՆԴՅԱԼ ՕՐԸ

1993.21.02

Քո ծննդյան օրն ենք հիշում,  
Անմոռաց է մեր սրտերում,  
Արմաշում կոիվներն էր սաստկանում,  
Հայի արյունն էր թափվում.  
Խախտվել էր անդորրը,  
Անհանգիստ էր մեր սրտերը,  
Դորդում էին արկերը,  
Մութ ու խավար էր շուրջը՝  
Սոված էինք ու սառը,  
Հացի հերթ էր խանութը,  
Բայց չէինք կտրում մեր հույսը,  
Քո ծնունդը բարի էր, նպատակին  
Մեր քաջարի տղաները հաղթեցին,  
Հաղթանակով վերադարձան, տուն մտան,  
Քո ծնունդն էլ ուրախ լինի հավիտյան.



## **ԿԱՐԵՆ ԴԵՍԻՐՃՅԱՆԻ, ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ**

Արև ծագեց հայոց լեռներից,  
Ուրախություն բերեց բոլորին,  
Դեմհրճյանն է կանգնած քարձունքին,  
Հայ ժողովուրդը նորից ցնձաց ժպտագին.  
Կարեն, Վազգեն միասնական մի դաշինք,  
Հույս պարզեց մեր տխրած սրտերում,  
Բայց քիչ տևեց ուրախությունը մեր բախտից,  
Կտրին ծառը, կյանքի թելը արմատից:  
Ջահելները ճամպուկ առան, գնացին,  
Խեղճ ծերերը անմխիթար մնացին,  
Սպասում են, որ դրսից օգնություն բերեն,  
Եկեք, հասեք Կարեն, Վազգեն, որտե՞ղ եք.  
Ծախեցին, սեփականաշնորհեցին պաշտոնյա այրերը,  
Թալանն ու կողոպուտը տիրեց մեր երկիրը,  
Մեր թոռներն էլ չեն մարի ձեր պարտքերը,  
Քանդեցին մեր երկիրը, ո՞վ է մեր տերը  
Անիծվի քո ցեղը Նաիրի Հունանյան,  
Որ քո ցեղով եղար դավաճան,  
Կտրեցիր երակը հայ ժողովրդի,  
Մնացել ենք անմխիթար, անպաշտպան.



## ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ

Դու ժողովրդի մոտ եկար նորից,  
Որ թշվառներիս վիշտը փարատես,  
Մարդ էիր դու մեծ, ծնված մեծ մորից,  
Եկար, որ մեղավորին դատես  
Եկար, բայց դավը նենգությամբ  
Պտղատու ծառը իր բնից հանեց,  
Ասես ցորենի դաշտերի վրա  
Անսպասելի սև կարկուտ թափեց  
Բայց թե չարիքը վերջ է ունենում,  
Դու կաս, կմնաս մեր տաք սրտերում



## ՉՄԵՌ Է

Չմեռ է դրսում, ձմեռ իմ հոգում,  
Հոգսերից հոգնած նստել եմ տրտում,  
Անցած օրերն եմ վերհիշում,  
Եվ մտքերի գիրկն եմ ընկնում  
Ջահել էինք ու չկար հոգսեր,  
Ուրախ էր անցնում մեր օրերը,  
Անհոգ էր մեր սրտերը:  
Հիմա արդեն ծերացել,  
Հարազատները հեռացել,  
Եթե ոմանք էլ հիշեն,  
Միջոց չունեն այցելեն



## ՎԵՐՋԻՆ ՉԱՆԳԸ 2004թ. ԱՐՏՅՈՍ

Վերջին զանգն է դողանջում  
Վերջին անգամ դպրոցում,  
«Մնաս բարով» ենք ասում,  
Տնօրենն է շատ հուզվում:  
Մնաս բարով, մեր դպրոց,  
Մեր լավ դպրոց, անմոռաց,  
Ընդունել ես գրկաբաց,  
Դարձրել ես բանիմաց.  
Վերջին զանգն է դողանջում  
Վերջին անգամ դպրոցում,  
Մտքով տարված հիանում,  
Հայացքներով հասկանում.  
Կյանք կմտնենք մենք շուտով,  
Կհիշենք Ձեզ շատ սիրով,  
Ուսուցիչներ սիրելի,  
Վերջին զանգին արժանի:  
Դասղեկն է մեր արտասվում,  
Արցունքներն է նա սրբում,  
Մոր հայացքով մեզ նայում,  
Այգաբաց է ցանկանում,  
Վերջին զանգն է դողանջում,  
Վերջին անգամ դպրոցում:

## ՄԱՅՐ ԻՍ

Մա յր իմ, վերջին զանգին  
Մտքով կանգնած ես իմ կողքին,  
Վերջին զանգի դողանջին  
Նայում եմ քո աչքերին:  
Քո կապույտ աչքերից արցունք է գնում,  
Ու երակներով իմ սիրտը մտնում,  
Քո մաղթանքը սրտիս մեջ պահում,  
Ու քեզանով եմ հպարտանում  
Մայրը սուրբ է, նուրբ ու հպարտ,  
Հոգին տալիս է որդուն հարազատ,  
Մոր սիրտը պարզ է, ջերմ ու հոգատար  
Երդվում եմ միշտ քո կողքին կլինեմ, մայր իմ միակ,  
Սրբիր արցունքդ, մայր իմ գեղանի,  
Որդի ունես դու քեզ շատ արժանի,  
Քեզ մոտ եմ գալիս գրկաբաց,  
Երջանիկ կլինես, եղիր համոզված



## ՎԱՄՅ ԻՆՁ

Վա՛յ ինձ, որ քեզ եմ դիմանում,  
Վա՛յ քեզ, որ ինձ ես դիմանում,  
Խոսում ենք ու վիճում,  
Ծիծաղում ու հաշտվում  
Դու ջահել ես, ես ահել,  
Շատ եմ հիմա զարմացել,  
Ի՛նչ բաներ են հնարել,  
Հայոց գրքում չի գրվել  
Հայի ամոթը, պատիվը,  
Ծածկած ու փակ հագնելը,  
Հիմա ուրիշ է կարգը,  
Նիստ ու կացը, ամենը:  
Վա՛յ ինձ, որ քեզ եմ դիմանում,  
Վա՛յ քեզ, որ ինձ ես դիմանում.





## ՆԵՐԻՐ ԻՄ ԲՈՒՅՐԻԿ

Ներիր իմ բույրիկ, թե բարկացած ես,  
Մանկական խաղ է եղել արածս,  
Ներիր, սիրելիս, գնում եմ ես,  
Սրբիր արցունքդ, սիրելիս՝  
Իմ սրտին մոտիկ, դու իմ հարազատ,  
Ասում եմ ես քեզ, իմացիր հաստատ,  
Երկար չի լինի իմ բաժանումը,  
Մի պղտորիր քո սիրտը:  
Հեռանալով քեզանից չեմ օտարանա,  
Առաջվա նման կմնամ, հավատա ,  
Եվ իմացիր հաստատ, ամեն նեղ պահին  
Ես կանգնած կլինեմ քո կողքին



## ՍԻՐԵԼԻ ԵՂԲԱՅՐ

Դու գրում ես թե գալու ես,  
Իմ սիրելի, իմ եղբայր,  
Կարոտում ես ու թախծում ես,  
Ու հղում ես ջերմ համբույր  
Հեռու-հեռվում դժվար է շատ,  
Դու իմ եղբայր հարազատ,  
Իմ աչքերի առաջ ես դու,  
Առաջվա պես անմոռաց  
Մեծացել ենք մենք անբաժան,  
Եղբայր ու քույր հարազատ,  
Որոշել էինք լինել ընդմիշտ  
Իրար կողքի, հոգատար:  
Բայց փոխվել է դարը հիմա,  
Հեռացել ենք, բաժանվել,  
Սպասում ենք ու շատ հուզվում,  
Իմ հարազատ, թանկագին:



## ՄՆԱՔ ԲԱՐՈՎ

Հրաժեշտ տվեցի հարազատներիս,  
Եվ որոշեցի, որ գնամ հաստատ,  
Օրհնեց ճանապարհս իմ մեծ մայրը,  
Գնում եմ հասնեմ իմ սպասող մորը:  
Արցունք է լալիս սիրտս տխրամած,  
Թողնում եմ առաջին սերս հուսահատ,  
Եվ հարազատներիս արցունքն աչքերիս,  
Առավոտ էր հրաժեշտ տվեցի բուրդին



## ՆԱՄԱԿ

Նամակ են գրում,  
Կարոտ են քաշում,  
Լալիս է սիրտս,  
Տխուր է միտքս:  
Չեզանից հեռու ես միտք են անում,  
Կարոտում են, մտածում  
Ինչո՞ւ են հասել օտարության,  
Մի՞թե դեռ երկար կմնամ:  
Երբ պիտի տուն դառնամ  
Օտար ասիերից հույսս կտրեմ,  
Մեր լավ օրերը հայրենիքում ապրենք,  
Մեր քիչ եղածը շատ գնահատենք:  
Ինչ որ անում ենք՝ տեղը կմնա,  
Ոչինչ չենք տանի, տեղը կմնա,  
Ինչո՞ւ կարոտ մնամ, վեր կենամ, գնամ,  
Իմ այստեղ մնալս ոչինչ չի փոխում:

## ՕՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Դատարկվում է Հայաստանը,  
Մթնշաղ է շուրջ բոլորը,  
Տուն-տեղ թողած հեռանում  
Անդարձ՝ գուցե օտարանում՝  
Երբ փակում են դռներն ամուր,  
Լացն է խեղդում ու մղկտում,  
Երեխեքն են անմեղ նայում,  
Չեն գիտակցում՝ ո՞ր են գնում  
Ա՛խ, ձեզ մատաղ, գնում եք դուք օս  
Բռնել եք դուք գաղթի ճամփան,  
Ճանապարհն է դժվար, դաժան,  
Կարոտը կայրի անսահման



**Արտյոն**

## ԿՈՐՅՐԱԾ ՍԵՐ

Դու թողեցիր, գնացիր,  
Սիրտս ներսից խոցեցիր,  
Փնտրում եմ ամենուր  
Քո աչքերը թախծոտ ու մութ.  
Սիրտս քեզ նվիրեցի,  
Երջանկության տրվեցի,  
Անմեղ էի, խաբվեցի,  
Արցունքներս թաքցրի:  
Սերս գողացան ու թողին տխուր,  
Փնտրում եմ, չեմ գտնում, իզուր,  
Սերը սուտ է, համոզվեցի ես լրիվ,  
Ով սիրում է, չի վայելում այդպես հեշտ  
Իմ սիրելին ծիտ դարձավ  
Ու մեկ ուրիշի գրկում բույն դրավ,  
Ու ես մոլոր, ման եմ գալիս դողալով,  
Ու չեմ գտնում, ապրում եմ մեծ հույսով:  
Չքացել է մաքուր սերը, իմացեք,  
Սուսան, Սեյրան, Լեյլի, Մեջնուն, ի՞նչ կասեք,  
Տխուր-տրտում մթնեց իմ կյանքը,  
Չեմ հավատում էլ ոչ մեկին, հեռացեք:



## ԻՍ ՈՐԴԻՆ

Որդի ունեն հարազատ,  
Կապրեն հաստատ ես այսուհետ,  
Ներդրթյուն են շատ տարել,  
Դժվար օրերով ապրել:  
Մեծանում է տղաս՝ շատ բարի,  
Հոգսերս կվերցնի, կպահի,  
Մոր միակ ճրագը լուսավոր,  
Հույսով սպասում է մայրը փառավոր.  
Տղան արդեն մեծացած,  
Հեռանում է համոզված,  
Որ աշխատի, տուն դնի,  
Մորն էլ հաստատ կտանի:  
Մայրն է սպասում կարոտով,  
Տղաս չի թողնի ինձ հույսով,  
Այսպես տխուր սպասումով  
Ասում է տղային լացով:  
Գոհացնում ես քո գործով,  
Տար ինձ տղաս, չեմ դիմանում,  
Քո կարոտից են տանջվում:  
Դու ի՞նչ ես ուզում ասել,  
Հույսդ ինձ վրա՞ ես դրել:  
Գոռում է տղան խենթի պես,  
Մայրս է շշնջում տղաս...  
Մայրը ասես խելագար  
Իրեն խփեց պատեպատ:  
Մղկտում էր, լաց լինում,  
Անցած օրերը վերհիշում,  
Մի՞թե տղաս ինձ մոռացավ,



Աշխարհը գլխիս անհրավ,  
Մի՞թե այսպես դաժան բախտս  
Անօգնական ինձ թողեց:  
Փակեց դուռը ու հին երգը  
Երգեց կամաց ու հիշեց,  
Տղային էր նա կանչում,  
Հիմա էլ է՛նա սիրում:  
Ու մտքումը գուրգուրում,  
Մի՞թե տղաս թերի թողեց  
Նպատակները բազում:  
Երազում էր թոռներ գրկել,  
Կրծքին սեղմել, գուրգուրել,  
Հպարտ մայրը թողեց տունը  
Ու բոլորին նա հայտնեց  
Որ իմ տղան շտապ կանչեց,  
Ու նա հպարտ քայլ արեց.

## ԱՇՈՒՆ

Աշուն՝ խոնավ, տխուր ու թաց,  
Ամպամած օր է ու խամրած,  
Պոկվում են տերևները ու ընկնում ցած,  
Իմ սիրտը լալիս է տխրամած  
Քայլում եմ ես թաց տերևների վրայով,  
Ու կամաց եմ դնում ոտքերս, ափսոսելով:  
Տերևները բողբոջում են խղճա մեզ,  
Չէ որ աշուն ես, կհասնես շուտով մեզ.  
Այդ քառերը լսում եմ կարծես,  
Ու սիրտս կծկվում է այնպես,  
Իմ ականջներում կրկնում են տերևները  
Մի՛ տրորի, մի՛ տրորի, անցորդ բարի:  
Ու շուտով տխուր տերևների վրայով  
Հասնում են մեր դռանը՝ մթնով,  
Աշուն, տխուր ու վրա հասնող մութ,  
Նման է վշտող տարեց մի մարդու:

## ՆՈՐ ՏԱՐԻ

Բարի նոր տարի, եկել ես կրկին,  
Չես մոռացել ոչ մեկին,  
Եկել ես կրկին՝ խինդ ու ծիծաղ բերելով,  
Բարի մտքերով, բերք ու բարիքով.  
Բայց երբ՝ մտնում ես, սեղաններ տեսնում,  
Նայում ես տխուր, չափ ու ձև անում,  
Քո բարի դեմքը մթնում է կարծես,  
Որ տարբերությունը անչափ է այնպես.  
Մեկի սեղանին խոճկոր, ուտեստներ պես-պես,  
Բանան, անանաս, ուտելիք պես-պես,  
Մեկն էլ նոր տարին պարտքով է անում,  
Սեղանին նստած լուռ միտք է անում,  
Ժպտում է տխուր, կենաց է խնում,  
Բայց մտքում պարտքի մասին մտածում,  
Թե ինչպես պիտի պարտքերը մարի  
Թող հաջողությունը մեզ ուղեկցի,  
Աքլորի տարի է, գուցե լավ լինի,  
Աստված տա, որ մեր սրտովը լինի,  
Բարի վերադարձ մեր խեղճ հայերին,  
Օտարության լուծը վերանա կրկին:



## ԲԱՐԻ ԶՈՒՅՐԻԿ

Դու իմ սիրուն, բարի քույրիկ,  
Քո տարիքում շատ գեղեցիկ,  
Ինչո՞ւ ես դու հիվանդացել,  
Սիրոս այսպես անհանգստացրել  
Կուզեի որ դու իմ փոքրը լինեիր,  
Գրկեի քեզ ու համբուրեի,  
Խաղայի քեզ հետ ու գրկեի,  
Տան շուրջ բոլոր պտտեցնեի  
Դու իմ անուշ, իմ լավ քույրիկ,  
Իմ տխրամած, բարի քույրիկ,  
Գիտեմ, որ դու ինձ համար  
Միշտ գարուն ես անմեղ, սիրուն  
Հիմա աշուն ես դու դարձել,  
Տխրում ես դու ու դառնացել  
Չավակների օտար երկիր,  
Մտքով տխուր, բազում մտքեր՝  
Երեք քույր ենք մենք շատ սիրով,  
Նայում են մեզ միշտ նախանձով,  
Շատ սիրով ենք ու ջիզարով,  
Ապրում ենք մենք մեկս մեկով



## ՓԱՓԱԳ

Ես էլ եմ շատ հայրենասեր,  
Շատ եմ սիրում Հայաստանս,  
Մի անկյունում գողտրիկ, տխուր,  
Իմ գյուղն է կանգնած ամուր.  
Շատ նպատակ ու երազանք,  
Չավակներն են երկրով մեկ,  
Սպասում է, որ հետ կգան,  
Բան ու գործ կարգավորեն.  
Խորն է ցավը, որ հարցնեն  
Կասեմ մերը սիրով պահեն,  
Հանկարծ շլինի, որ մոռացվեն,  
Մեր բարբառը հին հայերեն  
Մեր գյուղական բառով խոսեն,  
Ուրախացնեն, հոգսը հանեն,  
Դե շուտ եկեք, մի ուշացեք:  
Այդքան երկար մի մնացեք,  
Դե ձեզ մատաղ, շտապեցեք,  
Մեր գյուղն ու դաշտ մի մոռացեք,  
Հայոց լեզուն մի մոռացեք:



## ՉԵՍ ԿԱՐՈՂ

Ուզեցի ատել, մտքիցս հանել  
Չկարողացա ..  
Ուզեցի ճշալ ու հեռու գնալ  
Չկարողացա:  
Շատ խորն է թաղվել,  
Արմատ է տվել, ծաղիկ է դարձել  
Ու բույն է դրել  
Ուշ եմ իմացել:  
Հիմա չեմ կարող սրտիցս հանել,  
Հիմա գղջացի,  
Որ քեզ ասացի  
Թո՛ղ ինձ, հեռացի ր:  
Հեռվից էիր եկել ու շատ կարոտել,  
Խաբկանքներից դու լսեցիր,  
Սիրող սիրտս դու կոտրեցիր,  
Արմատախիլ դու արեցիր:  
Գե՛թ թող, հեռացի ր,  
Ու ինձ մոռացի ր,  
Ես էլ մոռանամ,  
Թողնեմ, հեռանամ.



## ԹԹԵՆՈՒ ԾԱՌ

Ծեր թթենին թող քեզ ասի,  
Խնդրանքներս թող պատմի,  
Եթե դու գաս, ես չլինեմ,  
Ասածներս քեզ հայտնի:  
Հեռու ես դու գնացել,  
Ու ինձ մոլոր ես թողել,  
Ես քեզ շատ եմ կարոտել,  
Օրերով եմ սպասել.  
Առավոտ շուտ վեր կենում,  
Ծեր թթենուն եմ խնդրում,  
Ու ասում եմ շուտ արի,  
Սիրոս շատ մի տանջի.



## ՀԱՅ ԱԶԳԸ ԲԱՐԻ

Բարի առավոտ, աննեղ ու արդար  
Իմ դժբախտ ազգս պահի, պահպանի,  
Ու Աստված թող տա, միշտ արև լինի,  
Բոլ է, որ ազգս լացի, տառապի  
Թող քամին քշի ու վիշտը տանի,  
Տանի անդունդը այնտեղ գլորի,  
Թող որ ծիլերը բողբոջի, ծաղկի,  
Կարկուտ չտեղա,  
Թող որ գորանա





## ԵՐԱԶ

Երագիս մեջ մայրս կանգնած,  
Ծով աչքերը շաղախված,  
Քույրս ծովում թևերը պարզած  
Կանչում էր հուսահատված:  
Մայրս ձայնեց.- Ի՞նչ ես կանգնել,  
Չեոքդ ձգիր, դուրս քաշիր,  
Եվ ես ձեռքս ձգեցի  
Ու քույրիկիս փրկեցի.  
Եվ արթնացա ես թափով,  
Հասա քրոջս կարոտով,  
Իմ արդար մորս ձայնով  
Իր հոգին է միշտ շրջում  
Երբ մեկս նեղն է լինում,  
Երագով է նա կանչում,  
Մորս երդում ենք տվել  
Իրար օգնության միշտ հասնել:

## ՄԵԾ ԸՆՏԱԼԻՔ

Հայրս նստում վերևում,  
Մայրս՝ անպայման իր կողքին,  
Յոթն էինք շատ սիրով,  
Նայում էին մեզ նախանձով.  
Իսկ մայրս հիացնունքով  
Ամենքիս մի բան ասելով  
Երգում էր գովեստով.  
-Իմ Ռաֆիկս խելոք է,  
Խելքի ծով է անուշս,  
Լսում է մեզ ու պաշտում  
Ծնողասեր զավակս.  
Իմ Լենցս՝ ժիր ու արի,  
Հոր թիկունքն է հիրավի,  
Ճարպիկ է ու բերի,  
Սիրտն է մեր տան բոլորի.  
Իսկ Գոհարս, տեր Աստված,  
Գրքերով է միշտ տարված,  
Չի խառնվում, չի խոսում,  
Գիտությամբ է զբաղվում:  
Հայրս է երգով ասում,  
Դո՛նարս է մոտ գնում,  
Փառանձեմ է, թագուհի,  
Աստված թող միշտ պահպանի.  
Մայրս է ասում՝  
Իսկ Հասմիկս կլորիկ,  
Կարմիր վարդ է անուշիկ,  
Սիրում ենք ու պաշտում  
Ոնց տան փոքր ու նուշիկ:

Սոսը որ կա, Սոս է իսկը,  
Մեծի խելք է գլուխը,  
Միշտ մածուն է նա ուտում,  
Մեծավարի խրատում,  
Ու բոլորին միշտ հասնում:  
Իմ Սուրիկը, պուճուրս,  
Վերջին պտուղս, շավիղս,  
Փշատ է նա շատ ուտում,  
Ոչ մեկին չի խանգարում:  
Այսպես ուրախ խինդ ու երգով,  
Հայրս է միշտ վերևում,  
Մայրս կողքին է թիկնում,  
Ու լավ բաներ խրատում:

## ԵՐԲ ՅԵՌԱԼԱՍ

Երբ որ մեռնեմ՝ շատ չթախծեք,  
Խնդրում եմ չտառապեք,  
Հոգու ցավը ու կարոտը  
Ես կտանեմ ինձ հետ անդարձ  
Իսկ դուք սիրեք իրար այնպես,  
Ինչպես ես եմ սիրել ձեզ կարոտով,  
Ու իմ հոգին հանգիստ խղճով  
Կհսկեմ ձեզ շատ կարոտով  
Երբ հեռանամ կկարոտեք,  
Ինձ ամեն ժամ կհիշեք,  
Ես ձեր կողքին միշտ կլինեմ,  
Խրատներով իմ բարի:  
Իմ կարոտը սահման չունի,  
Կրծքիս տակ ես կտանեմ,  
Ու իմ սիրտը կայրի անմար  
Մեծ կարոտը անմոռաց:

## ՈՒՐ ԷԼ ԼԻՆԵՍ

Ուր էլ լինես,  
Ուր էլ գնաս,  
Ոտքերիդ տակ կանաչ լինի,  
Վարդ ու մեխակ ժամանակին թող բացվի,  
Միայն, միայն վատը քեզ չհանդիպի,  
Ծաղիկ սիրտդ թող երբեք չթառամի,  
Միշտ թող կողքիդ լավը, լավը թևածի,  
Պարզ ու անմեղ շատ-շատերին նվիրվում  
Թախծում ես ու բոլորին հավատում  
Գուցե զգում ես, բայց անձայն լռում,  
Եթե չես լռում, ինչի ես հասնում



## ՏՈՒՍԱԾԱՌ

Տոհմածառս բարձր է,  
Պտուղները քաղցր է,  
Զավակները մի-մի սար,  
Հայրենիքիս մեծ պաշտպան.  
Մեծ եղեռնից փրկված,  
Մի փոքրիկ ճյուղ խեղճացած,  
Բայց արմատները հողում  
Օրեցօր էին զորանում:  
Հսկա ծառ է տոհմածառս,  
Պտուղներով զարդարված,  
Ու պտուղն էլ մեծ ծառից  
Հենց տակն է ընկնում, ցած:  
Պտուղները քաղցրավուն  
Ում ասես, որ չեն գերում,  
Ծառ է, մեծ ծառ, տոհմածառ,  
Ալաշկերտից է բերված:



## ՄԱՅՐ Է ՈՒՋՈՒՄ

Իմ աղջիկը լաց է լինում  
Ու տատիկին խնդրում.

-Ասա, տատիկ, ի՞նչ ես լռում,  
Ես ջահել մայր եմ ուզում:

Դու իմ տատն ես, լավ գիտեմ,  
Քեզ ավելի կսիրեմ:

Մայր եմ ուզում ունենամ  
Որ չլինեմ ես լացկան.

-Իմ հարազա տ, ո՞վ կլինի,  
Որ քեզ մայրիկ կլինի:

Երեք ձագեր անչափահաս,  
Կդառնա մայր՝ սիրելի,  
Ու չափահաս դարձնի:





Տունս ինչպես մի դոյակ  
Դարավոր ծառերը շիտակ,  
Նայում եմ ու հիանում,  
Ծառ ու ծաղկին մոտենում:

Տունս շինած հայրական  
Հորս պապիս ձեռքերով,  
Իրենց արդար քրտինքով  
Պինդ ու ամուր ձևերով:  
Տունս հսկում է ամուր  
Հայոց բանակը ամրակուռ  
Ծիրանավոր եկեղեցին 6-րդ դարում  
Այցելուներն են այցելում.  
Բազում-բազում հյուրերով  
Իսկ ներքևում լուսավոր  
Երևանս է շողշողում,  
Իր գիշերվա լույսերով,  
Հրաշալի գույներով:



## ԲԱՐԵԳՈՐԾԸ

Բարեգործ ես ձևանում,  
Չարագործ ես հիմնականում,  
Քեզ շատերն են ճանաչում,  
Քո արարքով մեղադրում.  
Ծերերին ես դու ծաղրում,  
Աղքատներին նվաստացնում,  
Ծաղր ու ծանակի ենթարկում,  
Քեզ դիմողին խիստ մերժում  
Վա՛յ նրան, ով քեզ դիմի,  
Քո անցյալը հիշեցնի,  
Ոտով-գլխով կկորչի,  
Ամբողջ կյանքում կհիշի.  
Աշխարհը աստիճան է, կիջնես դու շուտով,  
Կհիշես արածդ քեզանից նողկալով,  
Դու էլ կծերանաս, կքայլես փայտով,  
Կհիշես այն ծերունուն գղջալով,  
Ոնց քո մոտից հեռացավ արցունքով



## ՄԻ ՏՐՏՄԻՐ, ՔՈՒՅՐԻՎ

Մի տրտմիր, քույրիկ,  
Աշխարհն ո՞ւմ է մնացել, ասա,  
Գիտեմ՝ կորցրել ես քո ծնողներին,  
Գաղթի-կոտորածի ճամփեքին,  
Բայց դուք հայերդ, ընձյուղվեցիք  
Խելքը ուղեցույց, կամքով անվեհեր,  
Չավակների հետ տված ուս-ուսի,  
Կաք ու ծաղկում եք հենված մեր հույսին.



## ՈՒՐԱԽՈՒԹՅՈՒՆ ՅԱՐՈՒՍԵՒՆ

Հարուստ մարդիկ առնում-տանում,  
Ուտում-խմում և հրճվում,  
Ամռանը՝ դրսում, ձմռանը՝ ներսում  
Նվազի ձայնն է լսվում:  
Իսկ մնացածը:  
Լարում են վերջին ուժերը,  
Ցավով նայում են շուրջը,  
Անհծելով իրենց բախտը:  
Երեխեքն էլ մեծերի պես  
Անկամեցող ու պնդերես,  
Դուրս են գալիս արհամարհելով,  
Նայում վերև ժպտալով:  
Իսկ ընկերը նստած քարին,  
Նայում նրա հաստ բազուկին,  
Կոտրվում է սիրտը մանուկ,  
Շրջում է դեմքը դալուկ:

## ՀԱՅԻ ՍԻՐՏԸ

Հայի սիրտ թե ունենաս  
Մատաղ կանեմ արտիդ հոգիս,  
Հայի աչքեր թե ունենաս  
Կթափանցես հայի հոգին,  
Հայի երգը թե ունենաս  
Աշուղ դառնամ ես քո երգին,  
Հայի ձեռքը թե ունենաս  
Ձեռքերս վեր պարզեմ Աստծոն,  
Հայի լեզուն թե իմանաս  
Հայի դարդը դու կիմանաս,  
Հայի խիղճը թե ունենաս  
Հայի աչքով դու կնայես,  
Հայի դարդին կմիանաս,  
Հայի հոգսը կհասկանաս,  
Հայի ջուրը թե ունենաս  
Սիրտ ու թոքդ կլվանաս,  
Սառն եք, սառն եք, չեք տաքանա  
Հայի ցավը չեք հասկանա.



## ԴՈՒՐՍ ԲԵՐ ՆԱՎԱԿԴ

Հայրենիքդ մի մեծ ծով,  
Բոլոր դռներով մտիր փառավոր  
Մտի ր, դուրս արի, քայլի ր անվրդով  
Սիրի ր մոր նման գուրգուրանքով՝  
Օտար ափերից դուրս բեր նավակդ ծովից  
Զգուշացի ր փոթորիկից, փորձանքից,  
Թող օրորի քեզ զով քամին  
Ինչպես մայրը ի ր բարություն  
Դու իմ մենակ, օտար որդի,  
Արժանի չես դառնաս գերի,  
Հայրենիքդ դու հետ արի,  
Գիրկը բաց է Հայաստանի,  
Գիրկը կանոնի, կփայփայի,  
Օրոր կասի, կքնացնի,  
Արթնացնի, կերակրի,  
Նպատակիդ կհասցնի:



## ՆՎԻՐՈՒՄ ԵՄ

Անդրանիկին, Ավետիքին  
Անտի-Ավի գույգ եղբայրներ,  
Իմ արյունն եք, կտրիճներ,  
Հոգուս մեջ եք դուք մտել,  
Քաղցր պտուղ եք աճել  
Եկեղեցում մոմ կվառեն,  
Կարոտով ձեզ կսպասեն,  
Երբ տեսնեն ձեզ մատաղ կանեն,  
Միրոս միշտ ջերմ կպահեն  
Ձեզ չի փոխել կյանքը հեռվում,  
Միշտ տաք սրտով եք մնում,  
Կյանքս անգամ ձեզ նվիրեն,  
Ձեզ երջանիկ միշտ տեսնեն:  
Ծառը հողով է մեծանում,  
Որդին հորով է զորանում,  
Հայի որդին ուր էլ լինի  
Միշտ ջերմ սրտով կլինի



## ՉՔՆԱՂ ԱՆԻՆ

Երազանքս թող կատարվի  
Չքնաղ Անին կանգուն լինի,  
Հարսնաքողը գլխին լինի,  
Ծովից ծով Հայաստանս լինի  
Միսն ու Մասիս իրար գրկած,  
Եռագույնը թող ծածանվի,  
Ներքևում թող բռնեն քոչարի,  
Վանուշը թամադա լինի.  
Հարսնացուին Անիից բերեմ  
Իգդիրում հարսանիք անեմ,  
Դափ ու զուռնան ուժեղ հնչի,  
Քավորս Գուրգենը լինի,  
Հարսնաքույրը Անիից կգա,  
Հարսնեղբայրը Ալաշկերտից,  
Ամեն ինչ թող ճոխ լինի,  
Ուտող-խմող անուշ լինի:



## ՕՏԱՐ ՔԱՂԱՔ

Մնաս քարով օտար քաղաք,  
Քեզ հրաժեշտ եմ տալիս,  
Հայրենիքս է ինձ կանչում,  
Օտար լինել չեմ ուզում:  
Կարոտել եմ ես բոլորին,  
Կանաչ թփին ու քարին,  
Շտապում եմ, որ շուտ հասնեմ,  
Հողը գրկեմ, համբուրեմ,  
Աչքս հառեմ ջինջ երկնքին,  
Արագածին, Մասիսին,  
Լողամ ջրում, պառկեմ ափին,  
Գերվեմ, տրվեմ հաճույքին:  
Ծաղիկ քաղեմ, ջահելանամ,  
Օտար ափերը մոռանամ,  
Հոգիս խնդա, ուրախանա,  
Մրմնջալով աղոթք ասեմ,  
Հայրենիքիս գովքն անեմ.



## ԵՍ ՎԱԳՈՒՄ ԵՄ

Ես վագում եմ,  
Շտապում եմ,  
Իմ կեսին եմ ես փնտրում,  
Ու տխուր սերս պատմում:  
Բայց նա տխուր կողքիս կանգնած,  
Ինձ է նայում զարմացած,  
Ու եղնիկի տխուր տեսքով  
Ինձ է նայում կարոտով:  
Մի՞թե դու ինձ չես տեսնում,  
Որ կողքիդ եմ միշտ լինում,  
Ու քո հոգսդ ես եմ կիսում,  
Քո մտքերը հասկանում:  
Չար մարդու ես դու հանդիպել,  
Թողել է ու հեռացել,  
Ու չես ուզում նրան տեսնել,  
Անգամ մտքով երազել:  
Եթե անգամ քեզ հետ մեկը  
Լինի այնպես, ինչպես ես,  
Կհեռանամ քեզանից ես,  
Որ լինես դու երջանիկ:  
Ընտրի՛ր ինձ՝ քեզ կպաշտեմ,  
Քանի կամ ու կլինեմ,  
Դու անմեղ ես, քան մի եղնիկ,  
Կլինես դու երջանիկ:

## ՀԱՅԱՍՏԱՆ

Իմ քաղերկիր,

Իմ լավ երկիր,

Փխրուն սրտից

Ծլած երկիր:

Որդիներդ օտար երկիր,

Կարոտում են ու երագում,

Հետ դառնալ են նրանք ուզում,

Հայաստան են դառնալ ուզում

Մտածում են ու երագում,

Էլ հայ օտար թող չլինի,

Թող տուն դառնան, ամուր լինի,

Հայր հային թող պաշտպանի



## ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ԵՂՔՈՐՄ՝ ԱՐՏՅՈՒՄԻՆ

Դու հիվանդ ես,  
Ես լսեցի,  
Իմ լավ եղբայր սիրելի,  
Լացը փակեց տխուր սիրտս,  
Շուրջը լսվեց հառաչանքս:  
Երանի որ կողքիդ լինեմ,  
Քույրաբար քեզ ես սիրեմ,  
Երկար տարի քեզ չեմ տեսել,  
Ա՛խ, ոնց եմ ես դիմացել:  
Բայց ափսոս, որ չհասցրի  
Մահվան լուրդ լսեցի,  
Սառը մարմինդ ես գրկեցի  
Ողբ ու լացով մաշվեցի.  
Դաժան բախտդ ո՞ր է տանում,  
Իմ սիրտը բոց ընկել այրում,  
Մեր լավ եղբայրն անդարձ ճամփա է գնում,  
Մեր սրտերը արյուն լալիս, մղկտում:  
Թռա՛վ աշխույժ ծիծեռնակս,  
Փուլ եկավ պատը շարած,  
Ունեիր դու շատ մեծ նպատակ,  
Որ մնաց մեզ հիշատակ:

## ՄԱՆՈՒՇԱԿ

Քարի տակին մի մանուշակ,  
Գեղեցիկ ու գարնան գուշակ,  
Աչիկները հեզ ու թախծոտ,  
Տերևները շաղոտ-շողոտ:  
Մեծանում էր շատ մեծ հույսով,  
Սպասում էր հավատով,  
Հպարտանում իր տեսքով,  
Արևն էր ժպտում գովեստով:  
Մանուշակը թիթեռնիկին էր սպասում,  
Բայց ի՞նչ տեսավ իր վերևում,  
Մի աներես փուշ է աճում,  
Վճում է ու բարձրանում,  
Փաթաթվել է, պարիսպ դարձել,  
Դարձել է բիրտ մի տիրակալ,  
Չի թողնում, որ վերև նայի,  
Արև տեսնի, վայելի:  
Անպիտան փուշ, հեռու գնա,  
Թող որ սիրտս խաղաղ մնա,  
Քո ձեռքերից, քո իրանից,  
Հեռու մնա դու ինձանից:  
Մանուշակը թախծեց, լացեց,  
Գլխով նրան հեռացրեց,  
Աղոթում էր, Աստված կանչում,  
Ու կամացուկ հեկեկում:  
Աստված լսեց, պատասխանեց,  
Անխիղճ ու անգութ գտնվեց,  
Չարը՝ բարուն, բարին՝ չարին,  
Որ մեծանաս տաս դու բարին,

Այդ ինքնագոհ, հիմար փշին,  
Մանուշակը լսեց, թախծեց,  
Գլուխը կախ, ձայն չհանեց,  
Աստծու առաջ լուռ խոնարհվեց,  
Իր գրավիչ տեսքով փայլեց:  
Միեւնույն է մարդիկ գտնում  
Փշին խփում, հեռու նետում,  
Պոկում, տանում մանուշակին  
Ու խնամում ժամանակին,  
Պահում իրենց ծաղկանոցում,  
Ջրում, սիրում, բազմացնում՝



## ԾԱՂԿԱԾ ԲԱԼԵՆԻ

Նորաբողոքոջ ծաղիկ ես դարձել,  
Շողում է աչուկների կապուտակ,  
Արեւն է ժպտում, քեզ աչքով անում,  
Ջգում ես քեզ աշխարհում երջանիկ,  
Քայլում թեթև, հովի հետ մեղմիկ,  
Սիրով բարևում են քեզ ծանոթ մարդիկ,  
Երկինքն է պայծառ, քո սրտի նման,  
Մազերդ ծփան, քայլերդ մանրիկ,  
Ու հոգուդ խորքում սեր ես փայփայում,  
Ոչ մեկին անգամ ասել չես ուզում,  
Վախենում ես մարդիկ իմանան,  
Սիրող սրտիդ դավաճան դառնան,  
Հանկարծ չկտրեն սիրտդ քո բյուրեղ,  
Հանկարծ չկտրեն ծաղիկդ բացված,  
Կյանքդ չդառնա տխուր, ամպամած,  
Լինես միշտ կանաչ բալենի ծաղկած



## ԵՐԱԳ

Երազիս մեջ մորս եմ գրկել,  
Որ ինձ համար կյանքն է տխուր դարձել,  
Աշխարհը գլխին ամպ է կապել,  
Երազիս մորս եմ համբուրել.  
Ու իմ թևերին կուգեմ որ քնի,  
Անքուն գիշերներ էլ չանցնի,  
Կամաց դուք երգեք բարի թռչուններ,  
Հանգիստ թող քնի, ինչքան որ ուզի  
Կանգ առ դու, լուսին, առաջ մի գնա,  
Մայրական համբյուրից կարոտ չմնամ,  
Սիրտս լցված է, էլ չի դիմանում,  
Մորս գրկել եմ ու բաց չեմ թողնում





Ինչու համար սրտիս դուռը բացեցիր,  
Քո խոսքերով, քեզ սրբի տեղ դրեցիր,  
Տառապանքս ու տանջանքս ավելացավ,  
Կյանքս ավելի ծանր թվաց,  
Քո կախարդանքն իր արդյունքը տվեց,  
Լաց ու կոծը շրջապատեց,  
Դու քո կամքով հեռացիր իմ տնից,  
Երեխեքս արցունք են թափում տանջալից,  
Տխրեցի քո սատանի կեցվածքից,  
Էլ չեմ դիմանա քո վիրավորանքից,  
Դեմքս այրվեց տաք քրտինքից  
Հեռացի ր, մոռանամ ինչպես գազանից:





## ՀԱՐԱԳԱՏԸ ՈՒՐԻՇ Է

Իմ քույրերը երեքն են,  
Սրտիցս անբաժան են,  
Շատ են սիրում ես նրանց,  
Ասում են ես շատ սրտանց:  
Հորաքույրս, եղբայրս,  
Մայր ու եղբայր են սիրտս,  
Երբ մեծանամ ես նրանց  
Պարտական են միշտ սրտանց:  
Պապս, տատս կյանքիս լույս,  
Ինձ տալիս են շատ մեծ հույս,  
Հույս ու հավատ տվող են,  
Կյանքի ճամփի հանող են.  
Հայրս ինձ կյանք է տվել,  
Գուրգուրել հոր, մոր տեղ սիրել,  
Տղամարդավարի դաստիարակել,  
Ուղիղ ճանապարհի դուրս բերել



## ԳՏԼԵՍ ԻՍ ԲԱԽՏԸ

Իմ մանկությունը շատ լավ է անցել,  
Հարազատներս ինձ շատ են սիրել,  
Հպարտացել են ու շատ գուրգուրել,  
Որ իմ ծնունդը բարի է եղել  
Բայց երբ մեծացա, նախանձեցին ինձ,  
Ու չար հայացքով հետևում էին ինձ,  
Այդպես էլ անարժան մեկին հանդիպեցի,  
Տառապեցի ու տխրեցի,  
Իմ չար բախտը անիծեցի,  
Իմ սպասված լավ ապագան  
Ինչպես հասավ անմտության  
Օգնիր, Աստվա ծ, գտնեմ ելքը,  
Ոնց հետ քերեմ իմ անցյալը



## ՅՈՒՅՍԻ ԼՈՒՅՍԸ

Հույսիդ լույսը թող միշտ շողա,  
Արևի պես թող փայլի,  
Ուր էլ գնաս, ում էլ դիմես,  
Չմերժվես, չտխրես.  
Արև գրկես, որ միշտ ժպտաս,  
Աչքդ արցունք չտեսնի  
Որտեղ գնաս հայարտանաս,  
Խի՞նդ ու ժպիտ պարզես:  
Քո ծփացող գանգուրները  
Արեւի տակ թող փայլի  
Քար վերցնես, կանաչ դառնա,  
Դառը պտուղ չքաղես.  
Դու աննման իմ վարդ երես  
Մայրդ թող միշտ քեզ փայփայի,  
Երջանկություն թող բերի:

## ՍԻՐՏՍ

Սի՛րտ իմ, այսբան փոքրիկ, դալուկ,  
Մի բռունցք ես, բոնցբաչափ,  
Բայց անհանգիստ ու փակ  
Մտածում ես օր ու գիշեր դոնփակ,  
Մտածում ես, ինձ էլ տանջում,  
Չես քնում, հանգստանում,  
Մոռանում ես սուր ցավերը,  
Վրադ անել դարդ ու ցավը,  
Թրթում ես ու զգուշացնում,  
Ի՞նչ ես ուզում, քեզ եմ հարցնում,  
Ինչու ես դու այդքան նրբին,  
Անհանգիստ ես ամեն ինչին

## ՄՈՌԱՅԱՐ ՄԵՉ


Այս Ավանում մի փոքրիկ կա,  
Տասը տարեկան է հիմա,  
Վտիտ, կապույտ աչքերով  
Մի փոքրիկ է շատ համով:  
Չայնը զանգակ ու անուշիկ,  
Անուշ ժպիտ սիրունիկ,  
Անցորդները շատ են տեսել,  
Շատերին է գրավել:  
Նա մայր չունի, շատ է տխրում,  
Ու երգեր է հորինում,  
Ինչպե՞ս թողեց մայրը անգութ,  
Ու մոռացավ այդպես շուտ:  
Տղան շատ է մայր երագում,  
Ընկերներին է նայում,  
Որ գալիս են ու փաթաթվում,  
Իրենց որդուն գուրգուրում:  
Ես էլ եմ մայրիկ ուզում,  
Որ փաթաթվեմ, համբուրեմ,  
Անցյալի հետք չհիշեմ:  
Ոնց մոռացավ մայրս անգութ,  
Անգութ դարձավ ինձ համար,  
Արբյուրի ջուր դարձավ, հոսեց,  
Ու հետադարձ չնայեց:  
Դու էլ \*\*\* անգութ իմ մայր,  
Հոսեցիր ինչպես սառը ջուր,  
Երազ դարձար ու հեռացար,  
Ուրիշի գրկում սեր գտար:

## ԻՄ ԱՆՈՒՇԻԿ

Գու ասում ես, որ տխրում ես  
Իմ սևաչյա անուշիկ,  
Ես հեռու եմ, քեզ չեմ տեսնում,  
Բայց օրս քեզ հետ է անցնում.  
Մտածում եմ ամբողջ օրը,  
Ինչպես անցավ քո օրը,  
Հո հիվանդ չե՞, հո չե՞ս լավիս,  
Իմ աննման սիրելիս:  
Քեզ հարազատ քո հայրիկը  
Հեռացել է, մոռացել,  
Նա սիրում է ուրիշ կնոջ,  
Քեզ աչքաթող է արել:  
Արի, վերջ տուր տխուր օրվան,  
Ուրախ եղիր իմ անգին,  
Շուտով ես քեզ ինձ մոտ տանեմ  
Ու քեզ մենակ չեմ թողնի:  
Բախտս էր դաժան ու անարժան,  
Հավատացի խոսքերին,  
Գուցե բախտը մեզ էլ ժպտա  
Վիրավոր սիրտս ուրախանա:

## ՉԱՐ ԿԻՆ

Չար կինը թող անհիծվի հավիտյան,  
Որ պատճառ դարձավ բաժանման,  
Երեխեքս անջատ-անջատ  
Չեմ դիմանում բաժանման:  
Ի՞նչ շահեցիր քո արարքով,  
Կստանաս դու քո սրտով,  
Գուցե կյանքում կհանդիպենք  
Ու անցածը մենք հիշենք:  
Ես անմեղ եմ Աստծո առաջ,  
Իմ սրտով էլ ինձ կտա,  
Երեխեքս առնեմ իմ թևի տակ,  
Սրտիս մոտիկ ու տաքուկ,  
Փարվեմ նրանց ու ժպտամ,  
Վատ օրերս մոռանամ.  
Դառը կյանքիս ուլունքները  
Որ կրել եմ իմ վզին,  
Քանդեմ, թափեմ, չհավաքեմ,  
Որ անցյալը չհիշեմ,  
Լույսը բացվի՝ ուրախ լինեմ,  
Երեխեքով զբաղվեմ:



## ԻՄ ՍԱՐԵՐ

Սար ու ձորեր կանաչ հագել ու կանգնել,  
Ծառ ու ծաղիկ, կանաչ հագել ու կանգնել,  
Արտերի մեջ լորերն են ծվծվում,  
Առու, առվակ զրնգում են, քչքչում  
Արևմուտքը շղթաներն է արձակում,  
Շուտով կիջնի՝ լողանալու Սևանում,  
Ու թիկունքը կմիացնի Արևելքին,  
Ու կդառնա մի մեծ պատնեշ թիկունքին.  
Ես էլ գուգվեմ, կանաչ հագնեմ ու ելնեմ,  
Ելնեմ Մասիս սարի լանջին ու պառկեմ,  
Հանգիստ առնեմ ու փառավոր երագեմ,  
Արարատից, Արագածից հովերը գան լավ լուր տան,  
Որ ամուր է սահմանները հավիտյան,  
Ծովից ծով է Հայաստանս բուրաստան:





## ԻՆՉՊԵՐՍ ԵՂԱԿ

Ախ, ինչպե՞ս հասա ես օտար քաղաք,  
Հասանք ու այսպես, կարոտից երվանք,  
Օտար քաղաքում երկար կնճամ,  
Ու ինձ տանջելով առաջ կգնամ.  
Ու հիմա այսքան կարոտն անհուն  
Ուսիս եմ դրել ու դժվար տանում,  
Մինչև երբ ու որտեղ տանեմ,  
Մինչև հետ դառնամ ես հայրենի տուն:  
Կորիզն է ընկել, շիվ է բարձրացել,  
Բարձրացել է նա, հասուն ծառ դարձել,  
Ու ծառի վրա պտուղ է աճել,  
Քաղցրահամ պտուղ ու հիանալի,  
Այսպես մտքերով երագում եմ տուն  
Ու չեմ դիմանում,  
Շատ եմ դառնանում...  
Արդեն գնալու ծրագիր կազմում,  
Մտքով ու սրտով տուն եմ ես դառնում,  
Կարոտով բացում, դուռն է հառաչում,  
Ո՞ր էիր, ո՞ր էիր իմ անգին տանտեր,  
Տունդ ու տեղդ թողել էիր անտեր:

## ԴՈՒ ԲԱՐԻ ՍԱՐԴ

Ապրիլ երկար...

Որ օգնեցիր դու այն մարդուն,  
Որ նստել էր սառը քարին  
Ու խնդրում էր թախանձագին,  
Իրեն օգնող անցորդներին:

Ապրիլ երկար...

Որ օգնեցիր այն կնոջը,  
Որ երեխան կպած թևին,  
Ձեռքը մեկնած հառաչում էր,  
Սիրտը լիքը աղաչում էր,  
Ապրիլ երկար,  
Որ օգնեցիր ընկերոջդ քո մանկության,  
Որ շատ նեղն էր, ոտքի հանիր,  
Ընտանիքով քեզ օրհնեցին,  
Եղբայրաբար ընդունեցին,  
Ապրիլ երկար դու քո կյանքով,  
Դու հրեշտակ քո մեծ սրտով

## ՉԱՐ ՀՈԳԻ

Դու մարդկանց մեջ վիուկ մեծամիտ,  
Ինքդ քո մասին ունես մեծ կարծիք,  
Վրա ես հասնում, քանդում, ավերում,  
Ու քո արածով շատ հպարտանում:  
Որտեղ դո՛ւ լինես, կռիվ ես գցում,  
Չայնդ շատ բարձր, գլուխդ գցում,  
Ու քո չարությամբ, անհարգանք,  
Տալիս ես մարդկանց մեծ տանջանք,  
Դու չես լսում, չես ամաչում,  
Մեծին ու փոքրին նույն աչքով նայում,  
Ով կա քեզ նման չարիք անասոված,  
Դու ծնունդ ես վիուկ անիծված



## ԻՄ ՄԱՍԻՍ

Ելնենք Մասիս սարի լանջին  
Երգենք, պարենք, նվագենք,  
Ու այսպիսի տոն օրերին,  
Մեր կարոտը վայելենք:  
Ով որ գիտի Մասիսն ինչ է,  
Ինչ հոգսեր է, ցավն ինչ է,  
Ով որ գիտի ինչ երազներ,  
Ու նա ունի ինչ հույսեր:  
Ինչ մտքեր է նրան պատել,  
Ու նա միշտ է մեզ ասել,  
Նայում հեռվից ու կարոտում,  
Սարը թեքված մի կողմում:



## ԿԱՐՈՏ ՈՒՆԻ

Ամեն մարդ էլ կարոտ ունի,  
Կարոտ սիրտը քուն չունի,  
Կարոտ սիրտը դադար չունի,  
Գիշեր-ցերեկ անդադար:  
Երբ մայր դառնաս, դու կհմանաս,  
Մոր կարոտը կհասկանաս,  
Կհասկանաս, նոր կհմանաս,  
Կմտածես, կուրախանաս, կտխրես:  
Միակ մարդը մայրն է, որ կա  
Միտք է անում, մտածում,  
Երբեք հանգիստ չի լինում,  
Քնած լինի, երազ տեսնում,  
Երազներով է տարվում.  
Մտքով աշխարհ է սավառնում,  
Արթնանում ու վերհիշում,  
Երազներն է մտաբերում,  
Ու պատմում է իր կյանքը,  
Աչքերը լի արցունքը,  
Վիշտը կոկորդն է սեղմում,  
Բայց պատմում է ու պատմում:

## ՄԱՐԴԸ

Ինչ է մարդը իր էությամբ,  
Եթե չար է՝ ազահությամբ,  
Խաբում, ստում ու փող դիզում,  
Մեկը ունի, տասը դարձնում:  
Դիզում է մեծ հարստություն,  
Տունը չկա ուրախություն,  
Չի կամենում, չի ցանկանում,  
Հավաքում է, չի վայելում:  
Իսկ երբ բարի է մարդն իր էությամբ,  
Աչքի է ընկնում իր համեստությամբ,  
Իր գործերով է զբաղվում,  
Ընտանիքին համեստ պահում,  
Չի թալանում ու չի խաբում,  
Իր վաստակով բավարարվում,  
Ընտանիքն է նրան հարգում,  
Ու ամեն տեղ լավը խոսում:  
Բոլորդ էլ լավ իմացեք,  
Հարգանք, պատիվ դուք միշտ թողեք,  
Ապրեք ուրախ, մաքուր, արդար,  
Կյանքը լինի թող հավասար.

## ԿԵՂՑ ԸՆԿԵՐ

Դու ընկեր ես ճոխ սեղանի,  
Կեր ու խումի, խրախճանքի,  
Դու ընկեր չես իմ բաց սրտի,  
Իզուր ցավս քեզ պատմեցի:  
Քեֆի պահին սար խոստացար,  
Երկրորդ օրը շուտ մոռացար,  
Մոռացար ու ինձ ուրացար,  
Իզուր ընդունել էի եղբայրաբար  
Սեր ու հարգանք վայելեցիր,  
Քեզ սրբի տեղ դրեցիր,  
Աղ ու հացը դու կտրեցիր,  
Օրը անցավ, շրջվեցիր:



## ԼԱՎ ՀԱՐԵՎԱՆ

Լավ հարևան իմ մտերիմ,  
Արի, նստիր իմ կողքին,  
Քո լավ սրտով, բարի մտքով  
Քեզ լսում եմ հաճույքով  
Դու իմ լավ ու վատ պահին  
Միշտ լինում ես իմ կողքին,  
Ասում ես դու միշտ մեր լավը,  
Բարի, անմեղ խրատները  
Պարզ ու զուլալ մտքեր ունես,  
Միշտ ուշադիր ու լավատես,  
Հարևանը թող քեզ նման լինի,  
Սրտիս մոտիկ արժանի:





## ԳԱՐՈՒՆ

Գարուն սիրուն ու վեհաշուք  
Շող են տալիս ամենքին,  
Սիրտդ մաքուր, ջուրդ վարար,  
Նվիրում ես բոլորին.  
Ու քո շողով, անուշ շուքով,  
Չորանում ես անուշ բույրով,  
Նայում են քեզ, աչքով անում,  
Սիրող սրտեր միանում:  
Ա՛խ, երանի մարդն էլ այդպես  
Ամեն տարի թող ծաղկեր,  
Ամեն տարի գարուն տեսներ,  
Ծերությունը չլիներ.  
Անուշ արև, ես քեզ նայեմ,  
Բույրդ առնեմ, վայելեմ,  
Ու քո համար երգեր գրեմ,  
Կյանքս երջանիկ համարեմ.



## ԶԳՈՒՅՇ ԵՂԻՐ

Չայնդ զանգակ, տեսքդ նրբին,  
Կգտնես դու քո արժանին,  
Աղոթում եմ, Աստված կանչում,  
Ամեն անգամ խրատում:  
Դու չքնաղ ես իմ թագուհի,  
Աչուկների ծով-ծիրանի,  
Իսկ սագերդ հուրի-փերի,  
Ամեն մեկին կգերի:  
Չքնաղ եղնիկ, զգույշ եղիր,  
Չար որսորդի ձեռք չընկնես,  
Շուրջդ նայիր, ոտքդ զցիր  
Դար ու փոսեր չընկնես:  
Լավ մտածիր ինչ ես անում,  
Ամենքին մի վստահիր,  
Դեռ փոքր ես, կսխալվես,  
Ու շատ վաղ կտանջվես:



## ԿԱՍԵՑԻՐ

Ցանհիր, ո վ մարդ, որ քաղես,  
Տո՛ւր, որ հետ վերցնես,  
Բարի եղիր դու բոլորին,  
Ուրախ ժպտա ամենքին:  
Քեզ տիրակալ դու մի կարծիր,  
Որ դեռ քեզ չի պատկանում,  
Իմացիր, որ կգրկվես,  
Ամեն ինչից սևերես:  
Շատ չար ես դու քո հոգով,  
Աստված կտա քո սրտով,  
Քեզ թագուհի ես համարում,  
Քեզ նայում ենք, ամաչում



## ԱՐԴՅՈՔ ԿԳԱ՞

Ամռան արևն ինչ շուտ անցավ,  
Ծաղիկ, ծաղկունք հեռացավ,  
Եկավ, շողաց ու հեռացավ,  
Բողբոջներս վախեցան:  
Չմեռ կգա, ցուրտ պատերին  
Բուքն է ոռնում, աղմկում,  
Ինչ է ուզում նա մեզանից,  
Խուսափում ենք ձայներից.  
Մտնում ենք տուն մենք հայրական,  
Օտարոտի ու վախով,  
Մեզ է նայում թույն հայացքով,  
Սառը, մթին ու զննող:  
Գարնան արև արդյոք կլինի՞,  
Մի՞թե մեզանից հեռացավ,  
Մենք կարոտ ենք ջերմության,  
Հետ բեր արև մանկության:  
Մի՞թե բախտը մեզ չի ժպտա,  
Մեր հոր տունը աննման,  
Մի՞թե սառը հայացքները  
Մեր հետևից միշտ կգան:

# ՄԱՍԻՆՆԵՐԻ ՊԵՐՏՈՒՄԸ

## ● ԲԱՆԴԱԿԸ



## ՕՁԱԿԻ

## ● ՏՆՏԻՍ

## ՊՍԵՐՄՈՒՑ







# മിസ്റ്റർ ഓഫീസർ







որ տաք էր: Թռչունները ծլվում էին ծառի ճյուղերին: Արևն իր ոսկեգույն ճառագայթներով ողողել էր Ջմշուդենց տան ապակիները: Նրանք այնպես էին փայլում, կարծես մի անմարտի հրդեհ էր բռնկվել: Բակում աքլորակովի ժամանակ Ջմշուդի աքլորը արյունով ներկում է մյուս աքլորին և հաղթող դուրս գալիս: Հավաքվել էին բոլոր հարևանները և ուշի-ուշով հետևում էին աքլորակովին: Հասկերն արդեն դեղնել, և կարծես խոնարհվելով գլուխները թեքել էին ներքև, կարծես խնդրելիս լինեին թե բավական է մեզ այսքան կանգնած թողնեք, ժամանակն է, որ մենք հանգստանանք: Արտերի մեջ կային բազմաթիվ լորեր, որոնք գեղեցիկ շարժվում էին հասկերի միջով: Օրը հանկարծ փոխվում է, սկսում է հորդ անձրև տեղալ: Արևը մանկան ժպիտը շուրթերին թաքնվում է ամպի ետևը, եւ կարծես ասելիս լինե՛ր՝ մի՞ք տխրի, շուտով նորից դուրս կգամ: Թռչուններն իրար փարվելով թաքնվում են թփուտներում, իսկ կարմիր կակաչները, որոնք քիչ առաջ ժպտում էին իրար, այժմ խռոված երեխայի նման գլուխները կախում են:

Ահա այդ օրը ծնվում է Ջմշուդի առաջին որդին Եգորը: Ինչ դժբախտություն և ինչ երջանկություն էր սպասվում՝ ոչ ոք չգիտեր: Եգորը հետզհետե մեծանում էր և օրեցօր գեղեցկանում: Ամուսիների ուրախությունն ու զբաղմունքն էր դարձել: Եգորը հորն էր նմանվում: Նրա քիթը, սև ու խոշոր աչքերը, գանգուր մազերը հիացնում էին բոլորին:

Երբ լրանում է Եգորի երկու տարին՝ հայրը ծննդյան

օրը խնջույք է կազմակերպում: Հավաքվում են բարեկամները, հարևանները: Բոլորն ուրախ տրամադրության մեջ էին, և ահա բացվում է դուռը ու ներս մտնում գյուղի հարուստ վաճառական Արդուլը. Նա հարբած էր Ներս մտնելով՝ տեսնում է աղքատիկ սեղանը, սկսում ծաղրել, հրամայում է դադարեցնել նվագը և հետևել իրեն: Բայց ոչ մեկը չի լսում նրան, շարունակում են ուրախանալ Համբերությունից դուրս է գալիս հարուստ Արդուլը ո՞նց թե իրեն մերժեն: Գազազած Արդուլը մոտենում է Եգորի հորը՝ Ջմշուղին, ու բոլորի աչքի առաջ ապտակում նրան. Մի պահ մթնում է նրա աչքերի առջև, տունը պտտվում է նրա գլխին: Երբ նայում է Արդուլի դեմքին, մոռանում է ամեն բան և նրա արնակալած աչքերի մեջ Ջմշուղը կարծես հիշում է այն դեպքը, որը եղել էր տաս տարի առաջ:

Մութ ու խավար գիշեր էր: Բոլորը քնած էին: Ջմշուղին թվում էր, թե ինչ-որ մեկը ձայն էր տալիս իրեն: Երբ արթնանում է, նայում է պատուհանից դուրս և աչքերին չի հավատում: Վառվում էր իր սեփական տունը: Ջմշուղը սարսափահար ճչում է և արթնացնում հորը. Հայրը, որն արդեն գիտեր ամեն ինչ, վերցնում է կացինը և դուրս թռչում: Սակայն ուշ էր, կրակը վերջին ծղոտներն էր լափում: Չնայած շրջապատը մութ էր, բայց հրդեհն այնքան ուժեղ էր, որ լուսավորում էր շուրջ բոլորը Նրանք տեսնում են, թե ինչպես երեք հոգի անցնում են պարիսպը: Առաքելը մի ակնթարթում հասնում է նրան, բռնում նրա օձիքից և տապալում գետնին: Այդ պահին վերևից անսպասելիորեն թուրը մտնում է նրա կուրծքը և տապալում գետնին: Ջմշուղը հորը արնաշաղախ տեսնելով՝ նետվում է առաջ: Սակայն շողացող թուրը տեսնելով, մանավանդ որ ձեռքին ոչինչ չունեի, սարսա-

փահար կանգ է առնում: Թուրը շողացնողը հենց ինքն էր՝ հարուստ վաճառականը. թալանում էր այն, ինչ իրեն պետք էր, խլում այն կնոջը, որն իրեն դուր էր եկել: Այդ ամենը մի պահ նրա աչքի առաջ է գալիս: Նա այլևս անկարող էր համբերել: Վերցնելով դանակը խրում է Աբդուլի սիրտը: Այդ ամենը կատարվում է մի ակնթարթում: Երբ ուշքի է գալիս, տեսնում է արնաշաղախ Աբդուլին, որի ձեռքերը բռնել էին երկու ասկյար: Ի՞նչ կարող էր անել Ջմշուղը. ստիպված հնազանդվում է: Նա մոտենում է Եգորին, համբյուրում նրա այտերը և դուրս գնում Ջմշուղը աչքը զցում է այս ու այն կողմ, փնտրում որևէ մեկին, որը կարող էր ազատել նրան: Նա հույսը չի կորցնում: Այդ պահին իր ընկերներից մեկը դիպչում է իրեն և անցնում: Դա նշանակում է, որ իրենով հետաքրքրվողների կան: Ջմշուղն ուրախանում է. Հենց այդ պահին, երբ նրանք թեքվել էին դեպի նեղ խճուղին, որտեղ մութ էր, մարդը մարդուն անգամ չէր տեսնի, Ջմշուղն ուզում է փախչել բայց նկատում են և այնպես ուժգին հարվածում նրա գլխին, որ խեղճը կայչում է պատին. Դա կարծես ինչ-որ բան էր նշանակում: Պատի վերևից վեց հոգի թափվում են նրանց գլխին, ազատում Ջմշուղին: Դրանք Ջմշուղի ղաչաղ ընկերներն էին, որոնք թաքնվում էին սարերում: Ջմշուղի բախտից նրանք այդ օրը գյուղ էին իջել՝ իրենց գործերով, և ահա լսելով այդ մասին, շտապ հասնում են ու փրկում Ջմշուղին: Նա չգիտեր ինչպես շնորհակալություն հայտներ իր վաղեմի ընկերներին: Բայց դրա ժամանակը չէր, հարկավոր էր շտապ հեռանալ գյուղից, շատ վտանգավոր էր նրա համար գյուղում մնալը, այդ պատճառով ինքն էլ է գնում նրանց հետ: Ջմշուղը ողջ ճանապարհին ոչ մի խոսք չի փոխանակում

ընկերների հետ: Նրա համար շատ անսովոր էր գյուղից հեռանալը, սկզբում կտանջվի կարոտից, իսկ հետո կհարմարվի այդ պայմաններին: Ջմշուղը երբեք չի մոռանա կնոջը, որին արյան գնով է տիրացել. Մի պահ նրա աչքի առաջ է գալիս այն օրը, երբ իր սիրած աղջկան գտնում է մի հարուստի գրկում: Նա տեսնում է, թե ինչպես կնոջը քաշքշելով, ուզում են տիրանալ նրան. Ջմշուղը վրա է հասնում և ազատում Չիլոյին, կռվում է Համիդի հետ, բայց Համիդը կռվել չի ուզում, ասում է. «Կտեսնենք ում կհասնի»: Ջմշուղը մոտենում է Չիլոյին Չիլոն նայում է տղային և առանց մի խոսք ասելու գլուխը սեղմում է Ջմշուղի կրծքին ու լաց լինում. Ջմշուղը նրան հանգստացնում է և նստեցնում դեզի վրա. Այնտեղ մի ժամ մնալով մոռանում են կատարվածը և հեռանում տարբեր ճանապարհներով: Դրանից անցնում է մեկ ամիս և Համիդն իր չորս ընկերների հետ որոշում է փախցնել Չիլոյին: Աղջիկը դիմադրում է: Այդ պահին օգնության է հասնում հարևան Գելը: Գելին ճանաչում էին բոլորը իր քաջությամբ: Տեսնելով, որ ոչինչ դուրս չի գալիս, ձեռքի երկաթե ձեռնափայտով խփում է նրա գլխին ու հեռանում են: Երբ Գելը վրա է հասնում, Չիլոյին գտնում է ուշաթափված:

Գեղեցիկ էր Չիլոն. Նա ծնվել էր գարնանը, մի տար օր, երբ մանուշակներն իրենց աչիկները հատելով միմյանց՝ ժպտում էին. Չիլոյի աչքերը նույնպես կապույտ էին: Նրա տատը պատմել է, որ իբր իր ծնվելու պահին պատուհանի անցքից ներս է մտել մի ծիծեռնակ, և անցնելով օրորոցի վրայով՝ դուրս է գնացել: Երևի հենց այդ պատճառով էլ Չիլոյի հոնքերը սև ու կեռ էին: Երեսը սպիտակ էր: Նրա ամեն ինչը գեղեցիկ էր, կարծես

Արարիչը ոչինչ չէր խնայել նրան ստեղծելիս. Երբ Գեղը գրկում է աղջկան տուն տանելու, հիանում է Չիլոյի գեղեցկությամբ: Երբ տեղ են հասնում, Գեղը աղջկան պառկեցնում է թախտին: Տնեցիները լացուկոծ են դնում, իրար անցնում: Չիլոն չուներ ոչ հայր և ոչ էլ եղբայր: Հավաքվում են բոլոր հարևանները. Այդ օրից անցնում է մի քանի օր, Չիլոն փոքր-ինչ իրեն լավ է զգում, երբ կողքին տեսնում է Ջմշուդին: Տղան ամեն օր անցնում էր աղջկա դռնով և կարոտով հիշում այն օրերը, որ անցկացրել էին միասին՝ ջրի ափին կամ խոտի դեզի տակ: Չիլոն նույնպես հիշում էր այդ օրերը և աչքերը հառելով երկնքին մտածում է, որ կլինի՞ մի օր, երբ ինքը նորից կհամբուրի Ջմշուդի արևից այրված դեմքը. Հաջորդ օրը դա իրականանում է Չիլոն ընկերուհիների հետ դուրս էր եկել սարի լանջ ման գալու. Հանկարծ տեսնում է Ջմշուդին, դիտավորյալ վայր է ընկնում և սկսում լաց լինել: Ջմշուդին տեսնելով, ընկերուհիները հեռանում են, լավ հասկանալով ամեն ինչ. Կարոտից այրվում էին երկուսի ջահել սրտերը, նրանք կիրճում համբուրվում են: Ընկերուհիները այդ լուրը տարածում են ամբողջ գյուղով մեկ: Այդ լուրը հասնում է նաև մորը. Գեղջկուհի միամիտ այդ կինն անհարմար զգալով բարձրանում է կտուր և այնտեղից իրեն վայր է զգում: Երբ Չիլոն տուն է մտնում, տեսնում է հարևանները մորը ուշքի են բերում: Մայրը ուշքի գալով տեսնում է աղջկան իր կողքին, բարկացած ապտակում է նրան. Հարևանները բռնում են մոր ձեռքը և աշխատում հանգստացնել նրան. Մայրը դեմ էր իր աղջկա և Ջմշուդի ամուսնությանը. Նա իր խոսքի տերն է լինում՝ Չիլոյին ամուսնացնում է Համիդի հետ, առանց աղջկա համաձայնության:

Չիլոն որոշել էր իր անելիքը Հարսանիքից մի օր առաջ Ջմշուդի հետ պայմանավորվում է, որ հարսանիքից հետո գա և իրեն տանի: Ջմշուդն ուրախությամբ համբուրում է աղջկան ու հեռանում:

Ահա և եկավ հարսանիքի օրը: Արևն իր ոսկեգույն ճառագայթներն ուղղել էր երկու նորապսակների վրա: Մեղմ քամին օրորում էր ծառերը: Փչում էր գուռնան, լսվում էր ուրախ երգի ձայնը: Ջմշուդի սիրտը տակն ու վրա էր լինում: Նա մտածում էր արդյո՞ք կհաջողվի իրեն փախցնել Չիլոյին:

Հարսանիքի երկրորդ օրը, երբ Համիդը ցանկանում է համբուրել Չիլոյին, Չիլոն խնդրում է մի պահ դուրս գալ սենյակից, որպեսզի օրհնի ամուսնության գիշերը: Համիդը համաձայնվում է: Երբ Չիլոն դուրս է գալիս, մեկը հետևից բռնում է նրան: Չիլոն ուզում է գոռալ, բայց երբ իր կողքին տեսնում է Ջմշուդին, շատ է ուրախանում: Ջույգն անհետանում է խավարում: Գիշերով նրանք հասնում են Բուլանուղ գյուղ և այնտեղ բնակություն հաստատում: Այդ ամենը հերթով գալիս-անցնում է Ջմշուդի աչքերի առաջ: Վերջապես ընկերները սկսում են խոսել նրա հետ: Այդպես զրուցելով հասնում են քարանձավ: Երկու հոգի նրանց դեմը կտրում են և ճրագը պահելով՝ ուղեկցում են դեպի քարանձավի խորքը: Այդ օրը նրանք շատ էին հոգնել, պառկում են այդտեղ ու քնում:

Աշուն էր: Դեղին տերևները թիթեռնիկների նման թռչելով, ընկնում են գետնին և ասես հառաչելով սպասում մյուսին: Այդպես կամաց-կամաց մերկանում էին ծառերը, սպասում ձմռանը:

Գեղեցիկ էր աշունը Բուլանուղ գյուղում: Աղջիկները գունավոր շորեր հագած, ծառերի վրայից մանանա էին

հավաքում: Նրանք տխրությամբ պատմում են, թե ինչպես Չիլոն նորից երեխա է ունեցել, այնինչ ամուսինը հինգ ամիս է, ինչ անհայտ կորած է, ինչպե՞ս է պահելու երկու երեխա: Կանանցից մեկը պատմում է, թե ինչպիսի վատ պայմաններում են նրանք ապրում մեկը դողում է ցնցոտիների մեջ, իսկ մյուսը նոր է տեսնելու կյանքի դառնությունները: Այո, շատ դժվար է Չիլոյի համար. Բռնագրավել էին ունեցած-չունեցածը և թողել միայն անկողինը: Ամեն անգամ օրորոցին նայելիս սիրտը լցվում էր. ինչպե՞ս է պահելու գույգ երեխաներին Չիլոն հույսով էր, որ մի օր կգա ամուսինը.

Անցել էր տասը տարի: Մի օր Չիլոն սովորականից շուտ է արթնանում և երբ դուռը թակում են, նա վախեցած վեր է թռչում, նայում քնած երեխաներին Չիլոն քարանում է, տեսնելով իր առջև կանգնած ամուսնուն. Նա այնքան հյուծված էր, մեռելային կերպարանք ուներ: Նա հազիվ է ճանաչում ամուսնուն Նրանք գրկախառնվում են: Իսկույն ամուսնուն հայտնում է, որ ունեցել են ևս մեկ տղա և անունը դրել Իգիթ՝

Տունը լրիվ փոխվել էր Ջմշուդի համար: Երեխաներին արթնացնելով, անընդհատ համբուրում էր նրանց, շա՛տ էր կարոտել: Նրա աչքերը լցվում են արտասուքով: Փաթաթվելով նրանց, ամուր սեղմելով գրկին՝ իր երկար տարիների կարոտն էր

առնում նրանցից: Երեխաները զարմացած նայում էին հորը. ո՞վ էր այդ մարդը: Նրանք չէին հասկանում, որ այդ մարդն իրենց հայրն է: Մայրը երեխաներին զգուշացնում է, որ հարևաններին ոչինչ չասեն. Չգուշացնում է, որ եթե ասկյար գա իրենց տուն, ասեն՝ իբր Չիլոյի եղբայրն է բանտից ազատվել, եկել է քրոջ մոտ ապրելու:

Ջմշուդը շատ էր փոխվել. Նրա ոսկորները ցցվել էին, աչքերը փոս գնացել: Երկար մորուք էր թողել: Շատ էր փոխվել Ջմշուդը: Մեկ տարի հետո Չիլոն գույգ աղջիկ է ունենում, ինչպես գյուղացիներն էին ասում «առանց մարդի»: Մեկի անունը Սաթո է դնում, մյուսինը Մարո: Ջմշուդի մեծ որդին արդեն տաս տարեկան էր. Ջմշուդը որոշում է մի արհեստի տա տղային. Նա տալիս է Փիլոսի մոտ կոշկակարություն սովորելու, իսկ Իգիթին՝ մի հարուստ մարդու մոտ՝ գառները պահելու:

Անցնում են տարիներ, բայց Եգորի հիշողության մեջ վառ էր մնացել ծնողների պատմածը. Նա որոշում է անպայման վրեժխնդիր լինել իր ծնողների համար՝ Հին ցավերը չեն մոռացվում:

Բայց ահա մի նոր դժբախտություն է պատահում:

Երբ Եգորը տուն է գալիս, տեսնում է տունը վառվում է, կաղնու ծառի տակ տեսնում է սպանված մորը և փոքր քրոջը՝ Մարոյին: Նա իրեն կորցնում է, ուշաթափվում ու ընկնում է դիակների վրա: Գալիս է հայրը Սաթոյի հետ՝ մի փոքր դույլ ձեռքին: Այդ պահին Ջմշուդը խելագարվում է: Սկսում է ծիծաղել, հետո լացել, շորերը պատառոտելով փախչում է լեռներ: Եգորը ուշքի գալով տեսնում է հարևանների:

Սաթոն թեպետ փոքր էր, բայց ամեն ինչ հասկանում էր. Նա ընկնելով մոր վրա սկսում է համբուրել մոր սառած դիակը: Նա մոր կրծքի տակ, շորերի արանքում մի փոքրիկ կապոց է նկատում. Դա Չիլոն էր մի քանի կոպեկ ետ գցել: Տեսարանը շատ ցավալի էր: Շուտով ներս է մտնում Ջմշուդը: Նա ձեռքին մի քար ուներ բռնած: Բոլորն ահով սպասում էին, թե ինչ է անելու նա: Ջմշուդը նախ մոտենում է կնոջը, փաթաթվում ու համբու-



րում է կնոջ դալկացած դեմքը: Նրա աչքերից արցունքներ էին գլորվում: Ապա մոտենում է աղջկան, ձեռքը դնում նրա գլխին և սկսում ողբալ. Նա մերթ ծիծաղում էր, մերթ՝ լացում: Երբ տղամարդիկ մոտենում են Ջմշուդին, որպեսզի մխիթարեն նրան, կատարվում է անսպասելի նա ձեռքի քարերով սկսում է խփել մոտեցողներին և ծիծաղելով վազում սարն ի վեր:

Եգորն արդեն 14 տարեկան էր: Որբերի ձայները կտրվել էին լացելուց: Արդեն մթնել էր: Հարևան Վարդանը մոտենում է երեխաներին, բռնում նրանց թևերից, տանում իրենց տուն: Տղամարդիկ բերում են դիակները:

Օրն ամպոտ էր: Արևը բոլորովին չէր երևում: Մուրադ գետը հոսում էր հառաչելով, կարծես ինքն էլ էր ցավակցում որբերին:

Սկսում է անձրևել. Լացում էին քարերը, լացում էին ծառերը, ծաղիկները, լացում էին բոլորը. Երբ դագաղը դնում են այրված տան շեմին երեխաները մոխիրների վրա ուշագնաց են լինում: Վերջին հրաժեշտն էին տալիս բոլորը և արտասուքներով թրջում մեռածների դեմքերը. Շուտով բոլորը գնում են իրենց տները՝ մենակ թողնելով որբերին: Որբերը գրկախառնված մի կերպ գիշերն անց են կացնում խսիրի վրա: Հասոն սրտի խորքում ցավ էր զգում և ցանկանում էր օգնել նրանց, տեղ տալ իր տանը, բայց, ցավոք, իննը հոգի մի հացատան մեջ ապրել հնարավոր չէր: Եգորը չի համաձայնվում, բռնում է եղբոր, քրոջ ձեռքերը և շնորհակալություն հայտնելով հեռանում քրդի տնից: Եգորը գնում է կոշկակարի մոտ և պատմում իրենց գլխին եկածը: Նա էլ իր հերթին խղճում է և խորհուրդ տալիս մտնել Մուլթան խանի տունը՝ ծառայության: Այդպես էլ լինում է: Նրանք ապաստա-

նում են հարուստ Սուլթան խանի մոտ. Սուլթան խանի նախկին հավանոցն էր դա, որտեղ չոր խոտ և մի հաստ ու կեղտոտ մինդար կար: Նրանք ճաշելու էին խոհանոցում: Սաթոն տնտեսական գործերով էր զբաղվելու, իսկ Իգիթը՝ գառներն էր արածեցնելու: Եգորը ենթարկվելու էր Սուլթան խանի հրամաններին. Վաղ առավոտյան բոլորն անցնում են իրենց գործին Երեկոյան հավաքվելով հավաքում, բոլորն էլ սնվում են, սոված չեն մնում: Տխուր էին նրանք, հիշում էին իրենց մորն ու քրոջը, հիշում էին և հորը, որը թափառում էր սարերում:

Մի անգամ Իգիթը գառները տանում է արածացնելու ջրի ափին, իսկ ինքն էլ նստում է ավազի վրա և սկսում խաղալ: Տարվելով խաղով, մի պահ նկատում է՝ ոչխարներն անհետացել են: Միրտը ահ է ընկնում, վազում է տուն, կարծելով, թե այնտեղ կլինեն ոչխարները: Վերցնում է քրոջն ու եղբորը և գնում ման գալու: Երկար ժամանակ ման են գալիս, բայց գառները չկային: Վախից չէր համարձակվում տուն գնալ: Վերջապես գտնվում են գառները. Երբ մտնում են խոհանոց ճաշելու, տերը Իգիթին արգելում է ճաշել և երկու օր սոված է թողնում նրան: Գիշերը, երբ խոհանոցում ոչ ոք չկար, Եգորը հացի մի կտոր թաքուն գցում է շալվարի փողքը և դուրս գալիս: Այդ պահին Սուլթան խանը կանգնեցնում է նրան և շալվարի փողքից դուրս է հանում գողացած մի կտոր հացը: Ապտակում է խեղճին այնպես, որ քթից արյուն է հոսում: Սաթոն սարսափում է: Նա ատելությանը լցված նայում է խանի արնակալած աչքերին: Իգիթը լսելով ոտքի ձայներ, կարծում է, թե իր քույրն ու եղբայրն են գալիս իր մոտ: Տեսնելով եղբոր խղճալի վիճակը, արցունքները խեղդում են նրան: Շուտով քնում

են՝ արցունքներն աչքերին. Առավոտյան Իգիթը վերցնելով գառները գնում է դեպի դաշտ. Նրա ոտքերն իրեն չէին հնազանդվում, մի կերպ էր քայլում: Մի կերպ իրեն զգում է խոտի վրա: Երբ վերև է նայում, տեսնում է հորը, և չգիտես վախի՞ց, թե տեսածից, այնպես ուժեղ է գոռում, որ ինքն իր ձայնից սթափվում է Երբ հայրը տեսնում է որդուն, ուշադիր նայում է որդու տանջված դեմքին և այնպես փախչում, կարծես թշնամուց էր փախչում: Իգիթը ձայն է տալիս հորը և սկսում ձայնով լացել: Մի քիչ այն կողմ նա տեսնում է հորը քարի վրա նստած, գլուխը ձեռքերի մեջ առած: Հայրն արտասվում էր, տեսնելով իր որբ զավակին պատառոտված շորերով, բոբիկ ոտքերով Նա հեկեկում էր իր որբացած մանկան համար Իգիթը լուռ հետևում էր հորը, բայց վախենում էր նրան մոտենալ: Տղան մոտենում է հորը, փաթաթվում և սկսում կարոտով համբուրել: Հայրը լուռ էր, չէր համարձակվում ոչինչ ասել: Հայրը Իգիթից հաց է խնդրում: Իգիթը նույնպես ոչինչ չունեի, ցույց է տալիս ծակ տոպրակը. Մի պահ հոր և որդու հայացքները հանդիպում են իրար, երկուսն էլ կարոտալից նայում են իրար,, բայց չեն կարողանում ոչինչ ասել: Իգիթը տուն է վերադառնում: Երկար ժամանակ նրա աչքից չէր հեռանում հոր կերպարանքը: Իգիթը շատ էր մտածում հոր մասին: Սաթոն ցանկանում էր, որ հայրը կամ առողջանար կամ շուտ մեռներ, որ բոլորը մոռանային նրան:

Սուլթան խանի քրոջ տղան սիրում էր Սաթոյին: Սուլթան խանը համաձայն չէր այդ միությանը: Էդ էր պակաս, որ աղախինը իր քրոջ հարսը դառնա: Սուլթան խանը կանչում է Եգորին և պահանջում, որ իր քույրը լքի այդ տունը և հեռանա: Այդ գիշեր Եգորը քրոջ հետ թող-

նում ու հեռանում են.

Չմեռ էր: Չյունը ճոճում էր նրանց ոտքի տակ: Սաթոյի համար եղբայրներից բաժանվելը շատ դժվար էր: Հանկարծ նա նկատում է Եգորի ձեռքի կապտուկը Սիրտը լցվում է: Սկսում է լուռ արտասպել: Եղբայրները նույնպես տխուր էին, քանի որ պետք է բաժանվեին իրենց քրոջից: Էլ ո՞վ պիտի իրենց շորերը կարկատան աներ, ո՞վ պիտի հոգար իրենց մասին Այդ բանը նկատում էր նաև Մարկոսը, բայց ոչինչ անել չէր կարողանում: Եգորը Սաթոյին տանում է քուրդ ծանոթի տուն, որը վերջերս էր տեղափոխվել գյուղ: Այս ընտանիքը նույնպես դժբախտ էր: Վերջերս էր նրանց աղջիկը մահացել, հազիվ էին քաղել: Սաթոն խղճում էր բոլորին, չնայած իրենց դրությունն էլ մի բան չէր: Եթե ձեռքը որևէ հնար լիներ, անպայման կօգներ նրանց: Նա էլ էր տանջվում այս անարդար օրենքների պատճառով: Մտածում էր. ինչո՞ւ է ժողովրդի մի մասը աղքատ, մյուս մասը հարուստ: Հիշում է, որ մի անգամ Սուլթան խանն ասել էր, թե բոլոր աղքատներն անխելք են, իսկ հարուստները խելացի: Նա հիշում էր, թե ինչպես էին իրենք հարուստների աղբանոցից հավաքում ձմերուկի կեղևները, ուտելիքի մնացորդները: Բերում էին տուն և այնպես ախորժակով էին ուտում, կարծես հենց նոր էին խանութից բերել:

Շատ դառը օրեր են տեսել Սաթոյենք: Ամեն անգամ կարոտով էր նայում իրենց հայրենի գյուղին: Մի օր Սաթոն երագում տեսնում է, թե ինչպես Սուլթան խանը մեռել է, բոլորն ուրախ են, ուրախ է նաև Մարկոսը: Իբր Մարկոսը մոտենում է իրեն և ասում. « Սաթո ջան, այլևս մեզ ոչ ոք չի խանգարի, մենք շուտով կամուսնանանք»: Առավոտյան, երբ Սաթոն արթնանում է, շատ է

ափսոսում, որ դա երազ էր.

Տխուր էր Սաթոն: Նա տեսնում էր, թե ինչպես են երեխաները ուրախանում, կատակում, բայց նա չէր կարողանում ուրախանալ, հայացքը մի կետի հառելով մտածում էր: Նա համարյա թե չէր խոսում: Եղբայրները հեռանալով քրոջից, կրկնակի անգամ որբացան. Ամեն գիշեր եղբայրները միտք էին անում, թե ո՞նց անեն, որ հարստանան, կարողանան իրենց քրոջը ետ բերել.

Եգորն արդեն 20 տարեկան էր: Մի անգամ, երբ գետում ձիերին էր լողացնում, տեսնում է մի աղջկա՝ բուրդ լվանալիս: Աղջիկն այնքան գեղեցիկ էր, որ Եգորն իսկույն սիրահարվում է: Վարդը 14 տարեկան էր և կարծես հասուն աղջիկ լիներ. Աղջիկն իր գործն ավարտելուց հետո ցտեսություն է ասում Եգորին և հեռանում: Եգորը երկար ժամանակ նայում է նրա ետևից. Աղջիկը նույնպես շուռ էր գալիս ու հետ նայում: Ամբողջ ճանապարհին Եգորն այդ աղջկա մասին էր մտածում: Երբ տուն է հասնում, տեսնում է իրենց խղճուկ վիճակը, նրա հոգում ամեն ինչ տակնուվրա է լինում: Քիչ անց ներս է մտնում Իգիթը: Նա շատ հոգնած էր: Եգորը տեսնելով նրա վիճակը, չի հարցնում ոչինչ: Իգիթը խոսելու մտադրություն էլ չուներ. Հանում է թաց կոշիկները, պառկում մինդարի վրա ու քնում:

Լուսաբաց էր: Արևն իր շողերը փռել էր գյուղի վրա: Արևի ճառագայթների ներքո ձյունը փայլում էր ոսկու նման: Երթիկներից ծխի կապույտ քուլաները բարձրանում էին երկինք: Այդ օրը եղբայրները տխուր էին: Մարկոսը նրանց հայտնել էր, որ պետք է Սաթոյին փախցնի: Եղբայրները որոշում են գնալ քրոջ մոտ և իմաց տալ: Ուշ գիշերին, երբ եղբայրները գնում են Հաբոյի տուն,

Սաթոն տեսնելով նրանց՝ ուշաթափվում է: Երբ ուշքի է գալիս, փաթաթվում է եղբայրներին ու լացելով պատմում իր վիճակի մասին. Երբ քրոջից հարցնում են, թե արյո՞ք նա ուզում է Մարկոսի հետ ամուսնանալ, քույրն ասում է, որ ավելի լավ է այնտեղ ապրի, քան մեկ ուրիշի: Սկզբում Եգորը չի համաձայնվում, բայց տեսնելով քրոջ տանջալի վիճակը՝ խղճում է նրան և իր համաձայնությունը տալիս: Եղբայրները գրկախառնվում են քրոջ հետ և արտասուքն աչքներին հեռանում.

Չնհալ էր: Այդ օրը Մարկոսն իր ընկերոջ հետ եկավ Սաթոյենց տուն: Նա իր հետ բերել էր շորեր ու կոշիկ: Սաթոն հուզմունքից արտասվում էր: Այնպես էր հոնգուր-հոնգուր լացում, կարծես հարազատ ընտանիքից էր բաժանվում: Վերջապես բաժանվում են իրարից: Նրանց ձիերը գնում էին կողք կողքի: Վերջապես մոտենում էին գյուղին: Սաթոն հարցնում է, թե արդյոք տանեցիները համաձա՞յն են, որ իրեն տանում են: Մարկոսը ժպտալով համբուրում է Սաթոյի քրտնած դեմքը: Երբ մոտենում են տանը, Մարկոսը թակում է դուռը. Մայրն իսկույն բացում է և ճրագի լույսի տակ տեսնում Սաթոյին: Շատ է հավանում Սաթոյին: Տանում է սենյակ, սնդուկից հանում իր ոսկյա մատանին և հագցնում սաթոյի մատին: Սաթոյի ուրախությանը չափ չկար: Մայրը սեղան է գցում: Արդեն ուշ գիշեր էր, բայց Սաթոն չէր համարձակվում ննջասենյակ մտնել: Մարկոսը նրան փաղաքշելով սենյակ է տանում և սկսում համբուրել: Սաթոն դիմադրում էր: Սաթոն երանության մեջ էր: Առավոտյան երբ արթնանում են, Մարկոսի մայրը մտնում է սենյակ և համբուրում Սաթոյին ու տղային: Մայրը խոստանում է գնալ եղբոր մոտ՝ ճոխ հարսանիքի պատրաստություն տեսնե-

լու համար:

Առավոտ էր: Տաք ու արևոտ: Այդ օրը կարծես բոլորն էին ուրախ: Մայրը՝ Նունեն, շատ ուրախ էր, որ վերջապես իր տղան հասել է իր նպատակին: Բարևելով եղբորը, հայտնում է, որ Մարկոսը աղջիկ է փախցրել: Սուլթան խանը մի պահ լուռ է: Երբ իմանում է հարսի ով լինելը, քիչ է մնում կաթվածահար լինի: Բարկանում է քրոջ վրա, չի ուզում նույնիսկ լսել նրան: Քույրը կախվում է եղբոր ոտքերից և խնդրում, որ իր համաձայնությունը տա: Սուլթանը չի համաձայնվում գյուղ գնալ, պահանջում է, որ այդտեղ բերեն, ինքն ամեն ինչ կանի: Հաջորդ օրը բոլոր հարսանքավորները ճոխ նվերներով գալիս են Սուլթան խանի տուն: Ճոխ հարսանիք է լինում, փչում էր դիոլն ու զուռնան, երգում, պարում էին բոլորը: Սուլթան խանը մի ոսկյա շղթա է նվիրում հարսին: Հարսանիքին ներկա էին նաև Եգորը և Իգիթը. Պարի են հրավիրում հարսին և փեսային, որից հետո մեջ է մտնում սկեսուրը, ապա՝ Եգորը: Եգորը շատ լավ է պարում: Սաթոն ոսկեղենի մեջ փայլում էր և իրեն բախտավոր էր համարում. Նա որոշել էր, որ պետք է անպայման օգնի եղբայրներին: Սեղանները լեփ-լեցուն էին, Սուլթան խանը չէր խնայել ոչինչ: Հարսանիքն ավարտվեց լուսադեմին:

Գիշեր էր: Քամին սավառնում էր տանիքներով և ներխուժում դռների արանքից: Դրսում ոչ ոք չկար: Միայն մի մարդ էր փողոցում, ոտքերը բոբիկ, հյուծված: Այդ մարդը մոտենում է մի վառված և փլված տան: Նստում է տան շեմին և սկսում տաքացնել սառած ոտքերը: Բացվում է դուռը և Հասոն դուրս է գալիս: Տեսնում է այդ մարդուն, խղճալով տուն է հրավիրում: Այդ մարդը Ջմշուղն էր: Հասոն Ջմշուղին նստեցնում է թոնրի շուրջ,

որ տաքանա: Տաքանալուց հետո Ջմշուղը հարցնում է իր երեխաներից: Լսելով երեխաների հաջողության մասին, վեր է ցատկում, ուզում է փախչել, բայց Հասոն բռնում է նրա ձեռքից ու չի թողնում: Ջմշուղը մնում է Հասոյենց տանը: Հորը այցելության են գալիս Եգորը և Իգիթը: Հայրը շուտով կազդուրվում է: Եգորը Սուլթան խանին խնդրում է, որ թույլ տա իրենց հորը իրենց հետ ապրելու: Խանը համաձայնվում է: Նա գիտեր, որ Ջմշուղը լավ հովիվ է եղել և իր մոտ է վերցնում որպես հովիվ: Իգիթն ամեն կերպ աշխատում էր զբաղեցնել հորը, որպեսզի նա ոչ մի բանի մասին չմտածեր: Սաթոն երբ տեսնում էր հորը բարև էր տալիս և շտապ տուն էր մտնում, քանի որ նրան արգելել էին հոր հետ երկար-բարակ խոսակցությունները: Ջմշուղն այդ ամենը նկատում էր, ամաչում էր ինքն իրենից, նույնիսկ մտածում էր, որ միգուցե Սաթոն իրեն տեսնել չի<sup>օ</sup> կամենում: Բայց ոչ, Սաթոյի սիրտը ճմլվում էր հորն այդ վիճակում տեսնելով: Նա օգնում էր հորը. շոր, կոշիկներ տալիս հագնելու: Մի օր Ջմշուղը տղային՝ Եգորին ասաց. «Եգոր ջան, Սաթոն չի կամենում ինձ հետ խոսել, երևի ինձանից ամաչում է կամ չի ուզում, չգիտեմ, միգուցե դո՞ւ նրա հետ խոսես»:

Հայրը չարաչար սխալվում էր Սաթոն հորը տեսնելով՝ աչքերը լցնում էր, կուզեր երկար-բարակ խոսել նրա հետ, բայց վախենում էր: Նրան արգելել էին «գիժ» հոր հետ խոսել: Եգորը հուզվել էր: Փաթաթվելով հորը՝ ասում է. « Հայրիկ, դու սխալվում ես, մենք միշտ աղոթում էինք, որ դու լավանաս, մենք երբեք երես չենք թեքի մեր անբախտ հորից, եթե երես թեքենք Աստված կանիծի մեզ»:

Եգորը հազիվ էր արտասանում այդ բառերը, արտա-



սուքները խեղդում էին կոկորդը. Ջնշուդը նույնպես արտասպում էր: Հաջորդ օրը հայրը առաջարկում է գնալ գերեզմանատուն՝ կնոջ և աղջկա մոտ: Նրանք գերեզմանի վրա գլխիկոր արտասպում են, հողաթումբն իրենց արցունքներով են թռչում.

Եկավ գարունը, ծառերն ու ծաղիկները ծաղկեցին: Ամենքն անցյան իրենց գործին Սաթոն շատ գոհ էր, ամուսնու հետ ամբողջ օրը գնում էին ման գալու եւ երեկոները վերադառնում: Մեղրամսից հետո Մարկոսի համար արդեն ամեն ինչ սովորական էր դարձել. Մարկոսը սկսում է թղթախաղությամբ զբաղվել: Տուն էր գալիս գիշերը, իսկ խեղճ Սաթոն ամբողջ օրը տան հոգսերով էր զբաղվում: Ամեն գիշեր Սաթոն թաքուն լացում էր: Գլուխը դնում էր բարձի տակ, որպեսզի չլսվի լացի ձայնը. Նա տանջվում էր. հիշում էր հարսանիքի օրը, որքա՛ն երջանիկ էր: Հիշում է, թե ինչպես Սուլթան խանը ասում էր. «Սաթո ջան, դու որք էիր, իսկ այժմ դու բախտավոր ես, ես քո հայրը կլինեմ, սկեսուրդ մայրդ»: Հիմա վիճակն այլ է, բոլորը կարծես անտարբեր էին դարձել նրա նկատմամբ, նույնիսկ՝ ամուսինը: Լինում էին օրեր, երբ ամուսինները բառ անգամ չէին փոխանակում: Մարկոսը շատ ուշ էր տուն գալիս: Դա անհանգստացնում էր Սաթոյին. Գալիս էր հարբած, երբեմն էլ բարկացած. Սաթոն լուռ ու մունջ տանում էր այդ ամենը, չէր համարձակվում նույնիսկ մի բառ ասել: Սաթոն շուտով երեխա պետք է ունենար: Միակ մխիթարականը դա էր կզբաղվեր երեխայով: Սաթոն շատ ծանր էր տանում այդ ամենը, հազիվ էր քայլում: Ինչ-որ տեղ Մարկոսը կարծես խղճի խայթ էր զգում: Այդ երեկո նա այնքան բարի էր, նույնիսկ Սաթոն էր զարմացել: Նա տեսնում է, թե ինչպես էր

Սաթոն նիհարել: Խղճալով նրան գրկում, համբուրում է: Սաթոն այնքան էլ համոզված չէր, որ ամուսինը կարող է փոխվել: Դա ժամանակավոր էր համարում:

Մեկ ամիս հետո նրանք երեխա են ունենում տղա: Մարկոսը շատ էր ուրախացել: Սաթոն խնդրում է այդ լուրը հորը հասցնել: Երբ Մարկոսը գալիս է Ջմշուդի մոտ, մաղարիչ է պահանջում, տղա են ունեցել: Տղայի անունը Ալիկ են դնում: Ջմշուդը թախտի տակից հանում է գինին, հավաքվում են մարդիկ և նշում այդ օրը:

Անցավ մեկ տարի: Ալիկը երջանկություն է բերում ամուսիններին:

Եվս մեկ ամիս է անցնում. Մարկոսը կրկին իրեն տարօրինակ էր պահում. Սաթոն սկսում է անհանգստանալ: Եվ ահա մի անգամ Սաթոն տանը նստած կար էր անում: Հանկարծ դուրը թափում են: Սաթոն կարծում է, թե ամուսինն է, մոտենում է դռանը, զարմանում է դռան առջև տեսնելով մի պառավ կնոջ: Պառավը մոտենում է թախտին, առանց հրավիրելու նստում: Պառավը սկսում է հեռվից. «Աղջի՛, դու Մարկոսի կի՞նն ես»: «Այո, նանի, ի՞նչ կա», - հարցնում է Սաթոն. «Էլ ինչ պիտի լինի, քո կապը կտրած մարդը իմ թոռան խելքը կերել է: Ասել է, թե իբր՝ ամուսնացած չէ: Ամբողջ գյուղով խոսելիք ենք դարձել: Թե կարաս սանձը քաշի, մեղք ես, երեխի տեր ես. Տղաս ուզում է ամուսնուդ սպանի. Ես խոստացա, որ կգամ քո մոտ, բայքի դու մի ճար անես»: Սաթոն տեղում քարացել էր: Մի պահ Սաթոն չէր ուզում հավատալ, հետո հիշում է, որ երկու ամիս առաջ ամուսինն իրեն խաբում էր, թե գնալու են կողքի գյուղ՝ գործ ունեն անելու, ընկերոջ համար ձի պիտի առնեն: Եվ ամեն անգամ գալիս էր տուն, ասելով, թե. «Էսօր էլ չառանք, թանկ էր»: Սաթոն

չգիտեր ինչ ասեր պատալ կնոջը: Պատավը վեր է կենում տեղից և իրեն-իրեն խոսելով դուրս գնում: Սաթոն ծնկներին խփելով անհիծում էր իր բախտը:

Ներս է մտնում Մարկոսը: Մոտենում է կնոջն ու երեխային, համբուրում, կարծես ոչինչ չէր եղել, կատակներ է անում: Սաթոն չէր ուզում հավատալ պատավին: Տեսնելով կնոջն անտրամադիր, հարցնում է, թե ի՞նչ է պատահել: Սաթոն պատճառաբանում է, թե գլուխն է ցավում: Մարկոսը վեր է կենում տեղից, հանում կնոջ շորերը, պառկեցնում է անկողնում և կնոջն ասում, որ ինքն է ուզում երեխային քնեցնի: Հետո պառկում է Սաթոյի մոտ ու այնպես է սիրում Սաթոյին, կարծես ոչինչ չէր եղել: Սաթոն մի պահ կասկածում է. միգուցե չարախոսո՞ւմ են, ուզում են իրենց ընտանիքը քանդե՞լ: Քնում են մինչև լույս:

Անցնում էին օրերը. Ամեն օր Մարկոսը վերադառնում էր ուշ երեկոյան, կեղծավորություն էր անում, փաթաթվում էր կնոջը, սիրում ու քնում:

Անտառը նորից հազավ իր սպիտակ մուշտակը: Քար ու սար ծածկվել էին ձյան հաստ շերտով: Բնության գեղեցկությանը տարված գնում էր Եգորը: Նա տաք հագնված էր, ուսին կրում էր հրացան: Ձեռքի ճիպոտով ծառերին խփելով անցնում էր անտառով: Եգորը եկել էր անտառ՝ որս անելու: Այդ օրը հաջող է անցնում Եգորի համար: Երբ տուն է գալիս, զարմանում է՝ տեսնելով քրոջն իրենց տանը: Սաթոն սկսում է լաց լինել, պատմում է այն ամենը, ինչ լսել էր պառավից, այն ամենը, ինչն ինքն էր տեսնում ու զգում: Հայրը չգիտեր ինչ ասեր: Եգորը հանգստացնում է քրոջը. «Մի մտածիր, եթե այդպես շարունակվի, ամեն ինչին վերջ կտամ՝ կբե-

րեմ մեր տուն»։ Ինչ-որ մեկը ճանապարհին տեսել էր Սաթոյին և հայտնել էր Սուլթան խանին։ Խանը շատ էր բարկացել։ Կանչում է Մարկոսին և զայրացած ասում. «Ես այլևս չեմ կարող ձեզ օգնել։ Կինդ էլ տնից գողանում, տանում է հոր տուն»։ Մարկոսի կատաղությանը չափ չկար, կարծես դույլով սառը ջուր լցրին նրա գլխին. Վեր է կենում տեղից և գնում ուղիղ Սաթոյի մոտ։ Կատաղած հարցնում է. «Սաթո, ի՞նչ ես տարել հորդ տուն»։ Խեղճը վախեցած համոզում էր ամուսնուն, որ ոչինչ չէր տարել, գնացել էր հորը տեսնելու։ Այնպես էր կատաղել Մարկոսը, կարծես ուզում էր խեղդել Սաթոյին։ Սաթոն դողում էր թակարդն ընկած մկան պես. Քաշքշելով Սաթոյին՝ ուզում էր սպանել նրան։ Սաթոն օգնություն է կանչում. Մարկոսը դրանից ավելի է կատաղում, սկսում է ծեծել խեղճին։ Հետո սիգարետն ազահությանը ծխելով, թողնում է կնոջը, առանց հանվելու գնում է քնելու։

Քունը փախել էր Սաթոյի աչքերից։ Աթոռը մոտ քաշելով, նստում է ամուսնու կողքին և լուռ նայում նրա դեմքին։ Սաթոն կարոտով նայում է ամուսնուն, նայում է երկա՛ր-երկա՛ր, հետո վերմակն առնում ու գնում թախտի վրա քնելու։ Մարկոսը կատաղած տեղից վեր է կենում, հիշում է Սուլթան խանի ասածը, արյունը նորից խփում է գլխին. հարձակվում է Սաթոյի վրա ու գցում ներքև։ Անտանելի գիշեր էր։ Մի կերպ գիշերը լուսացրին։ Առավոտյան Մարկոսը նույնիսկ չէր էլ ուզում նայել Սաթոյի դեմքին։ Մարկոսը մտքով Երանուհու հետ էր. պատկերացնում էր նրան գրկում, համբուրվելիս, զանգուր մազերը քաշելիս։ Նայում էր Սաթոյին և նրա համար Սաթոն այլևս չկար։ Նրա աչքին Սաթոն տգեղ էր երևում։ Նա զգվում էր Սաթոյից, մի՞թե նա երբևէ սիրել է նրան. Սաթոյի ամեն

ինչը նրա համար անտանելի էր Նայելով կնոջ ծամերին, թվում էր, թե երկու սեւ օձեր են ուսերի վրա, որոնք գալիս են իրեն խեղդելու: Գլուխը բռնած տնից դուրս է թռչում. Սաթոյի համար դա մահ էր: Կյանքը Սաթոյի համար անհմաստ էր դարձել, ուզում էր կյանքին վերջ տալ: Քիչ անց ներս է մտնում իգիթը: Այդ լուրը նույնպես հասնում է Սուլթան խանին: Սուլթան խանը որոշում է գալ Սաթոյի մոտ: Այդ ժամանակ Սաթոն լացելով եղբորը պատմում էր կատարվածը և խնդրում, որ հորը ոչինչ չասի: Երբ խանը ներս է մտնում, իսկույն մոտենում է սեղանին: Այնտեղ մի փաթեթ կար: Թքում է Սաթոյի երեսին. «Ինչպե՞ս չեք ամաչում, հերիք չի իմ հաշվին ուտում-խմում եք, մի բան էլ գողանում եք»: Բացելով փաթեթը, խանը ամաչում է իր ասածից փաթեթի մեջ թռչնի միս էր: Խանն իրեն չի կորցնում « Այ էդպես կվախեցնեմ ձեզ»:

Սաթոն երկու օր ոչինչ չէր կերել Խանի գնալուց հետո ախորժակով սկսում է ուտել եղբոր բերածը: Իգիթն այդ ամենն իմանալով, շատ է անհանգստանում. եթե Սաթոն բաժանվի ամուսնուց, ինքն էլ գործից կզրկվի: Դա մեծ հարված էր նրա համար:

Չմեռ էր: Ամեն ինչ այնքան գեղեցիկ էր: Շուրջ բոլորը ծածկված էր ձյան հաստ շերտով: Ոչինչ չէր հետաքրքրում Մարկոսին: Նա շտապում էր Երանուհու մոտ: Նրանց ժամադրավայրը հովիվների պատրաստած ցածր տնակն էր: Քանի որ հիմա ձմեռ էր, հովիվները գյուղ էին իջել: Երանուհին շատ էր սիրում Մարկոսին: Գրկախառնվում են, համբուրվում, կարոտներն առնում: Մարկոսը տխուր էր: Նա ուզում էր Երանուհուն ամեն ինչ պատմել: Բայց վախենում էր նրան կորցնելուց: Երանուհին ամեն ինչի համաձայն էր: Մարկոսը նրա առաջին

սերն էր: Եվ ահա Մարկոսը համարձակություն է ունե-  
նում և խոստովանում, որ ինքը կին և երեխա ունի, բայց  
չի սիրում կնոջը, շուտով պիտի բաժանվի:

Դժվար էր Երանուհու համար բաժանվել Մարկո-  
սից: Նա հորից շատ էր վախենում: Ի՞նչ կլիներ հետո,  
Աստված գիտեր: Հիշեց հոր ծեծը, եղբոր նախատինքնե-  
րը: Նրանք լուռ բաժանվում են: Ամբողջ ճանապարհին  
Մարկոսը մտածում էր, կկարողանա՞ արդյոք Սաթոյին  
խոստովանել, որ այլևս իրեն չի սիրում: Տանջվում էր  
Մարկոսը այդ մտքից և միաժամանակ խղճում Սաթո-  
յին: Չէ՞ որ մի ժամանակ սիրել է: նա սպասում էր ինչ-  
որ առիթի: Երբ մտնում է տուն, խուսափում է Սաթոյին  
տեսնելուց, ի՞նչ պիտի ասեր Սաթոյին: Սուս ու փուս  
մոտենում է թախտին ու անտարբեր հայացքով նայում  
երեխային: Նա նկատում է, որ փոքրիկ Ալիկը ձեռքն  
ուզում է մոտեցնել իրեն: Ինչպե՞ս կարող էր անտարբեր  
մնալ իր երեխայի հանդեպ. գրկում է, կրծքին ամուր  
սեղմելով համբուրում: «Ալիկ ջան, ի՞նձ ես շատ սիրում,  
թե՞ մամային»: Երեխան մերթ մորն էր նայում, մերթ  
հորը և վերջապես մատով ցույց տալիս հորը: Մարկոսի  
սիրտը կծկվում է ուրախությունից Ինչպե՞ս կարող էր  
իր երեխայից հրաժարվել. Կհամաձայնե՞ր Երանուհին  
երեխային վերցնել իր հետ: Այդ ժամանակ նա Երանու-  
հուց կհրաժարվի:

Սուլթան խանը գիտեր, որ Մարկոսը շուտով պիտի  
բաժանվի Սաթոյից: Նա ուրախ էր և առանց խղճի խայթ  
զգալու ասում է. «Ես եղպես էլ գիտեի, որ եղպես էլ պիտի  
լինի: Գժի աղջիկը պիտի գիժ լինի»:

Ազահ, խաբերա, մարդկային հատկություններից  
զուրկ մարդ էր Խանը: Նա ամուսնացել էր չորս անգամ:

Միրում էր սիրահետել կանանց. Նույն մտքով որոշում է գնալ Սաթոյի մոտ: Մի գույգ կոշիկ է առնում սիրտը շահելու համար: Հրամայում է ծառային, որ երեխային տանի ման տալու. Սաթոն չի համաձայնվում: Գալիս է Մուլթան խանը: Դա անակնկալ էր Սաթոյի համար. Հրավիրում է խանին տուն, իսկ ինքը ոտքի վրա կանգնում: Խանը հանում է իր բերած կոշիկները ու դնում սեղանին. Սաթոն ուրախանում է և շնորհակալություն հայտնում: Ի՞նչ իմանար խեղճը, թե ինչ է գալու գլխին: Խանը ստիպում է նրան, որ հագնի իր բերած կոշիկն ու հագուստը: Սաթոն ամաչում է, բայց ստիպված գնում է հագնելու նրա բերածը: Այդ բոպեին խանը ներս է մտնում, հարձակվում մերկ Սաթոյի վրա և առնում բազուկների մեջ: Սաթոն դիմադրում է, բայց անկարող էր. Սաթոյի համար դա մահ էր: Նա վերցնում է խանի բերած կոշիկն ու հագուստը և գցում վառարան. Խանը չէր հեռանում, համոզում էր Սաթոյին: Սաթոն կատաղած տնից դուրս է թռչում: Գալիս է Մարկոսը: Չարմանում է քեռուն իրենց տանը տեսնելով: Սաթոն չկար. Անամոթ խանը այնպիսի ստեր է հորինում, թե իբր անցնելիս է եղել տան մոտով, լսել է Սաթոյի լացի ձայնը, ներս է մտել, թե իբր Սաթոն խնդրել է իրեն որ Մարկոսին տեղեկացնի, որ Սաթոն բաժանվում է իրենից. Երեխային էլ թողել է: Մի ծանր բան է ընկնում Մարկոսի ուսերից: Ոգևորված քեռուն պատմում է Երանուհու մասին և ասում, որ մի քանի օր հետո Երանուհուն պիտի բերի տուն:

Մութ էր: Գրեթե ոչինչ չէր երևում: Քայլում էր Սաթոն խելագարի նման, չէր կարողանում իրեն ներել այդ ամենի համար: Բայց մի՞թե ինքն էր մեղավոր: Հագիվհագ քայլերով հասնում է գերեզմանատուն: Ուշագնաց ընկնում

է գերեզմանաթմբի վրա ու հեկեկում: Սիրտը դուրս է գալիս տեղից, ուզում էր մեռնել, այնպես էր լացում, որ հեկեկոցը քամին տանում էր հեռու-հեռու: Սաթոն դողում էր, ցուրտը ներս էր մտնում նրա պատառոտված շորերի արանքից, ամբողջ մարմնով դողում էր, ուզում էր մեռնել: Ինչպե՞ս բացատրեր այս ամենը Մարկոսին Կհավատա՞ր արդյոք: Մի պահ սթափվում է, հիշում է հորը, եղբայրներին: Միգուցե Մարկոսն արդեն ամեն ինչ գիտե՞: Բա որ կատաղած Մարկոսը սպանի հորն ու եղբայրների՞ն. Սարսուռ է անցնում ամբողջ մարմնով Ընկել էր ամբողջ մարմնով մոր գերեզմանաթմբի վրա ու գոռում ամբողջ ձայնով: Նրան մի պահ թվում է, թե մայրն է իր հետ խոսում. «Գնա և վրեժ լուծիր, դու դեռ երիտասարդ ես, դեռ շատ դոներ պիտի բացվեն քո առաջ, դեռ շուտ է մահը»: Նա սթափվում է, իր մեջ ուժ առնում և արագ քայլերով, առանց ետ նայելու գնում գյուղ: Երբ ներս է մտնում, բոլորը զարմացած նայում են նրան: Ի՞նչ էր պատահել, ինչո՞ւ էր այս ուշ ժամին Սաթոն եկել: «Սաթո, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես այդպես հուզվաց», հարցնում է Եգորը: Ոչինչ չի կարողանում պատասխանել: Մոտենում է թախտին, մի փալաս վերցնում և գնում քնելու: Տնեցիները զարմացած իրար էին նայում: Ոչ մեկի մտքով չէր կարող անցնել, թե ինչ է պատահել: Բոլորը սպասում էին, թե ինչ կասի Եգորը. Առավոտյան Եգորը հայտնում է, որ պետք է հեռանան գյուղից: Բոլորը լուռ հնազանդվում են: Կես ժամ անց բոլորը պատրաստ էին: Ճանապարհ են ընկնում: Հայրը բռնում է աղջկա թևը և հուսադրում նրան: Լուսաբացին հասնում են տեղ:

Գյուղի ծայրին լավում էր արաղաղների ձայնը. Նրանց դիմավորում է Եգորի ընկերը: Հրավիրում է



իրենց տուն և ասում. «Չեզ զգացեք ինչպես ձեր տանը»:  
Տնեցիները հարազատորեն շրջապատում են դժբախտ  
ընտանիքին: Գաղտնիքը երկար չես կարող պահել սնդու-  
կում: Նրանք պատմում են ամեն ինչ, պատմում նույնիսկ  
Սուլթան խանի արածի մասին: Լուրը տարածվում է ողջ  
գյուղով: Ամբողջ գյուղը խոսում էր այդ անոթալի արար-  
քի մասին: ;

Սուլթան խանը կատաղած քայլում էր սենյակում:  
Ո՞վ կարող էր այդ լուրը տարածել: Հրամայում է բոլոր  
ծառաներին հեռանալ իր տնից, կարծելով, թե իրենք են  
տարածել: Ծառաները հավաքում են իրենց ունեցած-  
չունեցածը և սպասում, որ խանը պետք է իրենց վերջին  
աշխատավարձը տա. Նրանք չգիտեին, թե ինչ դաժան  
մարդ էր խանը: Նրանց չնչին գումար է տալիս Դա չի  
գոհացնում ծառաներին: Նրանք ուզում էին մնացածն էլ  
պոկեին տիրոջից: Բայց, ավաղ Սուլթան խանը նրանց  
ոչինչ չի տալիս: Միայն խոհարարն էր խորամանկ,  
նա նախօրոք խոհանոցից վերցրել էր այն, ինչ եղել է.  
բրինձ, յուղ, ձավար, որը մի քանի ամիս կբավարարեր  
Ծառաները թքելով տիրոջ դռանը հեռանում են: Ոչ մեկը  
տեղ չունեն գնալու: Նրանցից ավագը Համիդը բոլորին  
տանում է իր տուն: Այնտեղ նույնպես ոչինչ չկար: Կար  
մի հացատուն և գոմ: Համիդը շտապ բերում է սալոնը և  
վառում թոնիրը, որպեսզի նրանք տաքանան: Սալոնը  
վառվում է՝ կենդանություն լցնելով թոնրատունը: Նրանք  
որոշում են, որ պետք է մինչև մահ իրար հետ լինեն:

Արևի ուժեղ ճառագայթներից ձյունը հալվել էր:  
Բոլորն իրենց կտուրի ձյունը մաքրում էին, միայն Սուլ-  
թան խանն էր, որ մնացել էր անօգնական: Անասունները  
սոված էին մնացել, գոմը կեղտի մեջ կորած էր: Ոչ ոք

չէր ցանկանում նրա մոտ աշխատել. Նա ստիպված այլ գյուղերից ծառաներ է բերում: Ո՞ւմ համար էր այդ հարստությունը դիզում: Ոչ կին ուներ, ոչ երեխա: Ոչ մեկը նրա երեսը չէր ուզում տեսնել: Մարկոսը շատ է ուրախանում, երբ իմանում է, որ Սաթոյենց ընտանիքը լքել է գյուղը: Նա գնում է Երանուհու տուն ձեռքը խնդրելու. Մերժվում է: Երկրորդ, երրորդ անգամ է գնում: Հայրը դուրս է վռնդում Մարկոսին. «Դու կին ու երեխա ունես, ամոթ չունե՞ս: Հաջորդ անգամ ոտքդ կկտրեմ»:

Մեկ ամիս հետո Երանուհին Մարկոսենց տանն էր: Նա փախել էր Մարկոսի հետ Երանուհին նույնպես երջանիկ էր, ինչպես Սաթոն էր երջանիկ այն ժամանակ. Երանուհին մեծ հաճույքով տունը մաքրում էր, հավաքում, խնամում երեխային: Մի խոսքով երջանիկ ապրում էին:

Անցավ մեկ ու եկա տարի: Երանուհին մի աղջիկ է ունենում, անունը դնում Սաթո. Ալիկն արդեն մեծ երեխա էր, սիրում էր քրոջը, երբ քույրը լացում էր օրորում էր նրան:

Երանուհին տարբերություն էր դնում երեխաների մեջ: Ամբողջ ուշադրությունն իր աղջկա կողմն էր, անտեսում էր Ալիկին. Ալիկն ամբողջ օրը սոված էր մնում: Երբ հայրը տուն էր գալիս, երեխան ազահաբար ընկնում էր սեղանի վրա և ուտում այն, ինչ իրեն էին տալիս: Երանուհին միշտ բողոքում էր. «Ալիկը շատ է ուտում, ամբողջ օրը ծամում է»:

Մարկոսի համար շատ ծանր էր Երանուհուց լսել գանգատներ իր տղայի մասին. Բայց այնքան էր սիրում Երանուհուն, որ չէր հակաճառում:

Երբեմն Երանուհին մտաբերում էր իրեն ուղղված հոր

անեծքները: Վախենում էր և պատկերացնում, որ եթե հանկարծ, Աստված չարասցե, ինքը բաժանվի էլ ի՞նչ երեսով պետք է գնա հորանց տուն.

Փարնան բացվելուն հետ, բացվում է նաև Եգորի սրտի վերքը: Անցել էր մեկ ու կես տարի: Նա մտքին դրել էր անպայման այրել «գազանի որջը»: Նրանք գաղտագողի մոտենում են տանը: Ներս են սողում փշալարի տակից և քանի որ ցանկապատի դուռը փակ էր, անցնում են տան հետևը և այնտեղից ներս մտնում: Եգորը որոշել էր սպանել Սուլթան խանին և Մարկոսին. Եգորը զգուշությամբ մտնում է ներս. Տեսնում է Սուլթան խանին քնած, թուրն էլ գլխի վերև կախված: Եգորը որոշում է իր սրով սպանել խանին, որպեսզի կեղտոտ արյունով չկեղտոտի իր սուրը: Վերցնում է սուրը և արթնացնում խանին:

Սուլթան խանը, երբ աչքերը բացում է վախից քարանում է, բայց երբ տեսնում է Եգորը ծիծաղում է՝ հանգստանում է. «Եգոր ջան, ինչո՞ւ հեռացար, մի՞թե վատ էր քեզ համար, հետ արի, պաշտոնդ կբարձրացնեմ, հող կտամ»: Եգորը թույլ չի տալիս շարունակել: Ինչպե՞ս կարելի էր ներել նման մարդուն. Կատաղած թուրը խրում է սիրտը:

Մտնում է Մարկոսի սենյակ: Քնած էին: Քաշում է վերմակը: Ամուսինները վեր են թոչում: «Մարկոս, ես իմ թշնամուց այսպես եմ վրեժ լուծում, դու արժանի ես սրան» և սուրն առանց վարանելու խրում է Մարկոսի կուրծքը: «Քույրիկ, վերցրու երեխային և դուրս արի տանից, տունն էլ եմ այրելու»:

Աղիողորմ լացելով Երանուհին խնդրում է, որ նախքան տունը այրելը՝ թույլ տա գոնե դիակը դուրս հանի: Եգորն այնքան խղճով էր, որ չի մերժում: Վերցնում է

Սաթոյի երեխային, Սուլթան խանի ոսկյա շղթայով ժամացույցը և դուրս գալիս: Ամեն ինչ կրակի է տալիս: Ողջ գյուղը հավաքվում է հանգցնելու կրակը, բայց զուր էր, միայն գոմն ու անասուններն են կարողանում փրկել Երանուհուն տանում են հարևաններից մեկի տուն Հաջորդ օրը գալիս են ոստիկանությունից: Շատ անմեղ գյուղացիների մեղադրում են սպանության մեջ՝ Ամբողջ մեղքը գցել էին գյուղացիների վրա Ոմանց արքայուն են, մյուսների վրա ծանր հարկեր դնում՝ Ոմանք էլ ուրախ էին, որ վերջապես ազատվեցին Սուլթան խանից

Լուսադեմ էր, երբ եզորենք հասնում են քարանձավ: Նա անչափ ուրախանում է՝ հորը, եղբորը և քրոջը տեսնելով քարանձավում: Սաթոն տեսնելով Ալիկին, անչափ ուրախանում է: Գրկում է երեխային, եղբորը ու համբուրում: Ի՞նչ էր այլևս պետք Սաթոյին: Երեխան իր հետ էր: Բանից անտեղյակ Սաթոն հարցնում է. «Եզոր ջան, այդ ինչպե՞ս հաջողվեց, ախպեր ջան»: Եզորը պատմում է ամեն ինչ: Այնքան ուժեղ էր նրա ատելությունը, որ եղածից հետո էլ չէր հանգստանում: Ոսկյա շղթայով ժամացույցը հանում և քարով ջարդուփշուր է անում: Սաթոյի ուրախությանը չափ չկար, երեխան իր մոտ էր: Ալիկը կարծես մորը չէր ճանաչում, այնպես էր նայում, կարծես օտարի մոտ էր գտնվում. Նա շատ ծանր է տանում, երբ իմանում է, որ եղբայրը սպանել է Մարկոսին: Նա դեռ սիրում էր ամուսնուն: Նա որոշում է գնալ մոր գերեզմանին:

Մթնշաղ էր, երբ հասան գերեզմանոց: Սաթոն մոտենում է հողաթմբին և փռվում սառը հողի վրա: Այնքան էր լցված նրա սիրտը, որ մի կուշտ լացում է: Անիծում է իր բախտը: Այդ պահին նկատում է մի կնոջ, որը

երեխայի հետ արտասվում էր Մոտենում է նրանց ու հարցնում. «Քույրիկ, քո ի՞նչն է այդ մեռնողը» «Ամուսինս է, ավազակները հարձակվեցին Սուլթան խանի տան վրա՝ սպանեցին ամուսնուս և նրան, հետո այրեցին տունը: Հիմա ես ոչ մի տեղ չունեմ գնալու, հայրս չի ընդունի»: Սաթոն այս ամենը լսելով ուշակորույս ընկնում է գերեզմանաթմբի վրա «Քույրիկ, մի՞թե դուք ճանաչում էիք Մարկոսին, կամ բարեկա՞մ եք», - հարցնում է Երանուհին: «Ոչ, սիրելիս, ես լացում եմ քո կորցրած սիրո համար»: Ո՞վ կարող էր պատկերացնել, որ օրերից մի օր պետք է հանդիպեին իրար Սաթոն էլ էր կին, հասկանում է Երանուհուն և ցավակցում Երանուհին ոչ մի տեղ չունեի գնալու, հայրը չէր ընդունի, իսկ նա գոնե լքված չէր հարազատների կողմից Իրոք, որ Երանուհին մեղք էր, նրա միակ մխիթարանքը Մարկոսն էր Սաթոն իմանալով, որ Երանուհու աղջկա անունը Սաթո է, շատ է հուզվում, սկսում է արտասվել Երանուհու մոտ էլ է հետաքրքրություն առաջանում, թե ով է այդ կինը, որ լաց է լինում գերեզմանաթմբի վրա պառկած. Սաթոն ոչինչ չի ասում: Համբուրում է գերեզմանաթումբը ու լուռ հեռանում: Ճանապարհին նա հոր ոչ մի հարցին չի պատասխանում: Վերջապես հասնում են քարանձավ: Սաթոն լուռ պառկում է քնելու, սակայն նրա քունը չէր տանում. Ջմշուղը տանջվում էր աղջկան տեսնելով այդ վիճակում: Սաթոն չէր կարողանում քնել, անընդհատ հագում էր: Ջմշուղն անհանգստացած հարցնում է. «Սաթո ջան, միգուցե մրսե՞լ ես, շատ ես հագում» Այլևս անհնար էր քարանձավում ապրել Հարկավոր էր մի տեղ գտնել և տեղափոխվել. Այդ մասին ավելի շատ հոգ էր տանում Եգորը:

Եզորը միջին հասակի, թիկնեղ, խոշոր աչքերով և գեղեցիկ դիմագծերով տղա էր: Իգիթը՝ մյուս եղբայրը, բարձրահասակ էր, նիհար և միշտ տխուր դեմքով, կարծես տան հոգսը միայն իր վրա ընկած լիներ: Մինչդեռ Եզորն ավելի մեծ փորձ ուներ: Ամբողջ տան հոգսը նրա վրա էր ընկած: Վերջապես նրանք ճանապարհ են ընկնում: Անցնում էին շատ դժվար ճանապարհով քարքարուտներով: Լեռան քարերը պոկվում-ընկնում էին նրանց ոտքերի առաջ: Անանցանելի ճանապարհով էին նրանք գնում: Դիմացը մեծ անդունդ էր: Մեկը մյուսից բռնված էին քայլում: Եզորն իր գիրկն էր առել Ալիկին, փշերն ու տատասկները կաշում էին նրանց շորերին, հազիվ էր Սաթոն քայլում: Հոգնել էր Սաթոն, բայց ցույց չէր տալիս, ամաչում էր: Երբ ոտքը դնում է քարի վրա, քարը պոկվում և Սաթոն ընկնում է մեջքի վրա: Եզորը նույնպես վայր է ընկնում, քիչ էր մնում գլորվեին անդունդը: Նրանք վնասվածքներ են ստանում: Սաթոն մի կերպ վեր է կենում, անտեսելով մարմնի ցավերը: Միայն Ալիկն էր, որ չէր զգում, թե ինչ բան է դժվարությունը:

Մութ էր, բոլորը նստել էին հանգստանալու. Սաթոն չէր կարողանում հանգստանալ, նրա աչքի առաջ անընդհատ Երանուհին էր հայտնվում. Սաթոն գլուխը հենել էր Եզորի ընկերոջ Միքայելի ուսին: Միքայելը նույնպես բաժանված էր կնոջից. Միքայելը բաժանվել էր դավաճանության համար: Նրան տեսել էր մի հարուստի գրկում: Նա թողել էր տուն ու տեղ, և հեռացել: Միքայելը Եզորի հարազատ ընկերն էր: Միքայելը հավանում էր Սաթոյին և շատ կուզեր ամուսնանալ նրա հետ, բայց չէր համարձակվում առաջարկություն անել: Երբ բոլորը քնած էին, Միքայելն օգտվելով առիթից գլուխը իջեցնում

է Սաթոյի կողմ ու համբուրում է Սաթոն քնած էր: Մեկ ժամ հետո Եգորը ձայն է տալիս բոլորին: Անհրաժեշտ էր գիշերով ճամփա ընկնել:

Եվ ահա լուսադեմին արդեն ներքևում էին, անդունդի եզրին: Այստեղ նույնպես կանգ են առնում հանգստանալու, հաց են ուտում, այնուհետև շարունակում ճանապարհը: Հարկավոր էր զգուշություն, նրանք կարող էին անդունդը գլորվել: Մնացել էր 100 մետր: Այդ պահին նրանց գլխի վերևով մի թռչուն է անցնում: Սաթոն այնպես է տարվում թռչունով, որ քիչ էր մնում ընկներ անդունդը, եթե Եգորը չբռներ Եգորը միայն Սաթոյին կարողացավ փրկել: Խեղճ երեխան Ալիկը, չի կարողանում բռնել մորից և մի ճիչ արձակելով ընկնում է անդունդը: Խելքը թռցնում է Սաթոն, երեխան չկար: Ուշաթափվում է: Եգորն իրեն էր մեղավոր համարում և ամբողջ կյանքում նա չէր կարող իրեն ներել Սաթոն խելագարի նման այս ու այն կողմ էր վազում, ուզում էր իրեն զցել անդունդը: Ինչի՞ն էր պետք իր կյանքը. Կորցրեց ամուսնուն, երեխային. Կպել էր քարին ու չէր բաժանվում քարից: Իր երեխային ինչպե՞ս թողներ, հեռանար: Մի կերպ Եգորը Սաթոյին համոզում է վեր կենալ տեղից և շարունակել ճանապարհը: Փալիս, հասնում են Մուշ: Այնտեղ պետք է բնակվեին:

Գեղեցիկ էր Մուշը, հատկապես գարնանը: Այնտեղ մի փոքրիկ տուն, հողամաս են վերցնում: Ամեն մեկն անցնում է իր գործին՝

Ջմշուդը հող էր մշակում, տունը վերանորոգում, իսկ Սաթոն տնային գործերն էր անում. Սաթոն նկատում էր, որ Միքայելն իր նկատմամբ անտարբեր չէ: Միքայելը փորձում էր մխիթարել Սաթոյին, որ կյանքը դեռ առջևում

է, բայց Սաթոն ոչինչ լսել չէր ուզում Մի անգամ, երբ տանը մարդ չկար, Միքայելը ներս է մտնում և խոստովանում իր սերը: Դա անակնկալի չբերեց Սաթոյին. Նա մերժում է: Ինչպե՞ս կարող էր այդքանից հետո համաձայնել ամուսնության: Միքայելը խնդրում-աղաչում է Բայց ապարդյուն:

«Միքայել, խնդրում եմ, ինձ մի տանջիր. Ես քեզ որպես եղբայր եմ ընդունում, ես չեմ ցանկանում երկրորդ անգամ ամուսնանալ, մի ստիպիր ինձ, խնդրում եմ», - ասում է Սաթոն: Միքայելի աչքերին արտասուք է երևում. Նա մի պահ հիշում է Մարկոսին, նա էլ էր խնդրում իրեն ամուսնանալ, բայց հետո ի՞նչ եղավ. Միքայելը շատ տխուր էր և որոշում է խոսել Եգորի հետ. «Ուզու՞մ եք Սաթոյին ամուսնացնել», - հարցնում է Միքայելը: «Իհարկե, մի հարմար տեղ լինի, այսօր էլ կամուսնացնենք», - ասում է Եգորը: « Իսկ կուզե՞ս Սաթոն ամուսնանա և մնա քո մոտ և որպես քույր, և որպես օգնական»: «Իհարկե կուզենամ», - ասում է Եգորը. «Իսկ ի՞նչ կասես, եթե քո փեսան լինի քո ընկերը, այսինքն ես», վախվորած հարցնում է Միքայելը Իհարկե Եգորը շատ կուզեր, հայրը նույնպես՝ Ջնշուդը ուզում էր որ աղջկան երջանիկ տեսնի. Նրանք կուզենային, որ Սաթոյի սրտովը լինի՝ Միքայելն իրեն մխիթարում էր բա հո աղջիկը միանգամից չի՞ համաձայնվի Նա դեռ հույսը չէր կտրել. Մի օր կհամաձայնվի. Սաթոն վախենում էր մեկ անգամ ևս դժբախտանալ: Նա չէր ուզում ամուսնանալ: Ի՞նչ կարող էին անել տնեցիները: Միգուցե Սաթոն չի ուզում նրան, հո զոռով չի՞ լինի Սաթոն կտրականապես մերժում է Միքայելին: նա որոշում է մի տեղ մտնել աշխատելու: Երբ հայրը լսում է, չգիտեր ինչ ասեր. « Աղջիկս,



որտեղ ես, այնտեղ՝ դու: Եթե չես ուզում ամուսնանալ, ես չեմ ստիպի»:

Ծանր էր Միքայելի համար, նա տանջվում էր: Որոշում է այլևս Սաթոյենց տուն չգնալ. Միայն հեռվից էր հետևում Սաթոյին: Կարոտում էր նրան: Գիշերները չէր կարողանում քնել. Միքայելը բնակություն է հաստատում մի պառավ կնոջ մոտ Աշխատում էր, և ամեն անգամ Եգորին հանդիպելուց հարցնում էր տնեցիներից: Մի անգամ, երբ դաշտում հունձ էր անում, լսում է կանացի մի ճիչ. Վազում է ձայնի ուղղությամբ և ի՞նչ է տեսնում. թուրք զինվորը մի աղջկա էր քաշքշում: Կատաղած Եգորը մանգաղով կտրում է թուրքի վիզը և փրկում աղջկան, իսկ թուրքի դիակը ընկերների օգնությամբ թաղում ու հեռանում են:

Եգորի և Միքայելի հարաբերություններն էլ ավելի են լավանում, երբ ծառայության են մտնում Ղուլի մոտ: Մի անգամ, երբ նստում են հանգստանալու, հանկարծ Եգորը մեծ ձկներ է տեսնում լճում, որը կկշռեր 9կգ. Եգորը շտապ պարան է ճարում և ընկերներին խնդրում, որ իրեն իջեցնեն ներքև. Հարմարվելով մի քարի՝ սպանում է երեք ձուկ: Եփում են ձուկը, մի հատ էլ տանում է փաշային: Չուկը շատ համեղ էր: Հաջորդ օրը փաշան Եգորին նորից է կանչում իր մոտ և ձուկ է ուզում, ցույց տալով ավելի մեծ ձկների տեղ. Ղուլի բանակում ամեն ազգի մարդիկ կային: Ղուլի մորեղբայրը, որը նույնպես մեծ զորք ուներ, լուր է ուղարկում իր քրոջորդուն, որ կռվի է գնալու իր եղբոր վրա: Ղուլը գնում է տուն և մորն ասում. « Մայր, կռվի եմ գնում և երեք օր հետո եղբորդ գլուխը կբերեմ»:

Մայրը լաց է լինում, ընկնում է տղայի ոտքերը, բայց

անհնար էր համոզել Ղուլին: Սկսվում է կռիվը: Ղուլի խմբում էին Եգորը և Միքայելը. Սկսվում է կատաղի կռիվը: Ջրնգում են թրերը, խրխնջում են ձիերը, սպանում են մեկը մյուսին. Սկզբում կարծես թե հաղթանակը Եգորենց կողմն էր: Սարսափելի էր կռիվը. Եգորը կռվում էր ցուլի նման: Եղան զոհեր ու վիրավորներ. Վերջապես կռիվը դադարում է:

Այդ օրն այնքան տխուր էր բոլորի համար ամեն մեկն իր մեռելով էր զբաղված, թաղում էին սպանվածներին. Կռիվը կրկին շարունակվում է Երեք օր շարունակ կռվում էին նրանք գիշերը հանգստանում էին, ցերեկը՝ կռվում: Փոշու ամպերը խառնվել էին իրար, մարդիկ կորել էին փոշու մեջ: Անխնա սպանում էին մեկը մյուսին: Վերջապես թշնամու զորքերը նոսրանում են և մյուսներն էլ խուճապի մատնվում: Վրանում միայն Ղուլի եղբայրն էր մնացել՝ իր մի քանի թիկնապահներով: Փաշան կարգադրել էր կենդանի բռնել մորեղբորը: Շուտով բերում են Ղուլի մոտ: «Չմայած դու իմ հարազատն ես, բայց ես քեզ երբեք չեմ ների և հինգ թույլե հետո գլուխդ կլինի քրոջդ ծնկներից», կատաղած ասում է Ղուլը. Նա իր խոսքի տերն է լինում, կտրում է մորեղբոր գլուխը, փաթաթում մի շորի մեջ և դուրս գալիս:

Հնչում են շեփորները, զորքը պատրաստվում է հեռանալ: Գյուղ հասնելուն պես Ղուլը մոր մոտ է գալիս և ոտքերի առջև զգում կտրված գլուխը: Մայրը սարսափում է՝ տեսնելով եղբոր գլուխը:

Այդ կռվում Միքայելը թեթևակի վիրավորվել էր թևից: Եգորն ու հայրը տխրել էին, տխրել էր և Սաթոն, բայց ցույց չէր տալիս:

Առավոտյան, երբ բոլորն արթնանում են, Եգորը

գնում է մոտակա աղբյուր՝ լվացվելու: Այդ ժամանակ նրան մոտենում է շեկ մազերով մի աղջիկ և հարցնում. «Եղբա՛յր, այստեղ եմ կորցրել իմ վզնոցը, տեսե՞լ եք»: Աղջիկն արտասովելով փնտրում էր իր վզնոցը. Դա աղջկա խորթ մորն էր, նա թաքուն էր վերցրել, չմտածելով, որ կարող էր կորցնել: Եգորը խոստանում է էլ ավելի լավ վզնոց տալ աղջկան. Չինարը հրաժարվում է. Եգորը նայում է նրան ու աչքը չէր հեռացնում նրանից: Չինարը շատ գեղեցիկ էր: Եգորը նստում է նրա կողքին և համոզում, որ չլացի: Չինարը ամոթխած հետ է քաշվում և վախեցած ասում. «Ամոթ է, մայրս կնկատի». Եգորը բռնում է նրա ձեռքը և ասում. « Չինար, եթե վախենում ես գնանք այն թփերի մեջ»:

Երկուսով տեղավորվում են մի թմբի վրա: Եգորն այլևս անկարող էր հանգիստ նստել Չինարի մոտ: Ամուր գրկում է աղջկան և համբուրում նրա կապույտ աչքերը. Չինարը անկեղծորեն պատմում է, որ ինքը աղքատ ընտանիքից է: Նրա անկեղծությունը դուր է գալիս Եգորին:

Ժամանակն է տուն գնալու. Երկար ժամանակ Եգորը չէր կարողանում աչքը նրանից կտրել: Երկար ժամանակ նայում էր նրա ետևից: Եգորն իր շուրթերի վրա դեռ զգում էր Չինարի այտերի հպումը. Երբ տուն է գալիս, ուզում է սիրտը բացել Սաթոյի առջև: Սաթոյին թվում է, թե Միքայելի մասին պետք է խոսեին, բայց ոչ. Եգորը խոստովանում է, որ սիրահարված է, պատմում է կատարվածը: Սաթոն ուրախանում է. փաթաթվում է եղբոր վզին. վերջապես եղբայրը պետք է երջանկանար: Հաջորդ օրը Եգորը գնում է Չինարի ետևից. Ճանապարհին հանդիպում է եղբորը՝ քիթ-մուրը արյունլվա: Նա խստոնվում է

կովին և ազատում եղբորը: Իգիթը հետո պատմում է, որ կոիվը եղել է շատ հասարակ բանից: Մի փոքրիկ տղա ուզեցել է վերցնել ճիպոտը, Իգիթը թույլ չի տվել: Վրա են հասել երկու տղաներ և սկսել ծեծել Իգիթին:

Քիչ այն կողմ հավաքվել էին մի քանի աղջիկ և վիճակ էին հանում: Եզորը մոտենում է նրանց, կարծելով, թե Չինարն էլ այնտեղ կլինի Երբ Եզորն ու Իգիթը մոտենում են նրանց, նրանք լռում են. Այդ վիճակահանությանը նրանք էլ էին ուզում մասնակցել. Եզորն իր մատից հանելով մատանին՝ գցում է փարչի մեջ: Այդ պահին նրանց են մոտենում Միքայելն ու իր ընկերը: Այդտեղ էր նաև Չինարը, որն ամոթից գլուխը կախել էր: Աղջիկները սկսում են վիճակ հանել: Ընկերները զգացել էին, որ Եզորը աչքը չէր կտրում Չինարից: Նա Միքայելին խոստովանում է, որ սիրահարվել է: Միքայելը այդ լսելով, մի խոր շունչ է քաշում: Եզորը նկատելով այդ, սիրտը կասկած է ընկնում՝ միգուցե Միքայելն էլ էր սիրում Չինարին:

Եզորը չէր սխալվում: Եզորը նույնպես անտարբեր չէր Չինարի նկատմամբ: Բայց դա բոլորից թաքուն էր պահել: Եվ ահա զուգադիպություն ընկերն էլ էր սիրահարվել իր սիրած աղջկան: Միքայելը խոստովանում է, որ ինքն էլ ժամանակին սիրել է Չինարին:

«Հայրիկ, գնացել էինք աղջիկ փախցնելու, բայց չհաջողվեց, այնտեղ Իգիթը վնասվածք ստացավ»: Հայրը իմանալով տղայի մտադրությունը, որոշում է գնալ Չինարենց տուն: Եզորն անհանգիստ էր. Ելումուտ էր անում, տեղը չէր գտնում, արդյոք ի՞նչ պատասխան կտան:

Ջմշուղը մոտենում է Չինարենց ցանկապատին: Կատաղած շանը սաստելով, Չինարի ծնողները Ջմշու-

դին տուն են տանում: Ջմշուդը աչքի տակով նայում էր շուրջ բոլորը, փնտրում էր հարսին: Ջմշուդն ասում է, որ եկել է իր աղջկա ետևից: Ուզում է պսակի տղային: Հայրը համաձայնվում է, բայց պետք էր նաև աղջկա կարծիքը: Նրանք որոշում են հաջորդ օրը հանդիպել իրենց ընտանիքներով:

Ահա և գալիս է այդ օրը: Բոլորն անհամբեր էին: Աղջկա ծնողները հավանում են Եգորին: Երբ Չինարը ներս է մտնում, երկուսի սրտերն էլ ուժեղ բարախում էին, երկուսն էլ ուրախ էին: Երկուսն էլ տարվել էին միմյանցով, այնքան էին տարվել, որ միայն առավոտյան զգացին, որ երկուսն էլ սոված են մնացել: Առավոտյան դուռը թակում է Չինարի խորթ մայրը: Երբ դուռը բացվում է, նա փաթաթվում է Չինարին և երկուսով արտասովում են: Խորթ մայրը միգուցե ուզում էր մեղքերի թողություն աներ: Եվ, իրոք, դա այդպես էր: Խորթ մայրը միշտ էլ նեղել է Չինարին: Նա պատմում է, թե ինչպես այն ժամանակ, երբ մանյակը կորցրել էր, խորթ մայրը փակել էր մառանում և ամբողջ օրը սոված թողել: Նա շատ դառը օրեր էր անցկացրել: Եգորը մխիթարում է նրան և խոստանում, որ ամեն ինչ իր տեղը կընկնի: Նա կերջանկացնի իրեն: Նրանք մի սենյակում էին քնում, բայց Չինարը ամեն կերպ խուսափում էր նրա հետ մերձենալուց:

Կեսգիշեր էր: Չինարը շորերով պառկում է և հանկարծ ինքն էլ չիմանալով, թե ինչպես՝ քնում: Եգորը կամաց մոտենում է նրան, հանում շորերը և զնայված երկար ժամանակ նայում Չինարի մերկ մարմնին: Երբ արթնանում է, ամաչում է՝ իրեն տեսնելով մերկ: Չինարը շատ է ամաչում և խնդրում է Եգորին, որ չասի մորը,

որ իրար հետ են քնել: Չինարն իր ամուսնու հետ որոշում է գնալ զբոսնելու: Նա հագել էր չթից ծաղկավոր մի գեղեցիկ շոր, գլխին կապել կապույտ գլխաշոր, որի տակից կախվել էին հյուսերը. Գեղեցիկ էր այդ շորով Չինարը: Նրանք գնում են զբոսնելու: Երկար ժամանակ լուռ քայլում էին, վերջապես Չինարը խախտում է լռությունը: Նա մի երեքնուկ է պոկում, մտքում մի բան պահում և տալիս, որ Եգորը պոկի: Եգորը պոկում է, իսկ Չինարը ժպտալով ասում է, որ այդ թերթիկը ինքն էր:

Արդեն ուշ էր, իսկ Եգորը գնալու մտադրություն չուներ: Վերջապես հասնում են տուն: Մութն ընկել էր, աստղերը փայլում էին երկնքում, քամին մեղմ օրորում էր ծառի ճյուղերը: Գյուղում լռություն էր տիրում: Նրանք տուն են մտնում: Եգորն այնքան զգույշ է մտնում, որ չէր ուզում տնեցիներին արթնացնել: Կատուն, որ սեղանի վրա էր բարձրացել, ցատկելով սեղանի վրայից, զգում է կավե ամանը: Բոլորը վախեցած վեր են թռչում: Պառկում են քնելու: Միքայելն անչափ տխուր էր, Եգորը չի համարձակվում նրան հայտնել իր ամուսնության մասին: Միքայելին հրավիրում է իրենց տուն. Միքայելի համար դժվար էր գալ այդ տուն, չէ՞ որ նա Սաթոյից մերժվել էր. Մտնելով տուն, առաջին հերթին շնորհավորում է Ջնշուղին՝ տղայի նշանադրության առիթով: Ջնշուղը տեսնելով Միքայելի շփոթված հայացքը, նրան մխիթարելու համար ասում է. «Հիմար աղջիկը վախեցած է, չի համաձայնվում, ինձնով որ լիներ, ես շուտ էի համաձայնել»: «Է՛հ, հայրիկ, չի ուզում, թող չուզի, ուրիշին կուզեն», - բարկացած ասում է Միքայելը:

Սաթոն լսելով այս խոսքերը, կարծես թե զգաստանում է: Քիչ էր մնում մտներ ներս և իր համաձայնություն-

նը տար: Երբ սեղան էր գցում, Սաթոյի ձեռքերը դողում էին: Միքայելը այսպիսի անհարմար վիճակում երբևէ չէր եղել: Նա գղջում էր, որ եկել էր Սաթոյենց տուն: Վերջին բաժակը խմելով՝ դուրս է գալիս. Սաթոն ողջ գիշեր չի կարողանում քնել: Քունը փախել էր նրա աչքերից՝ Նրա ամբողջ մտածմունքը Միքայելն էր, պատկերացնում էր նրան մի այլ կնոջ հետ. Չանազան մտքեր էին տանջում: Սաթոն մինչև լուսաբաց արթուն էր: Այդ գիշեր մտածմունքի մեջ էր ընկել նաև Միքայելը: Նա տանջվում էր այն մտքից, որ Սաթոն իրեն մերժել է: Որոշում է այլևս այնտեղ չգնալ:

Հաշված ժամեր էին մնացել Չինարի հարսանիքին: Նա և՛ տխուր էր, և ուրախ: Տխուր էր, որովհետև բաժանվում էր հորական տնից, ուրախ որ վերջապես կերջանկանա: նա խնամքով հանում է մոր փոշոտված նկարը, երկար նայում ու արտասվում: Այդ րոպեին ներս է մտնում Չինարի խորթ մայրը. «Բավական է լացես, շուտով հարսանքավորները կգան ու կտեսնեն կարմրած աչքերդ», - ասում է խորթ մայրը:

Շուտով լսվում է գուռնա-դիռլի ձայնը: Գալիս են հարսանքավորները, հագցնում են հարսին, հետո ուղևորվում դեպի եկեղեցի: Ուրախ հարսանիք է լինում: Այդ գույզն ապրում է ուրախ ու երջանիկ: Ինն ամիս հետո Չինարը արու զավակ է պարգևում Եգորին: Երեխան շատ նման էր Սաթոյի մեռած երեխային Ալիկին: Ամեն անգամ Սաթոն հիշելով իր որդուն՝ լուռ արտասվում էր ու ողբում իր բախտը:

Սաթոյի քսան տարին նոր էր լրացել, բայց նա այնքան դժբախտ էր իրեն համարում,

որ չէր համարձակվում նորից ամուսնանալ: Նրա

աչքի առաջ միշտ իր ամուսինն ու երեխան էին գալիս: Նա այնքան լռակյաց էր դարձել, չուներ ոչ մի ընկերուհի, որի հետ կարողանար կիսվել: Մի օր Սաթոն իջնում է անտառ: Հիշողություններն ու կսկիծը տանջում էին նրան: Այնտեղ նա մի կուշտ լացում է, հիշում անցյալը: Ինչի՞ն է պետք իր կյանքը, ո՞ւմ է պետք այլևս: Մոտենում է գետին, վերջին անգամ կարոտով նայում ծառերին:

Միքայելը նույնպես անտառ էր եկել: Նա նկատում է Սաթոյին: Մինչ նա մտածում էր, թե ինչպես մոտենար Սաթոյին, տեղի է ունենում անսպասելին. Սաթոն այլևս չկար, նա իրեն գետն է գցում. Միքայելը խելագարի պես թռչում է մեկ այս կողմ, մեկ այն կողմ: Ի՞նչ կարող էր անել: Վերջացել էր ամեն ինչ:

Միքայելը չգիտեր ինչ անել, ինչպես հայտներ Եգորենց: Վախովիսելով մոտենում է Եգորենց տանը և հայտնում կատարվածը: Բոլորը կայծակի նման դուրս են գետնում: Չէին հավատում: Միքայելը ուղեկցում է նրանց գետաբերան: Այնտեղ գտնում են Սաթոյի գլխաշորը: Եգորը կատաղած նայում է Միքայելին, մի՞թե նա չէր կարող փրկել քրոջը: Ձկնորսները շուտով գտնում են Սաթոյի դիակը:

Արյան մի տաք հոսանք է անցնում Եգորի մարմնով, իրեն չկորցնելով՝ գցում է գետը և այնտեղից հանում քրոջ սառը դիակը: Եղբայրը առանց հասկանալու հարձակվում է Միքայելի վրա, սկսում բռունցքներով հարվածել: Ընկնում է քրոջ դիակի վրա և աղիողորմ լացում:

Գիշեր էր: Օրը մութ ու ամպամած էր, աստղերը բոլորովին չէին երևում: Բոլորը քաշվել էին մի կողմ և ողբում էին Սաթոյի մահը: Միքայելը մեռած էր, թաղված չէր: Նա վերջին անգամ մոտենում է դիակին, հպվում



նրա շուրթերին և այդպես էլ մնում դիակի վրա: Ջնշուղը մոտենում է Միքայելին, որպեսզի վեր կացնի. Եվ ի՛նչ: Միքայելը մեռած էր: Բոլորը զարմացած իրար երես էին նայում:

Ահա ևս մեկ գոհ: Միքայելը ոչ մի ազգական չուներ: Ջնշուղը պետք է թաղեր: Երկու դիակ դրված էր կողք-կողքի: Մարդիկ ցավով էին նայում երկու ջահելներին: Շշուկներ էին տարածվում, թե իբր Ջնշուղն է սպանել նրանց, որովհետև Ջնշուղը համաձայն չէր նրանց միությանը:

Այդ օրը անձրևոտ օր էր: Երբ դիակները իջեցնում էին փոսը, Ջնշուղը մոտենում է դիակներին, վերջին անգամ համբուրում, ձեռքերով հող է լցնում նրանց գերեզմանին. Մեծ դժվարությամբ են նրան պոկում դիակներից

Մնձրևոտ էր օրը, թրջվել էր ամբողջ հողաթումբը, նույնիսկ երկինքն էր լացում այդ դժբախտների համար:

Ջնշուղը խելագարվել էր: Նա անհիմաստ մեկ ծիծաղում էր, մեկ՝ լալիս:


Չանցած մեկ ամիս հովիվները գտնում են Ջնշուղի դիակը: Խեղճ ընտանիքը մինչև այսօր էլ դժբախտությունից չի ազատվում:

Հ.Գ.- Այս պատմությունը իրական դեպք է, որը պատմել է ամուսնուս պապը: Այնքան էր ազդել այս պատմությունն ինձ վրա, որ ես որոշեցի այն գրի առնել: Դա մի դառը ճակատագիր էր, որ բախտ էր վիճակվել այս ընտանիքին: Իսկ ճակատագրից հեռու չես փախչի:

Անցել են տարիներ: Նրանք Մուշից տեղափոխվել են Եր ան: Տարիներ հետո Իգիթն էլ է ամուսնանում: Ունենո յ է յոթ երեխա: Երեխաների անունները դրել է իր մահացած հարազատների անունները:



# Երվանդանյան Ռեզնանս





## ՏԱՏԻՍ ՊԱՏՄԱԾԻՑ

Մեր գյուղում մի լավ ջահել կար, անունը՝ Սարգիս: Նա շատ հումորով, ջիգյարով, շատ ու շատ բարի ու լավ մարդ էր՝ ջահել, գեղեցկադեմ ու բարեկամասեր: Նա ամեն առավոտ ձիով այցելում էր բարեկամներին, բարի լույս ասում՝ «ինչ կա, չկա» ու գնում:

Մի առավոտ հայրս ու մայրս ճանապարհում էին իրենց տուն գիշերած Ախալքալակի Գոման գյուղի բնակիչ Արսենի ընտանիքին: Մոտենում է Սարգիսը և ասում մորս.— -Աշխեն քույրիկ, ովքե՞ր էին դրանք. Մայրս պատմում է.

- Սարգիս ջան, սրանք մեր մոտ ծանոթներն էին՝ Հարսը ու՞ր տարի է, երեխա չի ունենում, գնում են Գյումրի՝ Սուրբ Սարգիս մոմ վառեն, մատաղ անեն, որ հարսը երեխա ունենա:

Այսքանը իմանալով ձին քշում է ուխտավորների հետևից և գոռում.

- Ախալքալակցի Արսեն, ո՞ր ես գնում այս շոգինկրակին, հե՛տ նայիր, քո հետ խոսում է Սարգիսը, քո հարսը հղի է, ցած իջե՛ք: Հարս ջան, արի առաջ:

Հարսը մեխանիկորեն իջնում է սայլից ու գալիս է դեպի Սարգիսը. Սարգիսը ձեռքը դնում է գլխին և ասում.

-Աղջիկ է դեմից, դե հիմա հետ գնա:

Հարսը գնում է դեպի սայլը

-Ա՛յ հիմա էլ տղա է,- ասում է Սարգիսը և հրամա-

յում. Դե, շուտ հետ դարձեք ու մատաղը արեք, որտեղ իջևանել եք:

Սրանք եզների գլուխը դարձնում են դեպի Ղզղոչ գյուղ: Մայրս մեկ էլ հետ է դառնում և զարմացած նայում:

-Էս ի՞նչ բան է, կես ժամ չկա,որ ճանապարհ է դրել:

-Ի՞նչ է պատահել,- վախեցած դեպի սայլն է գնում մայրս և զարմացած նայում է ձիու վրա նստած ուրախ դեմքով Սարգսին ու հարցնում.

-Ի՞նչ է եղել.

Սարգիսը հանգիստ պատասխանում է.

-Աշխեն քույրիկ, պղինձը հանի, մատաղտ այստեղ ենք անելու, որովհետև հարստ հղի է, գուր են գնում Սուրբ Սարգիս:

Մայրս հավատում է Սարգսին, քանի որ նա ինչ ասում է, կատարվում է, բերանից ինչ դուրս է գալիս, կատարվում է: Մայրս նայում է ուխտավորների ուրախ դեմքին և ասում.

-Դե՛ տարեք գառը ժամի բոլորը յոթ անգամ պտտեք, նոր բերեք, մորթեք:

Նրանք կատարում են նաև մորս ասածը և մատաղի արարողությունը վերածվում է աչքալույսի և ուրախության: Կանչում են նվագողներ և մինչև կես գիշեր երգով-պարով ուրախանում են. Առավոտյան մայրս, հայրս ճանապարհում են դեպի Գոման գյուղը: Անցնում է յոթ ամիս: Մեկ էլ սայլը բարձած կանգնում է մեր դուռը: Դուրս են գալիս, ի՛նչ տեսնեն՝ Արսենն է՝ սայլը լիքը բարձած նվերներով, կարտոֆիլով, եկել է Սարգսին տեսության և քավոր դարձնելու իր զույգ թռռներից: Ծնվել էր զույգ երեխա՝ Մարիամ և Սարգիս: Նա եկել էր սրտանց

իր ուրախությունը կհսելու: Եվ այդպես շարունակ Սարգիսը ապրում էր գյուղում և լավ բաներ երբ ասում էր, Աստված էլ իր ասածները կատարում էր:

Սարգսին էլ հանդիպեց դաժան ճակատագիրը, քանի որ արքայի դառը կորիզը իրեն էլ բաժին ընկավ: Նրան էլ տարան ու այլևս հետ չեկավ, բայց նրան ճանաչողները ցավով են խոսում այդ դառը ճակատագրի մասին, որ արժանի չէր այս բախտին: Այդքան բարի, կամեցող, շատ բարեկամասեր ընկեր որպես, անշահախնդիր մարդ և այդքան դառը ճակատագիր:

## ՄԵՐ ԳՅՈՒՂԸ

Բերքահավաքը վերջացել էր և շատ առատ: Յորենն ու գարին լցրել էին գյուղի եկեղեցու մեջ, համարյա մինչև խորանը և սպասվում էր առատ աշխօրին մեծ բաժին: Բայց ուշանում էր բերքի բաշխումը, քանի որ դեռ պատրաստ չէր ցուցակը: Այդ ժամանակ հայրս աշխատում էր պահեստապետ և ամեն օր տեսնում էր, թե ինչպես գյուղի ժողովուրդը սոված ու տխուր մոտենում են իրեն և հարցնում.

-Գուրգեն ջան, ե՞րբ ես բաժանելու սոված կոտորվում ենք:

Այն ժամանակ գյուղացու ամեն մի տուն 7-9 երեխա ուներ: Հայրս խեղճացած նայում էր նրանց երեսին և ասում.

-Մի քիչ էլ համբերեք, կլինի,- ու ամենքի գրպանը ցորեն լցնում:

Եվ այսպես շարունակ, ամեն օր: Մի օր էլ մտա-

ծեց.«Այսպես չի լինի մի բուռ ցորենով Մեկ է, գարնան գլուխ ցանում են և մնացածն էլ մզում է ու թափում են»։ Մտածում է, մտածում, ելքը գտնում։ Կանչում է իր հավատարիմ բարեկամ գաղթական Հովհաննեսին և ասում .

-Սանահե՛ր, մի բան եմ մտածել Դու գյուղի աղքատներին լավ ես ճանաչում։ Ուրեմն մինչև իրիկուն նրանց ասում ես, որ գիշերվա կեսին մի մեշոկ վերցնեն և գան եկեղեցու դուռը։ Նայում եք շուրջ բոլորը, դուռը բաց է սուս ու փուս մտնում եք ներս և ամենքդ երեք դույլ ցորեն լցնում եք և նույն ձևով դուրս գնում.

Եվ այդպես էլ անում է։ Համալրում է բոլոր աղքատներին, կիսաաղքատներին չեն ասում, բացառությամբ մեկի Պ. անունով։ Հենց այդ էլ դառնում է դառը դառը իրողություն։ Ամեն ինչ վերջացնում են կեսգիշերվա ուշ ժամին բանալին տանում է, տալիս հորս, ինքն էլ ինքնագոհ գնում է քնելու։ Դեռ երազների մեջ էր, որ թռչում է հրեշտակների հետ, հետն էլ անուշ երգում Մշո երգերից՝ ժպիտը դեմքին, ինքնագոհ։ Կինը ձայն է տալիս.

-Օվնե , Օվնե , վեր կա ց, գյուղսովետ են կանչել։

Վեր է թռչում զարմացած և իսկույն գլխի է ընկնում Վասակ Պ-ի գործն է։

-Իդրա պապու գանգ մլեմ,- ասում է Հովհաննեսը և արագ հագնվում, գնում է գյուղսովետ, ու ինչ տեսնի՝ ամբողջ գյուղն այնտեղ է, շրջկոմից դատախազ, քննիչ։ Հայրս է նստած ու խեղճացած։ Թուրքը բերանում չորանում է, ասում է՝ ինչ է եղել լա՛ո, ընչի՞՞ եք խառնվել։

Քննիչն ասում է սուրբ մարդ ես քեզ ձևացնում, բայց ամբողջ գիշեր ցորեն ես բաժանել ու հանգիստ խղճով քնել։

-Հա՛, լա՛ո, մռնիմ քզի, հրեշտակների հետ թռչում էի ու



մեր երգրի երգերն էի երգում:

-Չայնդ կտրի, քեզ միամտի տեղ մի դնի, հրեշտակիս նայի, ո՞վ է տեսել գող հրեշտակ,- սաստում է քննիչը և խեթ նայում Հովհաննեսին:

Հովհաննեսը մտքում գտնում է, որ իրենք ճիշտ են եղել, ձայնը բարձրացնելով ասում է.

-Ընկեր քննիչ, օրի՞ իս գոռում, ո՞ւմ իս հավատում վասակ Պ-ի՞ն. Հարուր մարդու գլուխ կերավ, էլի չհանգստացավ,- ու խփեց գլխին, թե ինչի դրան աղքատների շարքին խառնեց, ընկավ կրակը. Ու լոեց.. մտքերով իրեն մեղադրելով նայում էր մեզ ու սիրտը կտոր-կտոր լինում: Յոթ երեխա, բոլորն էլ անչափահաս. Քննիչը նայում է երեխաներին և սիրտը մղկտում է. Մի՞թե ինքն այդքան անխիղճ է, որ այս մարդուն հողով, ջրով կորցնի: Բա երեխե՞քը, ի՞նչ կլինի այս գեղեցիկ, լավ սովորող երեխեքի հետ կխորտակվեն-կզնան. Ու նայելով մեզ, առաջ եկավ ու հարցրեց մորս.

-Քանի՞ երեխա ունես դպրոցական:

Մայրս լացակումած ասաց հինգը լավ սովորող: Քննիչը մոտեցավ մեզ՝ ինձ ու քրոջս, հարցրեց՝ կարո՞ղ եք երգել: Մենք էլ, որպես փրկություն հորս, սկսեցինք երգել Ստալինի երգը

Ով հայր չունի

Գնում է նրա մոտը,

Ով մայր չունի

Առնում է մոր կարտը,

Վարդի նման բուրում է անուշահոտը,

Գեներալ ի սիմուս Ստալինին դուրբան:

Վերջացրինք երգը, տատս սկսեց լացել ու մենք յոթ հոգով, մայրս էլ մեզ հետ, սկսեցինք բարձր լացել: Դա

իսկական մի դրվագ էր 1950թ. սեպտեմբերին: Բոլորը քարացած էին, ոչ մեկը չէր խոսում. Ռայոնից եկածներն էլ իրար երես նայեցին և իրենց կարծիքը որոշելով ասեցին, որ բոլորի տները խուզարկել էին, ում անունը որ տվել էին, ոչ մի բան չէին գտել ու մեր տանն էլ ոչինչ չէին գտել և որոշել էին գործը փակել: Դրսից լսվում էին բացականչություններ, գոռոցներ Պ-ի հասցեին:


Նրանք արձանագրություն կազմեցին, որ ոչ մի հիմք չունեն, ճիշտ է, դուռը բաց է եղել, բայց հենց ինքն է գողացել երկու դույլ ցորեն ու դրա համար հետ բերել ցորենը: Իսկ մեզ էլ մոտեցավ, շոյեց գլուխներս և տատիս ասեց՝ մայրիկ, տար երեխաներին և մի լացեք, քիչ հետո տղադ էլ կգա:

Դուրս եկանք: Ամբողջ գյուղը թափվել էր այնտեղ և մոտենում էին մեզ, համբուրում մորս, տատիս փաթաթվում և հայիոյում վասակ Պ-ին: Մենք շուտով մեր տուն մտանք հանգիստ խղճով: Քիչ անց ներս մտավ հայրս և ասաց, որ 50 կգ ցորեն դուրս գրեցին երեխեքի համար: Ու լցվեց աչքերը արտասունքով՝ հերթով համբուրելուց մեզ: Այդպես էլ ապրեցինք, մինչև չափահաս դարձանք: Քույրերս ամուսնացան գյուղից դուրս, տատս, հայրս մահացան, եղբայրներս քոչեցին գյուղից և հեռացան գյուղի կարոտը սրտներին, իսկ մենք տարին մեկ անգամ գնում ենք գյուղ, այցելում ծնողներիս գերեզմանին, մոտենում փակ դարպասին, արտասվում և մեր պարտքը կատարած վերադառնում Երևան: Ամռանը մեզ հյուր էին գալիս հորեղբորս չորս երեխաները, որոնց հայրս շատ էր սիրում: Հորեղբայրս 1941թ. զորակոչվեց բանակ և հունիսի 22-ին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Հորեղբայրս գյուղում շատ մեծ համբավ ուներ: Ավար-

տել էր Կամերսկի կոչված ինստիտուտը. Ավարտելուց հետո տեղափոխվում է Լենինական և աշխատում Կ.Ե Չ հիմնարկում, որպես գլխավոր ինժեներ: Չորակոչվեց բանակ «Կազաչի պոստում»: Մեկ ամիս մնալուց հետո տեղափոխվեցին ռազմաճակատ. 1943թ. նամակները գալիս էին Կիևից: Նա գրում էր, որ շուտով կհաղթեն, անպայման հանրաճանաչվելու կգա տուն: Մինչև հորեղբորս կնոջ մահը նամակները լրիվ պահում էր, որ միշտ գրում է շուտով կգամ: Սակայն «շուտով գալու» փոխարեն Լենինականում ստացան «սև թուղթը» և իր զինվորական շորերը:

Չորս երեխա՝ մեծ տղան 1935թ ծնված. Կինը աշխատում էր թիկունքում և լավ աշխատանքի համար պարգևատրվել էր մեդալով. Մենք շատ կապված էինք իրար հետ, որպես քույրեր և եղբայրներ: Հայրս նրանց շատ էր սիրում: Վալերը, որ շատ էր նման իր եղբորը, հայրս նրան շատ արտոնություններ էր տալիս և «մեծ ախպեր» էր անվանում: Նրանք էլ մեծացան, տարիներ հետո ամուսնացան եւ, կարևորն այն է, որ Կիևում գտան հորեղբորս՝ Իսահակ Մացակյանի եղբայրական գերեզմանը: 1970թ. Սակալովսկի N20 գերեզման: Այդ գերեզմանից բերել էին ծաղիկի սերմերը, անեցրել իրենց բակում և խնդրել երեխաներին, որ այդ ծաղիկներից անեցնեն իրենց գերեզմանին:


1988թ. դեկտեմբերի 7-ին երկրաշարժի զոհ դարձան փոքր տղան՝ Վալերը և տղան՝ Տիգրանը, հորեղբորս աղջիկը լաուրան, որին շատ-շատ էինք սիրում ու պաշտում: Նա երկրաշարժից հետո մահացավ՝ տեսնելով այդքան վիշտ ու թախիծ: Եվ այս բոլորը մեկը մեկին հասնում է, հորս դրած դիրքը չենք մոռանում:



**Արմեն Սարգսյանի  
հիշատակի  
Ծառայում էր Արդանիշում  
պն 25036 գորանատում**

Գնացի՛ն հայ քաջերը գնացին,  
Մեզ կարոտով թողեցին,  
Սպասում ենք հետ դառնան,  
Որ կարոտով չմնանք  
Սպասում է քո մայրը,  
Նայում հեռու ճամփեքը  
Ձեռքը սրտին մոլորված,  
Խոսում, պատմում լացակումած,  
Ծանր է վիշտը  
Երազանքդ ջնջվեց հավիտյան,  
Քո մահվան լուռը ցնցեց բոլորին  
Քո սիրած աղջիկը ծաղիկ դրեց քո շիրմին

Անիծվի այդ օրը, որ դարձար գոհը,  
Քո դեմ ելավ քո մահը  
Անհայտ մի գնդակ  
Կյանքդ խեց իմ հոգյակ  
Մեր լավ ընկեր ունես հարգանք պատվոգիր  
Դու խանդավառ պատանի  
Ընկերներիդ, շրջապատիդ արժանի  
Տարիները գալիս անցնում ու գնում  
Դու լռել ես արյուն դարձել չես խոսում  
Մայրդ ջահել սես է հագել քեզ կանչում  
Գիշեր ցերեկ այն է քաշում ու հիշում  
Դու նվիրված հայրենիքիդ  
Սահմանապահ քաջ զինվոր




Չոհվել է  
մարտական  
առաջադրանք  
կատարելիս

## Նվիրում եմ Ռազմիկ Նազարյանին

Ծնողներդ Գետաշենից հիասքանչ  
Տուն տեղ թողել հեռացել  
Եկել, մորից տուն են դրել  
Անցած ցավը մոռացել  
Իսկ դու ուրախ մի պատանի  
Ընկերական մեծ սիրով  
Քո խոսքերը, կատակները  
Չեր վերջանում, չէր լռում  
Քեզ հետեւող անգութ մահը  
Հետեւում էր անդադար  
Ուր գնում էիր, քեզ հետեւում  
Ինչ էր ուզում տեր աստված  
Եվ մի օր էլ հրաման տվին  
Առաջադրանք կատարելու են գնում  
Առաջինը դու մոտեցար  
Քո ցանկությունը առաջ տարար  
Կարծեմ մահը քեզ էր կանչում  
Օրն էր եկել քեզ տանում  
Դու զոհվեցիր առաջադրանքը կատարելիս  
Հրաշք Ռազմիկ 20 տարիդ չլրացած

Քո տատիկը կանգնած մոլոր  
Հոր ու որդու դեմ դիմաց  
Հառաչում է որդի կանչում  
Նորից փարվում քո քարին

Իսկ եղբայրդ կարոտ քաշում  
Փնտրում է քեզ որ գտնի  
Ավաղ դու հեռացել ես  
Ու բոլորին մոռացել



Նվիրում են չարի զոհ  
դարձած, վաղամեռիկ  
Վահան Մինոնյանի  
անմար հիշատակին



Չորակոչվեցիր բանակ էիր գնում,  
Հայրենիքիդ ծառայության էիր գնում  
Տխուր էիր, նայում էիր շուրջդ  
Վերջին անգամ տվիր համբույրդ.  
Մինունար Վահան անհույս ու տխուր  
Նայեցիր մորդ արցունքներին՝  
Ու տխուր բաժանվեցիր  
Անցնում էին օրերը  
Երազներով ու կարոտով  
Քո գալուն սպասելով  
Մահվան լուրդ առաջ հասավ  
Ու անհայտ մնաց քո մահդ Վահան  
Այդքան բարի դարձար անդարձ  
Կյանքդ դարձավ տխուր հայացք  
Չյուն եկավ քո կանաչ արտին  
Չյունը եկավ սատեց ու մնաց  
Քար ու սար լացին, ու արցունք թափին  
Քո հիշատակին մոմեր վառեցին  
Քո տխուր կյանքը մենք չենք մոռոնա  
Սեր անդարձ որդի ու տխուր կյանքով



Դավիթ, Հովիկ, Ալիսա, Լուսինե



Դավիթ, Ֆրունգե, Արսյոն



Ռաֆիկ եւ Արտյոն Մացակյաններ



Վասիլ եւ Վիլյամ Մացակյաններ






Տատը՝ Մարգարիտ, քոռներով, հարսը՝ Աշխենը



Մացակյաններ  
Գոհար, Արմենուհի, Մարիամ



Աշոբցի դպրոց Մ. Նալբանդյանի անվան  
X դաս. դաստիկ Յողիկ Իգնատյան



Մացակյանների թոռնիկները





Ռաֆաել, Նաիրա

# ՄԱՑԱԿՅԱՆՆԵՐԻ ՏՈՂԱԾԱՆՈՒ

-  ՏՈՂԱՆ
-  ԱՎԵՏԻՔ
-  ԱՆՆՈՒՄԻԿ
-  ՍԱՆ
-  ՏՈՂԱՆ
-  ՏՈՂԱՆ
-  ԿԱՅԻՆ
-  ՍԱՆՅԱՆ
-  ԴԱՐՄԱՆ
-  ԱՅՏԱՆ
-  ՏՈՂԱՆ
-  ԿՈՆՏԱՆ
-  ԱՆՏԵՍՈՒՆ
-  ԿՈՏԱՆ
-  ԶԱՂՈՒՄԵՆ
-  ՅԱԿՈՒՆ
-  ԿԱՅԻՆ
-  ԱՄՆԵՆ
-  ԿՈՂԻԿ
-  ԳԵԿԿՈՂԳ
-  ԳՈՐԳԵՆ
-  ԿԱՅԻՆ
-  ՏՈՂԻ
-  ԳՈՐԳԵՆ
-  ԱՄՆԵՆ
-  ՍԱՆ





Նարինե





Հասնիկ տատիկը Հասնիկ թոռան հետ







## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից .....	7
<b>ԲԱՆԱՍԵՂՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	
Իմ պապերը.....	15
Իմ Հայաստան .....	16
Հայր իմ սիրելի .....	17
Հին մատուռ .....	18
Գարուն լինելը .....	19
Վարդավառ .....	20
Ծնունդս .....	21
Իմ մանկությունը .....	22
Իմ գյուղը .....	23
Երկրաշարժ .....	24
Երկրաշարժ .....	25
Դիմացե՛ք հայեր, 1989թ. ....	26
Սառը բներ .....	27
Գոհար անգին .....	28
Արարատի հիշատակին .....	29
Մայրս .....	30
Ճակատագիր երկրաշարժի զոհերին .....	31
Մորս հիշատակին .....	32
Դու գնում ես .....	33
Ծերություն .....	34
Ինչո՞ւ եմ գնում .....	35
Օտար ափերում .....	36
Սիրելի Սաթիկին ...	37
02 հաղորդաշարին .....	38
Փոքր Դավիթ ...	39
Իմ փոքրիկներ .....	40
Տղայիս .....	41
Ախ, երանի .....	42
Արտյունին .....	43
Մարիանային .....	44
Մանկություն .....	45
Սարիանա .....	46
Նարինե .....	47
Կարոտ .....	48
Անգութ մայր .....	49
Հրաշք աղջիկ .....	50
Իմ Դուկասյան .....	51
Իմ բույր Դոնարային .....	52
Հասնիկի ծննդյան օրը .....	53
Կարեն Դեմիրճյանի .....	54
Նվիրում եմ Կարո Հակոբյանին .....	55
Կարեն Դեմիրճյանին .....	56
Չմեռ է .....	57
Վերջին զանգը .....	58
Մայր իմ.....	59
Վա յ ինձ .....	60
Ներիր իմ բույրիկ .....	61
Սիրելի եղբայր .....	62
Մնաք բարով .....	63
Նամակ .....	64
Օտարություն .....	65
Կորցրած սեր .....	67
Իմ որդին .....	68

Աշուն .....	70
Նոր տարի ..	71
Բարի քույրիկ .....	72
Փափագ .....	73
Չնմ կարող .....	74
Թթևնու ծառ .....	75
Հայ ազգը բարի .....	76
Երագ .....	77
Մեծ ընտանիք .....	78
Երբ հեռանամ .....	80
Ուր էլ լինես .....	81
Տոհմածառ .....	82
Մայր է ուզում .....	83
Տունս ինչպես .....	84
Բարեգործ .....	85
Սի տրամիր, քույրիկ .....	86
Ուրախություն հարուստին .....	87
Հայի սիրտը .....	88
Դուրս բեր նավակդ .....	89
Նվիրում եմ .....	90
Չքնաղ Անին .....	91
Օտար քաղաք .....	92
Ես վագում եմ .....	93
Հայաստան .....	94
Նվիրում եմ եղբորս՝ Արտյոմին .....	95
Մանուշակ .....	96
Ծաղկած բալենի .....	98
Երագ .....	99
Ինչու համար... .....	100
Հարազատը ուրիշ է .....	101
Գտնեմ իմ բախտը .....	102
Հույսի լույսը .....	103
Սիրտս .....	104
Մոռացար մեզ .....	105
Իմ անուշիկ .....	106
Չար կին .....	107
Իմ սարեր .....	108
Ինչպե՞ս եղավ .....	109
Դու բարի մարդ .....	110
Չար հոգի .....	111
Իմ մասին .....	112
Կարոտ ունի .....	113
Մարդը .....	114
Կեղծ ընկեր .....	115
Լավ հարեան .....	116
Գարուն .....	117
Զգույշ եղիր .....	118
Կամեցիր .....	119
Արդյոք կգա .....	120

**ՊԱՏՄՎԱԾՆԵՐ**

Քանդված օջախ .....	123
Տատիս պատմածից .....	167

Հասնիկ Աացակյան


ԿՄՐՈՏ

(Բանաստեղծություններ և դատմվածքներ)

---

Գլխավոր խմբագիր Սոս Ազիզյան  
Մուտքագրող և սրբագրիչ Լարիսա Բոյաջյան  
Համակարգչային ձեւավորում Հարություն Աֆրիկյան





Համրոտ

Հասնիկ